

**ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՍՆԱՎՈՐ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՊԱՏՎԻՐԱԿՄԱՆ**

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

Բովանդակություն

Ներածություն

Մույն մեթոդական ցուցումներում ներկայացված են համայնքների և մասնավոր հատվածի միջև համագործակցության որոշ մոդելներ, որոնք կարող են շահավետ լինել երկու կողմերի համար: Ներկայացված մոդելները վերաբերվում են համայնքների աշխատակազմերի ու համայնքային կազմակերպությունների կողմից համայնքի բնակիչներին և այլ շահառուներին տրամադրվող այն ծառայություններին, որոնք համայնքները կարող են արդյունավետ կերպով պատվիրակել մասնավոր ընկերություններին:

Գոյություն ունեցող մոդելները բազմաթիվ են, սակայն ուղեցույցում նշված են հիմնականները և առավել կիրառելիները: Դիտարկվել են նաև համայնքների և համայնքային կազմակերպությունների կողմից, պատվիրակման ենթակա, ամենաշատ մատուցվող ծառայությունները: Այստեղից չի բխում, որ նկարագրված ծառայությունները պարտադիր պետք է պատվիրակվեն կամ պատվիրակվեն առաջարկված մոդելով: Նմանապես, պետք չէ ենթադրել, որ ներառված են բացարձակապես բոլոր ծառայությունները: Ելնելով հնարավորությունների շրջանակից, համայնքից համայնք տրամադրվող ծառայությունները տարբեր են: Հետևաբար, համայնքներն ազատ են որոշելու ինչ ծառայություններ են տրամադրում, որոնք է հնարավոր պատվիրակել, ինչ մոդելով:

1. Համայնք – մասնավոր հատված համագործակցություն

Համայնքները, համայնքային կազմակերպությունների և համայնքապետարանների աշխատակազմերի միջոցով, բնակչությանը տրամադրում են բազմաթիվ ծառայություններ՝ աղբահանություն, սանիտարական մաքրում, համայնքի տարածքի կանաչապատում, համայնքի բարեկարգում, ճանապարհների կառուցում և շահագործում, ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպում, համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենների տրամադրում և այլն:

Համայնքներն ունեն լիազորություններ համայնքային ծառայությունների տրամադրումը պատվիրակելու մասնավոր կազմակերպություններին: Այս դեպքում, հնարավորություն է առաջանում ներգրավել մասնավոր հատվածի փորձառությունն ու ֆինանսական միջոցները՝ բարելավելով մատուցվող ծառայությունների որակը, ծախսարդյունավետությունը, ինչպես նաև, որոշ դեպքերում, ապահովել մատուցվող ծառայությունների ֆինանսավորման խնդիրները, պահպանելով համայնքի ներկայությունը որպես կարգավորող կողմ: Այս առումով, համայնք – մասնավոր հատված գործընկերության (ՀՄԳ) նկատմամբ կիրառելի են նույն մոտեցումներն ինչ պետություն-մասնավոր հատված գործընկերության (ՊՄԳ) այն տարբերությամբ, որ որպես գործընկերության կողմ հանդես է գալիս ոչ թե պետությունն այլ համայնքը: Իհարկե, իմաստ ունի խոսել ոչ թե բոլոր այլ միայն որոշ ծառայությունների մասին:

Պետություն-մասնավոր գործընկերությունն արդեն մի քանի տասնամյակ մեծ կիրառություն ունի ողջ աշխարհում և թույլ է տալիս ակտիվորեն ներգրավել մասնավոր կապիտալը՝ հիմնականում ենթակառուցվածքային բնույթի և համայնքային նշանակության ծրագրերում: Կան մեծ թվով միջազգային ներդրումային ֆոնդեր և կառավարման նորագույն մեթոդներն օգտագործող կազմակերպություններ, որոնք մասնագիտանում են, համապատասխանաբար ՊՄԳ/ՀՄԳ ծրագրերի ֆինանսավորման/համաֆինանսավորման և կառավարման մեջ:

ՀՄԳ-ն «երկկողմանի երթևեկության փողոց է», որտեղ կոնկրետ համատեղ ծրագիր իրականացնելու նախաձեռնությունը կարող է պատկանել ինչպես համայնքին, այնպես էլ՝ բիզնեսին՝ ապահովելով թե՛ համայնքի, թե՛ բիզնեսի շահերը: Միաժամանակ, պետք է հստակորեն հասկանալ ՀՄԳ ծրագրերի տարբերությունը սովորական բիզնես նախագծերից: ՀՄԳ ծրագրերը պետք է լուծեն սոցիալական և ենթակառուցվածքային խնդիրներ՝ ապահովելով երկարաժամկետ զարգացման նոր հնարավորություններ՝ հասարակության և տնտեսության մեծ շերտերի համար: ՀՄԳ

հասկացության ընկալումն իսպառ պետք է գերծ լինի նաև մյուս ծայրահեղությունից՝ չդիտվի որպես անհատույց և բարեգործական երևույթ:

Մասնավոր կապիտալը, դեռևս ներդրումներ կատարելուց առաջ, միշտ դնում է եկամտաբերության, ներդրումների վերադարձի ժամկետների, ռիսկերի և երաշխիքների խնդիրները: Եթե այս հարցերի հստակ և հաստատուն պատասխանը մասնավորը չունի՝ ապա ներդրումը չի կայանա: Համայնքը, հաճախ սահմանափակված լինելով ֆինանսական և կազմակերպչական ռեսուրսների սղությամբ, միաժամանակ ունի բավականաչափ ենթակառուցվածքային ու երաշխիքային ռեսուրս, ինչպես նաև հոսքեր, որոնք ունեն կամ հնարավոր շահութաբերության, կամ՝ արդեն առկա շահութաբերության մեծացման և/կամ պահպանման պոտենցիալ՝ անհրաժեշտ ներդրումների կամ մոտեցումների դեպքում:

Այս ռեսուրսների և պոտենցիալի նյութականացմանը մասնավորին ներգրավելով՝ համայնքը լուծում է մի շարք զարգացման խնդիրներ՝ շահելով և՛ ժամանակի մեջ, և՛ ֆինանսապես, և՛ կազմակերպչական առումով:

Ցանկացած ՀՄԳ հիմքը՝ կոնկրետ բիզնես ծրագիրն է: Այստեղ արդեն առկա են ողջ ծախսերի և եկամուտների չափանիշները, կողմերի իրավունքները, պարտականություններն ու պարտավորությունները, ժամկետներն ու երաշխիքային փաթեթները: Այս առումով այն ոչնչով չի տարբերվում գուտ կոմերցիոն բնույթի բիզնես պլանից, այսինքն՝ այն պետք է լինի արդյունավետ ծրագրում ընդգրկված բոլոր կողմերի համար: Քանի որ այս բիզնես ծրագրի հիմնական պատվիրատուն համայնքն է, այն պետք է արմատապես լուծի այն խնդիրը, ինչի համար սկսվել է այդ ծրագիրը: Այս առումով՝ համայնքը գտնվում է պատվիրատուի, երաշխավորողի, կարգավորողի և վերահսկողի դերում: Այսպիսով, երկու կողմերի համար էլ, ՀՄԳ ծրագրի հիմնաքարն արդյունավետությունն է: Եվ եթե մասնավորի համար հիմնական շեշտադրումը ֆինանսական բաղադրիչն է, ապա համայնքի համար՝ և՛ տնտեսական համակարգային զարգացումը, և՛ բնակչությանը տրամադրվող ծառայությունների որակի բարձրացումը, և՛ ֆինանսական արդյունավետությունը:

Սույն Մեթոդական առաջարկությունների հավելվածում ներկայացված են համայնքների և համայնքնային կազմակերպությունների կողմից մատուցված այն ծառայությունները և համայնքի պարտադիր խնդիրների կատարումը, որոնք կարող են պատվիրակվել մասնավոր հատվածի ընկերություններին: Ցանկն ունի գուտ խորհրդատվական նշանակություն և չի կարող դիտվել, որպես ծառայությունների պատվիրակման հրահանգ: Ցանկում ընդգրկված ծառայությունների ցանկը սպառիչ չէ:

2. Համայնք-մասնավոր հատված գործընկերության հիմնական տարբերակները

Հայտնի են ՀՄԳ բազմաթիվ տարբերակներ սկսած պարզ հավատարմագրային կառավարման պայմանագրերից մինչև համայնքային գույքի մասնավորեցում կամ համատեղ ձեռնարկության ստեղծում (տե՛ս ՀՀ կառավարության 2009 թ. հունվարի 29-ի նիստի թիվ 4 արձանագրային որոշումով հաստատված Հայաստանի Հանրապետությունում պետություն-մասնավոր հատվածների համագործակցության Հայեցակարգը): Գործընկերության տեսակն ընտրելիս, թերևս, ամենակարևոր հարցերը, որոնց պետք է անդրադառնալ ծառայություն մատուցելու համար անհրաժեշտ գույքի և ենթակառուցվածքի սեփականության (ծառայություն մատուցելու ընթացքում և դրանից հետո) և ծառայությունների մատուցման ծախսաձեռնարկման և ֆինանսական ներդրումների խնդիրներն են:

2.1. Կառավարման պայմանագրեր

Գործընկերության համեմատաբար պարզ դեպքերում համայնքը պահպանում է ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների նկատմամբ սեփականության իրավունքը: Ամենապարզ տարբերակը կառավարման պայմանագրերն են, երբ համայնքը պայմանագիր է կնքում մասնավոր ընկերության հետ, որպեսզի վերջինս համայնքի անունից և համայնքի գույքով ծառայություններ մատուցի համայնքի բնակիչներին և

ծառայությունների շահառուներին: Նման տիպի գործընկերությունն առավել նպատակահարմար է այն ծառայությունների պարագայում, որտեղ ծառայության մատուցման համար գանձվող վճարը բավարար չի ծախսածածկում ծառայության տրամադրման հետ կապված ծախսերը, կամ էլ ծառայության համար վճար չի գանձվում: Կառավարման պայմանագրերը, որպես կանոն, ունենում են համեմատաբար կարճ ժամկետ: Պայմանագրով նախատեսված ժամկետի ավարտից հետո մասնավոր գործընկերը համայնքին է վերադարձնում իրեն տրամադրված գույքը կամ ենթակառուցվածքը, որին նա տիրապետել էր պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման համար: Այս տիպի գործընկերությամբ համայնքն ակնկալում է, որ իր կողմից մատուցվող ծառայությունը մասնավոր ընկերությունը կտրամադրի ավելի բարձր որակով, կամ ավելի էժան, կամ երկուսը միասին: Մասնավոր ընկերությունը, մատուցած ծառայության դիմաց, համայնքից համապատասխան վճար է ստանում: Մասնավորապես, համայնքը կարող է կառավարման պայմանագիր կնքել որևէ մասնավոր ընկերության հետ, որպեսզի վերջինս շահագործի համայնքի տարածքում գործող գերեզմանատունը կամ ապահովի համայնքի կանաչապատումը կամ իրականացնի աղբահանությունը՝ պահպանելով տարածքի և գույքի նկատմամբ սեփականության իրավունքը:

Կառավարման պայմանագրի տիպային օրինակը ներկայացված է սույն մեթոդական առաջարկությունների հավելված 2-ում:

2.2. Վարձակալական (լիզինգային) պայմանագրեր

Պարզ կառավարման պայմանագրից մի քիչ ավել խորացված մոտեցում է համայնքին ծառայություններ մատուցելու համար համայնքային գույքի վարձակալությունը՝ լիզինգը: Վարձակալական փոխհարաբերությունները մասնավոր հատվածի ընկերությունների հետ կարող են երկու տեսակի լինել՝ ա) լիզինգային պայմանագիրը, երբ վարձակալը, լիզինգային պայմանագրի ավարտից հետո, ստանում է գույքի նկատմամբ սեփականության իրավունք և բ) վարձակալական պայմանագիր, երբ վարձակալը, վարձակալական պայմանագրի ժամկետի ավարտից հետո ողջ գույքը փոխանցում է համայնքին: Վարձակալական կամ լիզինգային պայմանագիրը վարձակալի կողմից ներդրումային պարտավորություններ չի ենթադրում: Այս տիպի գործընկերության պարագայում մասնավոր ընկերությունը վարձակալում է համայնքին պատկանող գույքը կամ ենթակառուցվածքը և դրանով համայնքին ծառայություն է մատուցում: Լիզինգային պայմանագրով աշխատելու դեպքում մասնավոր ընկերությունը ծառայության շահառուներից որոշակի վճար է ստանում, որի մի մասը, որպես գույքի դիմաց վարձ, վճարում է համայնքին: Մասնավոր ընկերության համար այս մոդելի կիրառումը շահեկան է, երբ հավաքված վճարը գերազանցում է վճարված վարձը: Համայնքի համար այս մոդելի կիրառումը նպատակահարմար է, երբ խնդիր կա բարելավելու տրամադրվող ծառայությունների որակը, բարելավելու կառավարման մակարդակը և երբ վարձակալության վճարն ավելի մեծ է քան վարձակալման տրվող գույքից ու ենթակառուցվածքից ստացվող եկամուտը: Ի դեպ, պետք է առանձնահատուկ շեշտվի, որ վարձակալը չի կարող փոփոխել վարձակալվող գույքի նպատակային նշանակությունը, օրինակ՝ մանկապարտեզի փոխարեն մանկապարտեզի շենքում խաղատուն բացելով: Աղբահանության կազմակերպման օրինակով, մասնավոր ընկերությունը կարող է վարձակալել համայնքի գույքը՝ մեքենաներ, աղբամաններ և աղբահանություն կազմակերպել, ինքնուրույն հավաքելով աղբահանության վճարները:

Վարձակալական և լիզինգային պայմանագրերի տիպային օրինակները ներկայացված են սույն մեթոդական առաջարկությունների համապատասխանաբար 3-րդ և 4-րդ հավելվածներում:

2.3. Կոնցեսիոն պայմանագրեր

Սակայն, գործընկերության, թերևս, ամենատարածված մոդելը կոնցեսիոն կառավարումն է: Կոնցեսիոն պայմանագրով համայնքի մասնավոր գործընկերը (կոնցեսիոները) իրավունք է ստանում երկարաժամկետ կտրվածքով տնօրինելու համայնքի սեփականություն հանդիսացող գույքը՝ տրամադրելու համայնքային ծառայություններ, որոնք նշված են կոնցեսիոն պայմանագրում:

Գույքը տնօրինելու իրավունքի դիմաց մասնավորը կոնցեսիոն վճար է վճարում գույքի սեփականատեր համայնքին: Պայմանագրային պարտավորությունները մասնավոր ընկերությունը կատարում է սեփական միջոցների հաշվին՝ կատարելով բնականոն գործունեության և բարձրորակ ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ներդրումները, օրինակ՝ սարքավորումների ձեռքբերման կամ ենթակառուցվածքի կառուցման համար: Մասնավոր ընկերությունը, կոնցեսիոն պայմանագրի ավարտին, համայնքին է վերադարձնում համայնքային գույքը (ներառյալ նոր ձեռք բերված գույքը կամ կառուցված ենթակառուցվածքը): Մասնավորի շահը կայանում է նրանում, որ համայնքային գույքով (որի մի մասը ստեղծվում կամ բարելավվում է սեփական) համայնքային ծառայություններ մատուցելով նա իր համար շահույթ է ապահովում: Համայնքի համար կոնցեսիոն պայմանագիրը շահեկան է, քանի որ ենթադրվում է, որ մասնավորը հիմնական ակտիվների (գույք և ենթակառուցվածք) և կառավարման որակի ան կապահովի:

Կառավարման պայմանագրի տիպային օրինակը ներկայացված է սույն մեթոդական առաջարկությունների հավելված 5-ում:

2.4. Ներդրումներ ենթադրող գործընկերություն

Մինչ այժմ դիտարկված մոդելներում համայնքային ծառայությունները մասնավորին պատվիրակելիս համայնքը տրամադրում էր սեփական գույքը: Սակայն, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված համայնքի պարտադիր խնդիրները լուծելու կամ «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցվող ծառայությունների համար կարող է անհրաժեշտություն լինել նոր ենթակառուցվածքային օբյեկտ կառուցել: Այս դեպքերում համայնք-մասնավոր հատված համագործակցության առանցքային խնդիրներ են դառնում նոր օբյեկտի կառուցման ֆինանսավորումը, տնօրինումը և օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքը ծառայության մատուցման ընթացքում և դրանից հետո: Օրինակ՝ համայնքն, իր պարտադիր խնդիրների լուծման կամ այլ շրջանակներում, կարող է մասնավորին պատվիրել կառուցել մանկապարտեզի շենք, համայնքային այգի կամ ավտոկայանատեղի: Մասնավորն, իր ֆինանսներով կամ համայնքային համաֆինանսավորմամբ, կարող է կառուցել անհրաժեշտ ենթակառուցվածքը և այն օգտագործել համապատասխան ծառայություններ մատուցելու համար: Պայմանագրով նախատեսված ժամանակահատվածից հետո կառուցված օբյեկտի սեփականության իրավունքը կամ փոխանցվում է համայնքին կամ մասնավորին: Կառուցելուց բացի, մասնավորը կարող է նաև նախագծել ենթակառուցվածքային օբյեկտը: Պայմանականորեն, այս տիպի գործընկերությունները կոչվեն «ներդրումային ՀՄԳ-ներ»:

Նախորդ պարբերությունում նկարագրված գործընկերային հարաբերությունները տիպիկ են շահութաբերության բավարար պոտենցիալ ունեցող նախագծերի համար, օրինակ՝ ավտոկայանատեղերի կառուցումը կամ կենտրոնական ջեռուցման մատակարարումը:

Նման համագործակցությամբ մասնավոր ընկերությունը կարողանում է բավարար շահույթ ապահովել, իսկ համայնքը լուծում է ֆինանսավորման ու կազմակերպչական խնդիրները:

Պայմանագրի ավարտից հետո գույքի սեփականության փոխանցումը մասնավորին կամ սեփականության իրավունքի պահպանումը կարգավորող պայմանագրերի տիպային օրինակները ներկայացված են սույն մեթոդական առաջարկությունների համապատասխանաբար 6-րդ և 7-րդ գլուխներում:

3. ՀՄԳ ծրագրերի իրականացման պարտադիր պահանջները

ՀՄԳ հաջողության համար պետք է բավարարվեն ստորև բերված պահանջները.

1) Մասնավոր ընկերությունները պետք է ներգրավվեն համաձայն «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների: Առավել մեծ պայմանագրերի համար ցանկալի է օգտագործել բաց ընթացակարգը (օրինակ՝ կոնցեսիոն կամ ներդրումային պայմանագրեր):

- 2) Տեխնիկական հանձնարարականում պետք է հնարավորինս մանրամասն ներկայացվեն ՀՄ գործընկերությամբ ակնկալվող որակական և քանակական (ներառյալ ֆինանսական) արդյունքները, արդյունքների գնահատման չափանիշները:
- 3) Բոլոր ՀՄԳ ծրագրերի համար պետք է կազմվի մանրամասն և համակողմանի բիզնես պլան, որտեղ մասնավոր կողմը պետք է ներկայացնի իր մոտեցումները ծրագրի իրականացման նկատմամբ, պահանջվող ներդրումները, դրանց իրականացման ժամանակացույցը: Անհրաժեշտ է ինքնուրույն, մասնավորի տեսանկյունից, վերլուծել այն բոլոր հանգամանքները, թե մասնավոր կողմն ինչ մեթոդներով և ֆինանսական բաղադրիչներով է հասնելու ՊՄԳ ծրագրի կողմից իրականացվելիք ծրագրի սահմաններում իրականացվելիք ծառայությունների գծով՝ համայնքի ծախսերի կրճատմանը և ծառայությունների որակի բարձրացմանը: Եթե այս ամենը համոզիչ չէ և հաշվարկները չեն համապատասխանում իրականությանը, ապա մասնավորը, հավանաբար, պատրաստվում է իր ծախսածածկումը կատարել որակի նվազեցման հաշվին:
- 4) ՀՄԳ իրականացման պայմանագրի մեջ պետք է ամենայն մանրամասնությամբ ամրագրվեն կողմերի իրավունքներն ու պարտավորությունները: Հստակ պետք է նշվի, որ համայնքը հանդիսանում է պատվիրատու, երաշխավորող, կարգավորող և վերահսկող կողմ:
- 5) Որևէ ՀՄԳ ծրագիր չի կարող համայնքի համար ֆինանսապես ավելի անբարենպաստ լինել, քան եթե ծառայությունները մատուցվեին համայնքի կամ համայնքային կազմակերպության միջոցով:
- 6) Համայնքի բնակիչներից որևէ ծառայության դիմաց զանձվող վճարները կարող են բարձրացվել միայն ծառայության որակի բարձրացումից հետո: Ուստի, հստակ պետք է նշվեն այն չափորոշիչները, որոնցով գնահատվելու է մատուցվող ծառայության որակը: Մասնավորին ծառայությունը պատվիրակելուց հետո ծառայության սպառողի համար հարաբերությունը պետք է ավելի բարձր լինի քան նախքան պատվիրակումը:
- 7) Կողմերի միջև կնքվող պայմանագիրը պետք է հստակ սահմանի պայմանագրի դադարեցման և կրած ծախսերի փոխհատուցման պահանջ ներկայացնելու հիմքերը:
- 8) ՀՄԳ կողմերը պայմանագիրը ստորագրելիս ստորագրում են նաև հակակոռուպցիոն և շահերի բախումը բացառող հավաստագրեր: Հավաստագրի որևէ դրույթի խախտումը կարող է հիմք հանդիսանալ պայմանագրի լուծման և վնասի փոխհատուցման պահանջ ներկայացնելու համար:

Հավելված 1. Պատվիրակման ենթակա ծառայություններ և ՀՄԳ կիրառելի տարբերակներ

Աղյուսակ 1. Պատվիրակման ենթակա ծառայություններ և ՀՄԳ կիրառելի տարբերակներ

Ծառայություն	Կառավարման պայմանագիր	Վարձակալության պայմանագիր (լիզինգ)	Կոնցեսիոն պայմանագիր	Ներդրումային պայմանագիր
Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմանների մշակում	X			
Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստում	X			
Համայնքի տարածքում աղբահանության կազմակերպում	X	X	X	
Համայնքի տարածքում սանիտարական մաքրման կազմակերպում	X	X	X	
Համայնքի իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքում և փոխադրում	X	X	X	
Համայնքում աղբավայրի շահագործում (կառուցում *)	X	X	X	X*
Համայնքում կենտրոնացված ջեռուցման մատակարարում	X	X	X	X
Համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի ապահովում	X	X		
Համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակառուցվածքային թանգարանների կառավարում	X	X	X	
Համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղիի կառավարում կամ կազմակերպում	X	X	X	
Նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության կազմակերպում	X	X	X	X
Համայնքի մշակութային կյանքի կազմակերպում	X	X	X	X
Համայնքում մարզական կյանքի կազմակերպում, ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսում	X	X	X	X
Համայնքում բնակարանային շինարարության խթանում				X
Համայնքի բնակավայրերի կառուցապատում և բարեկարգում	X	X		

Համայնքի բնակավայրերի կանաչապատում	X	X	X	X
Համայնքային գերեզմանատների պահպանում և գործունեության ապահովում	X			
Համայնքի հասարակական տրանսպորտի աշխատանքի կազմակերպում	X	X	X	X
Համայնքային ճանապարհային ենթակառուցվածքների պահպանում և շահագործում	X	X	X	
Համայնքներում զբոսաշրջության զարգացման խթանում	X	X	X	X
Համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ սահմանված հանրային հանգստի վայրերի կառավարում	X	X	X	X

Հավելված 2. Գույքի կառավարման պայմանագիր

ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ք. _____

_____ Թ.

_____ /համայնքի անվանումը/ /այսուհետև՝ Պատվիրատու կամ Համայնք/, ի դեմս՝ _____, որը գործում է _____ հիման վրա, մի կողմից, և _____, /այսուհետև՝ Կառավարիչ/, ի դեմս՝ _____, որը գործում է _____ հիման վրա, մյուս կողմից, /այսուհետև՝ Կողմեր/, կնքեցին սույն պայմանագիրը /այսուհետև՝ Պայմանագիր/ հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով, Պատվիրատուն պարտավորվում է, Կառավարչի ժամանակավոր տիրապետմանը, օգտագործմանը և կառավարմանը /այսուհետև՝ Կառավարում/ հանձնել՝ Պայմանագրի 1.2 կետում նշված գույքը և վճարել Կառավարչի ծառայության դիմաց՝ պայմանով, որ Կառավարիչը, իր կառավարման տակ գտնվող գույքի միջոցով, Համայնքին կմատուցի գույքի նշանակությանը վերաբերվող ծառայություն, իսկ Պայմանագրի ավարտից հետո՝ Պատվիրատուին կվերադարձնի գույքը – ըստ Պայմանագում նշված պայմանների :

1.2. Պատվիրատուն պարտավորվում է Կառավարչին հանձնել _____ /գույքի լրիվ անվանումը և մանրամասն նկարագրությունը/, /այսուհետև՝ Գույք/:

1.3. Գույքը պատկանում է Պատվիրատուին սեփականության իրավունքով, ինչը հաստատվում է _____ /սեփականությունը հաստատող փաստաթղթի անվանումը և մանրամասն տվյալները/:

1.4. Գույքը Կառավարչին պետք է հանձնվի՝ Պայմանագիրն ստորագրելու պահից _____ օրվա ընթացքում:

1.5. Գույքը նախատեսվում է _____ օգտագործել որպես _____ /օգտագործման նշանակության անվանումը և մանրամասն նկարագրությունը/, իսկ Գույքի օգտագործման ընթացքում և դրա օգտագործման միջոցով՝ Կառավարիչը պարտավորվում է _____ իրեն պատվիրակված _____ /ծառայության անվանումը և մանրամասն նկարագրությունը/ ծառայությունը մատուցել Համայնքի տարածքում:

1.6. Պատվիրատուն երաշխավորում է, որ Պայմանագրի 1.2 կետում նշված Գույքը վաճառված, գրավ դրված, վարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ, դատական վեճի առարկա չէ, արգելանքի տակ չի գտնվում:

1.7. Կառավարման հանձնված Գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի՝ չի կարող հիմք հանդիսանալ Կողմի համար՝ Պայմանագիրը լուծելու կամ այն փոփոխելու համար:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1. Կառավարչից պահանջել՝ Գույքն օգտագործել Պայմանագրի պայմաններին համապատասխան.

2.1.2. Պահանջել լուծելու Պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե Կառավարիչը կառավարում է Գույքը, կամ Գույքից օգտվում է Պայմանագրի պայմաններին կամ Գույքի նշանակությանն անհամապատասխան.

2.1.3. Կառավարչից պահանջելու՝ խնամքով վերաբերվելու Գույքի նկատմամբ.

2.1.4. Եռամսյակը մեկ՝ իրականացնելու Գույքի վիճակի ստուգման մոնիթորինգներ.

2.2. Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1. Գույքը Կառավարչին տրամադրել՝ Պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում.

2.2.2. Գույքը Կառավարչին հանձնել բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով /տեխնիկական անձնագիր, որակի հավաստագիր և այլն/.

2.2.3. Անհրաժեշտության առաջացման դեպքում՝ Գույքը կառավարման հանձնելուց առաջ, կամ՝ Գույքի կառավարման ժամանակահատվածի առաջին կեսի ընթացքում՝ իր հաշվին կատարել Գույքի հիմնական և/կամ ընթացիկ վերանորոգումը, եթե պարզվի, որ Գույքի վերանորոգման անհրաժեշտությունն առաջացրած պատճառները ծագել են դեռևս Գույքը կառավարման հանձնելուց առաջ.

2.2.4. Կառավարչին նախագրուչացնել Գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավի իրավունք, սերվիտուտ և այլն) մասին.

2.2.5. Կառավարչի պահանջի դեպքում, մասնավորապես՝ 2.2.3 կետով նախատեսված դեպքում, անհատույց վերացնել Գույքի թերությունները, կամ՝ ավելացնել կառավարման վճարը:

2.3. Կառավարիչն իրավունք ունի՝

2.3.1. Պահանջել Պատվիրատուից՝ Պայմանագրի 1.4 կետով սահմանված ժամկետում իրեն տրամադրել Գույքը.

2.3.2. Պատվիրատուից պահանջել՝ իրեն տրամադրելու Գույքի պատկանելիքներն ու դրան վերաբերող փաստաթղթերը.

2.3.3. Գույքի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելիս, իր ընտրությամբ՝

2.3.3.1. Պատվիրատուից պահանջել՝ անհատույց վերացնելու Գույքի թերությունները կամ համաչափ բարձրացնել կառավարման վճարը, կամ հատուցելու Գույքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը.

2.3.3.2. Պահանջել՝ վաղաժամկետ լուծելու Պայմանագիրը և փոխհատուցել վնասները.

2.3.4. Պահանջել՝ ավելացնելու կառավարման վճարի չափը, եթե հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում, Գույքի վիճակը վատթարացել է.

2.3.5. Պատվիրատուի կողմից Պայմանագրի 2.2.3 կետում նշված պարտականությունը չկատարելու դեպքում՝

2.3.5.1. Կատարել Պայմանագրով նախատեսված կամ անհետաձգելի անհրաժեշտությամբ ծագած հիմնական վերանորոգումը և Պատվիրատուից պահանջել վերանորոգման արժեքը կամ դա հաշվարկել կառավարման վճարի հաշվին.

2.3.5.2. Պահանջել՝ համապատասխան չափով ավելացնելու կառավարման վճարը.

2.3.5.3. Պահանջել՝ լուծելու Պայմանագիրը և հատուցելու վնասները.

2.3.6. Պատվիրատուի կողմից՝ կառավարման վճարը վճարելու ժամկետների խախտման դեպքում՝ նրանից պահանջել մուծելու կառավարման վճարը.

2.4. Կառավարիչը պարտավոր է՝

2.4.1. Գույքը պահպանել պատշաճ վիճակում, իր հաշվին կատարել դրա ընթացիկ վերանորոգումը և կրել Գույքը պահպանելու համար անհրաժեշտ ծախսերը.

2.4.2. Պայմանագրի գործունեության ընթացքում, Համայնքին տրամադրելի իրեն պատվիրակված ծառայությունը՝ որակյալ կերպով, Պայմանագրում նախատեսված պայմաններով:

2.4.3. Պայմանագրի վաղաժամկետ լուծման կամ դադարման դեպքում՝ Պատվիրատուին վերադարձնել Գույքն իր կողմից ստացված վիճակում՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:

3. Գույքի կառավարման դիմաց կատարվող վճարները

3.1. Գույքի կառավարման դիմաց վճարվող գումարը /վճարը/ կազմում է _____ /_____/ դրամ, ունի հաստատուն բնույթ և վճարվում է Կառավարչին՝ Պատվիրատուի կողմից:

3.2. Պատվիրատուն կառավարման վճարը մուծում է _____ /հաճախականությունը/ հաջորդող ամսվա _____ - ից ոչ ուշ:

3.3. Կառավարիչը, Պայմանագրի շրջանակներում, չունի եկամտի այլ աղբյուր՝ Կառավարման վճարից բացի, քանզի Պատվիրակվող ծառայության տրամադրման դիմաց՝ Համայնքի անդամներից գանձվող վճարը հավաքվում է Պատվիրատուի կողմից, առանց Կառավարչի մասնակցության և առանց վերջինիս տեղեկացնելու:

4. Պատվիրակվող ծառայությունը

Համայնքի կողմից՝ Կառավարչին պատվիրակվող ծառայություն է հանդիսանում՝

_____/ծառայության անվանումը և մանրամասն նկարագրություն/.

5. Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման իրավական հետևանքները

5.1. Պայմանագրի վաղաժամկետ դադարեցումը, անկախ այն հանգամանքից, թե Կողմերից ում նախաձեռնությամբ և/կամ ինչ այլ պատճառներով է դա տեղի ունեցել, իրավունք է տալիս Կողմերին՝ ստանալու նյութական փոխհատուցում:

5.2. Պատվիրատուն իրավունք ունի հաշվարկելու՝ Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հետևանքով իր չստացած եկամուտների, իրեն չմատուցված ծառայությունների, ինչպես նաև՝ կառավարման հանձնված և իր տիրապետմանը վերադարձած Գույքի հատկանիշների վատացման հետ կապված նյութական կորուստները:

5.3. Կառավարիչն իրավունք ունի հաշվարկելու՝ Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հետևանքով իր չստացած եկամուտների, իր կողմից կատարված վճարումների և ծախսերի հետ կապված նյութական կորուստները:

5.4. Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հետ կապված նյութական և իրավական բնույթի հարցերը լուծվում են Պայմանագրի՝ 6-րդ, 8-րդ և 10-րդ Գլուխներով նախատեսված կարգով:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կառավարման վճարն ուշացնելու համար Պատվիրատուն Կառավարչին վճարում է տույժ՝ Պայմանագրի գումարի _____ տոկոսի չափով, որը սահմանվում է որպես կետանցի յուրաքանչյուր օրվա համար՝ Պայմանագրի գումարի _____ տոկոսի չափով հաշվարկվող գումար:

6.2. Տույժի վճարումը կողմերին չի ազատում նրանց վրա դրված պարտականությունները կատարելուց:

6.3. Պատվիրատուն պատասխանատվություն չի կրում Գույքի այն թերությունների համար, որոնք նա նշել է Պայմանագիրը կնքելիս, կամ որոնք նախապես հայտնի են եղել Կառավարչին կամ պետք է Կառավարչի կողմից հայտնաբերվեին Գույքը զննելիս կամ Գույքը կառավարման ստանալիս:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Գույքի կառավարման ժամկետն սկսվում է _____-ից և ավարտվում է _____-ին:

8. Կառավարվող Գույքի բարելավումները

8.1. Կառավարվող Գույքի վրա՝ Կառավարչի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:

8.2. Եթե Կառավարչին իր միջոցների հաշվին և Պատվիրատուի համաձայնությամբ կատարել է կառավարվող Գույքից անբաժանելի բարելավումներ՝ առանց Գույքին վնաս պատճառելու, ապա Պայմանագիրը դադարելուց հետո Կառավարչին իրավունք ունի հատուցում ստանալ այդ բարելավումների արժեքի չափով:

8.3. Կառավարչի կողմից, առանց Պատվիրատուի համաձայնության կատարած, կառավարվող Գույքից անբաժանելի բարելավումների արժեքը չի հատուցվում:

8.4. Կառավարվող Գույքի ամորտիզացիոն միջոցների հաշվին կատարած՝ ինչպես բաժանելի, այնպես էլ անբաժանելի բարելավումները համարվում են Պատվիրատուի սեփականությունը:

9. Պայմանագրի վաղաժամկետ լուծումը

9.1. Պատվիրատուի պահանջով՝ Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել, եթե Կառավարիչը՝

9.1.1. Պատշաճ կերպով չի իրականացրել իրեն Պատվիրակված ծառայության մատուցումը Համանյքին.

9.1.2. Գույքը կառավարել է Պայմանագրի պայմանների կամ Գույքի նշանակության էական կամ բազմակի խախտումներով.

9.1.3. Էականորեն վատթարացրել է Գույքի վիճակը.

9.2. Կառավարչի պահանջով՝ Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծարվել, եթե՝

9.2.1. Պատվիրատուն՝ Կառավարչի կառավարմանը չի տրամադրել Գույքը կամ խոչընդոտներ է ստեղծել Գույքը Պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու/կառավարելու համար:

9.2.2. Կառավարչին հանձնված Գույքն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ, որոնց մասին Պատվիրատուն չի նշել Պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել Կառավարչին և վերջինս չէր կարող հայտնաբերել Պայմանագիրը կնքելիս:

10. Վեճերի լուծման կարգը

Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը տեղի է ունենում ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

11. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը,

պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Այդ դեպքում, Պայմանագրի Կողմը, որն իրավիճակը գնահատում է որպես անհաղթահարելի ուժի առաջացում՝ պարտավոր է, դրա առաջացման օրվանից սկսած՝ 3 /երեք/ օրվա ընթացքում, զգուշացնել այդ մասին՝ Պայմանագրի մյուս Կողմին: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, սպա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

12. Եզրափակիչ դրույթներ

12.1. Պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի կողմից: Պայմանագրին կից հավելվածները դրա անբաժանելի մասն են:

12.2. Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

13. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու

Կառավարիչ

Հավելված 3. Գույքի վարձակալության պայմանագիր

ԳՈՒՅՔԻ ՎԱՐՉԱԿԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Բ. _____ Թ. _____

_____ /համայնքի անվանումը/ /այսուհետև՝ Վարձատու կամ Համայնք/, ի դեմս՝ _____, որը գործում է _____ հիման վրա, մի կողմից, և _____, /այսուհետև՝ Վարձակալ/, ի դեմս՝ _____, որը գործում է _____ հիման վրա, մյուս կողմից, /այսուհետև՝ Կողմեր/, կնքեցին սույն պայմանագիրը /այսուհետև՝ Պայմանագիր/ հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով, Վարձատուն պարտավորվում է, վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել՝ Պայմանագրի 1.2 կետում նշված գույքը՝ պայմանով, որ Վարձակալը, վարձակալած գույքի օգտագործման միջոցով, համայնքին կմատուցի գույքի նշանակությանը վերաբերվող ծառայություն, իսկ Պայմանագրի ավարտից հետո՝ Վարձատուին կվերադարձնի գույքը – Պայմանագում նշված պայմանների համաձայն:

1.2. Վարձատուն պարտավորվում է Վարձակալին հանձնել _____ /գույքի լրիվ անվանումը և մանրամասն նկարագրությունը/, /այսուհետև՝ Գույք/:

1.3. Գույքը պատկանում է Վարձատուին սեփականության իրավունքով, ինչը հաստատվում է _____ /սեփականությունը հաստատող փաստաթղթի անվանումը և մանրամասն տվյալները/:

1.4. Գույքը Վարձակալին պետք է հանձնվի՝ Պայմանագիրն ստորագրելու պահից _____ օրվա ընթացքում:

1.5. Գույքը նախատեսվում է _____ օգտագործել _____ որպես _____ /օգտագործման նշանակության անվանումը և մանրամասն նկարագրությունը/, իսկ Գույքի օգտագործման ընթացքում և դրա օգտագործման միջոցով՝ Վարձակալը պարտավորվում է _____ իրեն պատվիրակված _____ /ծառայության անվանումը և մանրամասն նկարագրությունը/ ծառայությունը մատուցել Համայնքի տարածքում:

1.6. Պայմանագրի գործողության ընթացքում, Գույքի օգտագործման արդյունքում, Վարձակալի ստացած եկամուտները նրա սեփականությունն են:

1.7. Վարձատուն երաշխավորում է, որ Պայմանագրի 1.2 կետում նշված Գույքը վաճառված, գրավ դրված, վարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ, դատական վեճի առարկա չէ, արգելանքի տակ չի գտնվում:

1.8. Վարձակալության հանձնված Գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի՝ չի կարող հիմք հանդիսանալ Կողմի համար՝ Պայմանագիրը լուծելու կամ այն փոփոխելու համար:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Վարձատուն իրավունք ունի՝

2.1.1. Վարձակալից պահանջել՝ Գույքն օգտագործել Պայմանագրի պայմաններին համապատասխան.

2.1.2. Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների խախտման դեպքում՝ նրանից պահանջել մուծելու վարձավճարը.

2.1.3. Պահանջել լուծելու Պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե Վարձակալը Գույքից օգտվում է Պայմանագրի պայմաններին կամ Գույքի նշանակությանն անհամապատասխան.

2.1.4. Վարձակալից պահանջելու՝ խնամքով վերաբերվելու Գույքի նկատմամբ.

2.1.5. Եռամսյակը մեկ՝ իրականացնելու Գույքի վիճակի ստուգման մոնիթորինգներ.

2.2. Վարձատուն պարտավոր է՝

2.2.1. Գույքը Վարձակալին տրամադրել՝ Պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում.

2.2.2. Գույքը Վարձակալին հանձնել բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով /տեխնիկական անձնագիր, որակի հավաստագիր և այլն/.

2.2.3. Անհրաժեշտության առաջացման դեպքում՝ Գույքը վարձակալության տալուց առաջ, կամ՝ Գույքի վարձակալման ժամանակահատվածի առաջին կեսի ընթացքում՝ իր հաշվին կատարել Գույքի հիմնական և/կամ ընթացիկ վերանորոգումը, եթե պարզվի, որ Գույքի վերանորոգման անհրաժեշտությունն առաջացրած պատճառները ծագել են դեռևս Գույքը վարձակալության տալուց առաջ.

2.2.4. Վարձակալին նախագուշացնել Գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավի իրավունք, սերվիտուտ և այլն) մասին.

2.2.5. Վարձակալի պահանջի դեպքում, մասնավորապես՝ 2.2.3 կետով նախատեսված դեպքում, անհատույց վերացնել Գույքի թերությունները, կամ՝ իջեցնել վարձավճարը:

2.3. Վարձակալն իրավունք ունի՝

2.3.1. Պահանջել Վարձատուից՝ Պայմանագրի 1.4 կետով սահմանված ժամկետում իրեն տրամադրել Գույքը.

2.3.2. Վարձատուից պահանջել՝ իրեն տրամադրելու Գույքի պատկանելիքներն ու դրան վերաբերող փաստաթղթերը.

2.3.3. Գույքի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելիս, իր ընտրությամբ՝

2.3.3.1. Վարձատուից պահանջել՝ անհատույց վերացնելու Գույքի թերությունները կամ համաչափ իջեցնելու վարձավճարը, կամ հատուցելու Գույքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը.

2.3.3.3. Պահանջել՝ վաղաժամկետ լուծելու Պայմանագիրը և փոխհատուցել վնասները.

2.3.4. Պահանջել՝ նվազեցնելու վարձավճարի չափը, եթե հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում, Գույքի վիճակը վատթարացել է.

2.3.5. Վարձատուի կողմից Պայմանագրի 2.2.3 կետում նշված պարտականությունը չկատարելու դեպքում՝

2.3.5.1. Կատարել Պայմանագրով նախատեսված կամ անհետաձգելի անհրաժեշտությամբ ծագած հիմնական վերանորոգումը և Վարձատուից պահանջել վերանորոգման արժեքը կամ դա հաշվարկել վարձավճարի հաշվին.

2.3.5.2. Պահանջել՝ համապատասխան չափով նվազեցնելու վարձավճարը.

2.3.5.3. Պահանջել՝ լուծելու Պայմանագիրը և հատուցելու վնասները.

2.3.6. Վարձատուի կողմից՝ Պայմանագրի 2.2.4 կետում նշված պարտականությունը չկատարելու դեպքում, պահանջել նվազեցնելու վարձավճարը:

2.3.7. Համայնքի բնակիչներից ինքնուրույն կերպով հավաքել իրեն պատվիրակված և իր կողմից տրամադրված ծառայությունների դիմաց վճարը՝ ըստ Պայմանագրով սահմանված սակագնի և համաձայն Պայմանագրի պայմանների:

2.3.8. Պայմանագիրը դադարելու դեպքում Վարձատուին վերադարձնել Գույքն իր կողմից ստացված վիճակում՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:

2.4. Վարձակալը պարտավոր է՝

2.4.1. Ժամանակին մուծել Պայմանագրի 3 -րդ կետում նախատեսված վճարը:

2.4.2. Գույքը պահպանել պատշաճ վիճակում, իր հաշվին կատարել դրա ընթացիկ վերանորոգումը և կրել Գույքը պահպանելու համար անհրաժեշտ ծախսերը:

2.4.3. Պայմանագրի վաղաժամկետ լուծման կամ դադարման դեպքում՝ Վարձատուին վերադարձնել Գույքն իր կողմից ստացված վիճակում՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը:

2.4.4. Պայմանագրի գործունեության ընթացքում, Համայնքին տրամադրել իրեն պատվիրակված ծառայությունը՝ որակյալ կերպով, Պայմանագրով սահմանված Սակագնով և Պայմանագրում նախատեսված պայմաններով:

3. Գույքի վարձակալության դիմաց կատարվող վճարները

3.1. Գույքի վարձակալման դիմաց վճարվող Վարձավճարը կազմում է _____ / _____ / դրամ:

3.2. Վարձակալը վարձավճարը մուծում է _____ /հաճախականությունը/ հաջորդող ամսվա _____ - ից ոչ ուշ:

4. Պատվիրակվող ծառայությունը և Սակագինը

4.1. Համայնքի կողմից՝ Վարձակալին պատվիրակվող ծառայություն է հանդիսանում՝ _____ /ծառայության անվանումը և մանրամասն նկարագրությունը/.

4.2. Պատվիրակվող ծառայության դիմաց, Համայնքից գանձվող Վճարի դրույքաչափը /Սակագինը/, Պայմանագիրը ստորագրելու պահին, կազմում է՝ _____ /Վճարի միավորը և նորման/ դրամ, որը դրված է Պայմանագրի հաշվարկային հիմքում:

4.3. Պատվիրակվող ծառայության դիմաց գանձվող Վճարի դրույքաչափը կարող է փոփոխվել՝ ազգային դրամական միավորի գնողունակության անկման դեպքում, սակայն չի կարող լինել ավելին, քան հետևյալ հարաբերակցությունը:

Տոկոսային Գործակիցը Հիմա = Տոկոսային Գործակիցին ապագայում, որտեղ՝

Տոկոսային գործակիցը = Պատվիրակվող ծառայության մեկ միավորի դիմաց գանձվող Վճարը՝ բաժանած Օրենսդրորեն սահմանված նվազագույն աշխատավարձին, իսկ՝

Տոկոսային Գործակիցը Հիմա = Պատվիրակվող ծառայության վերջին 3 /երեք/ տարիներին, մեկ միավորի համար գործող Վճարի՝ միջին թվաբանականին:

Եթե Համայնքի տարածքում, մինչև այդ, չի տրամադրվել Պատվիրակվող ծառայությունը, ապա հաշվարկների հիմքում դրվող Վճարի ներկա դրույքաչափը որոշում է՝ Վարձատուին աշխարհագրորեն մոտ գտնվող, կամ՝ Վարձատուի գտնվելու Մարզի՝ ցանկացած 5 /հինգ/ համայնքներում գործող

Վճարի դրույքաչափերի միջինացմամբ, որտեղ բնակչությանը տրամադրվում է այդ /պատվիրակման ենթակա/ ծառայությունը:

4.4 Արգելվում է լրացուցիչ և/կամ թաքնված վճարների գանձումը՝ Պատվիրակված ծառայության մատուցման, կամ դրա հետ ուղղակիորեն կամ անուղղակիորեն փոխկապակցված ծառայությունների մատուցման՝ դիմաց:

5. Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման իրավական հետևանքները

5.1. Պայմանագրի վաղաժամկետ դադարեցումը, անկախ այն հանգամանքից, թե Կողմերից ում նախաձեռնությամբ և/կամ ինչ այլ պատճառներով է դա տեղի ունեցել, իրավունք է տալիս Կողմերին՝ ստանալու նյութական փոխհատուցում:

5.2. Վարձատուն իրավունք ունի հաշվարկելու՝ Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հետևանքով իր չստացած եկամուտների, իրեն չմատուցված ծառայությունների, ինչպես նաև՝ վարձակալման տրված և իր տիրապետմանը վերադարձած Գույքի հատկանիշների վատացման հետ կապված նյութական կորուստները:

5.3. Վարձակալն իրավունք ունի հաշվարկելու՝ Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հետևանքով իր չստացած եկամուտների, իր կողմից կատարված վճարումների, ծախսերի հետ կապված նյութական կորուստները:

5.4. Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հետ կապված նյութական և իրավական բնույթի հարցերը լուծվում են Պայմանագրի՝ 6-րդ, 8-րդ և 10-րդ Գլուխներով նախատեսված կարգով:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Վճարն ուշացնելու համար Վարձակալը Վարձատուին վճարում է տույժ՝ Պայմանագրի գումարի _____ տոկոսի չափով, որը սահմանվում է որպես կետանցի յուրաքանչյուր օրվա համար՝ Պայմանագրի գումարի _____ տոկոսի չափով հաշվարկվող գումար:

6.2. Տույժի վճարումը կողմերին չի ազատում նրանց վրա դրված պարտականությունները կատարելուց:

6.3. Վարձատուն պատասխանատվություն չի կրում Գույքի այն թերությունների համար, որոնք նա նշել է Պայմանագիրը կնքելիս, կամ որոնք նախապես հայտնի են եղել Վարձակալին կամ պետք է Վարձակալի կողմից հայտնաբերվեին Գույքը զննելիս կամ Գույքը վարձակալության հանձնելիս:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

Գույքի վարձակալության ժամկետն սկսվում է _____-ից և ավարտվում է _____-ին:

8. Վարձակալած Գույքի բարելավումները

8.1. Վարձակալած Գույքի վրա՝ Վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը, եթե դրանք բաժանելի են:

8.2. Եթե Վարձակալն իր միջոցների հաշվին և Վարձատուի համաձայնությամբ կատարել է վարձակալած Գույքից անբաժանելի բարելավումներ՝ առանց Գույքին վնաս պատճառելու, ապա Պայմանագիրը դադարելուց հետո Վարձակալն իրավունք ունի հատուցում ստանալ այդ բարելավումների արժեքի չափով:

8.3. Վարձակալի կողմից, առանց Վարձատուի համաձայնության կատարած, վարձակալած Գույքից անբաժանելի բարելավումների արժեքը չի հատուցվում:

8.4. Վարձակալած Գույքի ամորտիզացիոն միջոցների հաշվին կատարած՝ ինչպես բաժանելի, այնպես էլ անբաժանելի բարելավումները համարվում են Վարձատուի սեփականությունը:

9. Պայմանագրի վաղաժամկետ լուծումը

9.1. Վարձատուի պահանջով՝ Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել, եթե Վարձակալը՝

9.1.1. Պատշաճ կերպով չի իրականացրել իրեն Պատվիրակված ծառայության մատուցումը Համանյքին.

9.1.2. Գույքն օգտագործել է Պայմանագրի պայմանների կամ Գույքի նշանակության էական կամ բազմակի խախտումներով.

9.1.3. Էականորեն վատթարացրել է Գույքի վիճակը.

9.1.4. Պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը.

9.1.5. Պայմանագրով սահմանված ժամկետներում և Պայմանագրի պայմաններին համապատասխան՝ չի կատարել գույքի ընթացիկ վերանորոգումը:

9.2. Վարձակալի պահանջով՝ Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծարվել, եթե՝

9.2.1. Վարձատուն՝ Վարձակալի օգտագործմանը չի տրամադրել Գույքը կամ խոչընդոտներ է ստեղծել Գույքը Պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար:

9.2.2. Վարձակալին հանձնված Գույքն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ, որոնց մասին Վարձատուն չի նշել Պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել Վարձակալին և վերջինս չէր կարող հայտնաբերել Պայմանագիրը կնքելիս:

10. Վեճերի լուծման կարգը

Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը տեղի է ունենում ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

11. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Այդ դեպքում, Պայմանագրի Կողմը, որն իրավիճակը գնահատում է որպես անհաղթահարելի ուժի առաջացում՝ պարտավոր է, դրա առաջացման օրվանից սկսած՝ 3 /երեք/ օրվա ընթացքում, զգուշացնել այդ մասին՝ Պայմանագրի մյուս Կողմին: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

12. Եզրափակիչ դրույթներ

12.1. Պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի կողմից: Պայմանագրին կից հավելվածները դրա անբաժանելի մասն են:

12.2. Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

13. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Վարձատու

Վարձակալ

Հավելված 4. Գույքի վարձակալության և աստիճանական գնման (լիզինգի) պայմանագիր

Գույքի վարձակալության և աստիճանական գնման (լիզինգի) պայմանագիր

ք. _____ թ.

_____ /համայնքի անվանումը/ /այսուհետև՝ Վարձատու կամ Համայնք/, ի դեմս՝ _____, որը գործում է _____ հիման վրա, մի կողմից, և _____ /այսուհետև՝ Վարձակալ/, ի դեմս՝ _____, որը գործում է _____ հիման վրա, մյուս կողմից, /այսուհետև՝ Կողմեր/, կնքեցին սույն պայմանագիրը /այսուհետև՝ Պայմանագիր/ հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով, Վարձատուն պարտավորվում է, վճարի դիմաց՝ Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել՝ Պայմանագրի 1.2 կետում նշված գույքը՝ պայմանով, որ Վարձակալը, Պայմանագրի գործունեության ընթացքում, պարբերաբար կանվարների միջոցով և Պայմանագրով նախատեսված կարգով, Վարձատուից կգնի իրեն վարձակալման տրված գույքը, իսկ Պայմանագրի գործունեության ավարտին՝ կդառնա իր վարձակալության տակ գտնվող գույքի սեփականատերը:

1.2. Վարձատուն պարտավորվում է Վարձակալին հանձնել _____ /գույքի լիզինգի անվանումը և մանրամասն նկարագրությունը/, /այսուհետև՝ Գույք/:

1.3. Գույքը պատկանում է Վարձատուին սեփականության իրավունքով, ինչը հաստատվում է _____ /սեփականությունը հաստատող փաստաթղթի անվանումը և մանրամասն տվյալները/:

1.4. Գույքը Վարձակալին պետք է հանձնվի՝ Պայմանագիրն ստորագրելու պահից _____ օրվա ընթացքում:

1.5. Գույքը նախատեսվում է _____ օգտագործել որպես _____ /օգտագործման նշանակության անվանումը և մանրամասն նկարագրությունը/, իսկ Գույքի օգտագործման ընթացքում և դրա օգտագործման միջոցով՝ Վարձակալը պարտավորվում է _____ իրեն պատվիրակված _____ /ծառայության անվանումը և մանրամասն նկարագրությունը/ ծառայությունը մատուցել Համայնքի տարածքում:

1.6. Պայմանագրի գործողության ընթացքում, Գույքի օգտագործման արդյունքում, Վարձակալի ստացած եկամուտները նրա սեփականությունն են:

1.7. Վարձատուն երաշխավորում է, որ Պայմանագրի 1.2 կետում նշված Գույքը վանառված, գրավ դրված, վարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ, դատական վեճի առարկա չէ, արգելանքի տակ չի գտնվում:

1.8. Վարձակալության հանձնված Գույքի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումն այլ անձի՝ չի կարող հիմք հանդիսանալ Կողմի համար՝ Պայմանագիրը լուծելու կամ այն փոփոխելու համար:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Վարձատուն իրավունք ունի՝

- 2.1.1. Վարձակալից պահանջել՝ Գույքն օգտագործել Պայմանագրի պայմաններին համապատասխան.
- 2.1.2. Վարձակալի կողմից վարձը վճարելու ժամկետների խախտման դեպքում՝ նրանից պահանջել մուծելու վարձավճարը.

2.1.3. Պահանջել լուծելու Պայմանագիրը և հատուցելու վնասները, եթե Վարձակալը Գույքից օգտվում է Պայմանագրի պայմաններին կամ Գույքի նշանակությանն անհամապատասխան:

2.1.4. Վարձակալից պահանջելու՝ խնամքով վերաբերվելու Գույքի նկատմամբ:

2.1.5. Եռամսյակը մեկ՝ իրականացնելու Գույքի վիճակի ստուգման մոնիթորինգներ:

2.2. Վարձատուն պարտավոր է՝

2.2.1. Գույքը Վարձակալին տրամադրել՝ Պայմանագրի պայմաններին և Գույքի նշանակությանը համապատասխանող վիճակում:

2.2.2. Գույքը Վարձակալին հանձնել բոլոր պատկանելիքներով ու դրան վերաբերող փաստաթղթերով /տեխնիկական անձնագիր, որակի հավաստագիր և այլն/:

2.2.3. Անհրաժեշտության առաջացման դեպքում՝ Գույքը վարձակալության տալուց առաջ, կամ՝ Գույքի վարձակալման ժամանակահատվածի առաջին կեսի ընթացքում՝ իր հաշվին կատարել Գույքի հիմնական և/կամ ընթացիկ վերանորոգումը, եթե պարզվի, որ Գույքի վերանորոգման անհրաժեշտությունն առաջացրած պատճառները ծագել են դեռևս Գույքը վարձակալության տալուց առաջ:

2.2.4. Վարձակալին նախագրուշացնել Գույքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների (գրավի իրավունք, սերվիտուտ և այլն) մասին:

2.2.5. Վարձակալի պահանջի դեպքում, մասնավորապես՝ 2.2.3 կետով նախատեսված դեպքում, անհատույց վերացնել Գույքի թերությունները, կամ՝ իջեցնել վարձավճարը:

2.3. Վարձակալն իրավունք ունի՝

2.3.1. Պահանջել Վարձատուից՝ Պայմանագրի 1.4 կետով սահմանված ժամկետում իրեն տրամադրել Գույքը:

2.3.2. Վարձատուից պահանջել՝ իրեն տրամադրելու Գույքի պատկանելիքներն ու դրան վերաբերող փաստաթղթերը:

2.3.3. Գույքի օգտագործմանն ամբողջովին կամ մասնակիորեն խոչընդոտող թերություններ հայտնաբերելիս, իր ընտրությամբ՝

2.3.3.1. Վարձատուից պահանջել՝ անհատույց վերացնելու Գույքի թերությունները կամ համաչափ իջեցնելու վարձավճարը, կամ հատուցելու Գույքի թերությունները վերացնելու համար իր կատարած ծախսերը:

2.3.3.3. Պահանջել՝ վաղաժամկետ լուծելու Պայմանագիրը և փոխհատուցել վնասները:

2.3.4. Պահանջել՝ նվազեցնելու վարձավճարի չափը, եթե հանգամանքների ուժով, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում, Գույքի վիճակը վատթարացել է:

2.3.5. Վարձատուի կողմից Պայմանագրի 2.2.3 կետում նշված պարտականությունը չկատարելու դեպքում՝

2.3.5.1. Կատարել Պայմանագրով նախատեսված կամ անհետաձգելի անհրաժեշտությամբ ծագած հիմնական վերանորոգումը և Վարձատուից պահանջել վերանորոգման արժեքը կամ դա հաշվարկել վարձավճարի հաշվին:

2.3.5.2. Պահանջել՝ համապատասխան չափով նվազեցնելու վարձավճարը:

2.3.5.3. Պահանջել՝ լուծելու Պայմանագիրը և հատուցելու վնասները:

2.3.6. Վարձատուի կողմից՝ Պայմանագրի 2.2.4 կետում նշված պարտականությունը չկատարելու դեպքում, պահանջել նվազեցնելու վարձավճարը:

2.3.7. Համայնքի բնակիչներից ինքնուրույն կերպով հավաքել իրեն պատվիրակված և իր կողմից տրամադրված ծառայությունների դիմաց վճարը՝ ըստ Պայմանագրով սահմանված սակագնի և համաձայն Պայմանագրի պայմանների:

2.4. Վարձակալը պարտավոր է՝

2.4.1. Ժամանակին մուծել Պայմանագրի 4 -րդ կետում նախատեսված վճարը.

2.4.2. Գույքը պահպանել պատշաճ վիճակում, իր հաշվին կատարել դրա ընթացիկ վերանորոգումը և կրել Գույքը պահպանելու համար անհրաժեշտ ծախսերը.

2.4.3. Պայմանագրի վաղաժամկետ լուծման կամ դադարման դեպքում, եթե սեփականության իրավունքի փոխանցում, համաձայն Պայմանագրով նախատեսված պայմանների, տեղի չի ունեցել՝ Վարձատուին վերադարձնել Գույքն իր կողմից ստացված վիճակում՝ հաշվի առնելով բնականոն մաշվածությունը.

Պայմանագրի գործունեության ընթացքում, Համայնքին տրամադրել իրեն պատվիրակված ծառայությունը՝ Պայմանագրով սահմանված Սակագնով և Պայմանագրում նախատեսված պայմաններով:

3. Վարձակալվող գույքի աստիճանական գնումը

3.1. Վարձակալի կողմից, Գույքի վարձակալման դիմաց Վարձատուին վճարվող վարձավճարը՝ հանդիսանում է նաև Վարձակալի կողմից Գույքի գնման վճար և հանվում է Պայմանագրի 3.2. կետում նշված և Գույքի արժեք հանդիսացող գումարից:

3.2. Գույքի արժեքը կազմում է _____ դրամ, այն ունի հաստատուն բնույթ, ենթակա չէ միակողմանի վերանայման և կարող է փոփոխվել միայն Պայմանագրով նախատեսված պայմանների համաձայն:

3.3. Գույքը դառնում է Վարձակալի սեփականությունը, երբ Վարձակալն ամբողջապես վճարում է Գույքի արժեքը: Գույքի գնման նպատակով, Վարձակալի կողմից կատարվող վճարումները կարող են լինել պարբերական վճարների տեսքով՝ համաձայն Պայմանագրի 4.1. և 4.2. կետերի, ինչպես նաև՝ լրացուցիչ - միանվագ վճարների տեսքով:

3.4. Գույքի արժեքը չի կարող նվազեցվել Պայմանագրի 7 –րդ Գլխով նախատեսված և տույժ հանդիսացող վճարումների գումարի հաշվին:

3.5. Գույքի վաղաժամկետ գնման արդյունքում Պայմանագրի ժամկետի նվազեցումը, կամ՝ ժամկետի երկարացումը - նոր հանգամանքների ծագման հետևանքով՝ կարող է տեղի ունենալ միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

4. Գույքի վարձակալության դիմաց կատարվող վճարները

4.1. Գույքի վարձակալման դիմաց վճարվող Վարձավճարը կազմում է _____ / _____ / դրամ:

4.2. Վարձակալը վարձավճարը մուծում է _____ /հաճախականությունը/ հաջորդող ամսվա _____ - ից ոչ ուշ:

5. Պատվիրակվող ծառայությունը և Սակագինը

5.1. Համայնքի կողմից՝ Վարձակալին պատվիրակվող ծառայություն է հանդիսանում՝

5.2. Պատվիրակվող ժառայության դիմաց, Համայնքից գանձվող Վճարի դրույքաչափը /Սակագինը/, Պայմանագիրը ստորագրելու պահին, կազմում է՝ _____ /Վճարի միավորը և նորման/ դրամ, որը դրված է Պայմանագրի հաշվարկային հիմքում:

5.3. Պատվիրակվող ժառայության դիմաց գանձվող Վճարի դրույքաչափը կարող է փոփոխվել՝ ազգային դրամական միավորի գնողունակության անկման դեպքում, սակայն չի կարող լինել ավելին, քան հետևյալ հարաբերակցությունը.

Տոկոսային Գործակիցը Հիմա = Տոկոսային Գործակիցին ապագայում, որտեղ՝

Տոկոսային գործակիցը = Պատվիրակվող ժառայության մեկ միավորի դիմաց գանձվող Վճարը՝ բաժանած Օրենսդրորեն սահմանված նվազագույն աշխատավարձին, իսկ՝

Տոկոսային Գործակիցը Հիմա = Պատվիրակվող ժառայության վերջին 3 /երեք/ տարիներին, մեկ միավորի համար գործող Վճարի՝ միջին թվաբանականին:

Եթե Համայնքի տարածքում, մինչև այդ, չի տրամադրվել Պատվիրակվող ժառայությունը, ապա հաշվարկների հիմքում դրվող Վճարի ներկա դրույքաչափը որոշում է՝ Վարձատուին աշխարհագրորեն մոտ գտնվող, կամ՝ Վարձատուի գտնվելու Մարզի՝ ցանկացած 5 /հինգ/ համայնքներում գործող Վճարի դրույքաչափերի միջինացմամբ, որտեղ բնակչությանը տրամադրվում է այդ /պատվիրակման ենթակա/ ժառայությունը:

5.4 Արգելվում է լրացուցիչ և/կամ թաքնված վճարների գանձումը՝ Պատվիրակված ժառայության մատուցման, կամ դրա հետ ուղղակիորեն կամ անուղղակիորեն փոխկապակցված ժառայությունների մատուցման՝ դիմաց:

6. Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման իրավական հետևանքները

6.1. Պայմանագրի վաղաժամկետ դադարեցումը, անկախ այն հանգամանքից, թե Կողմերից ում նախաձեռնությամբ և/կամ ինչ այլ պատճառներով է դա տեղի ունեցել, իրավունք է տալիս Կողմերին՝ ստանալու նյութական փոխհատուցում:

6.2. Վարձատուն իրավունք ունի հաշվարկելու՝ Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հետևանքով իր չստացած եկամուտների, իրեն չմատուցված ժառայությունների, ինչպես նաև՝ վարձակալման տրված և իր տիրապետմանն ու սեփականությանը վերադարձած Գույքի հատկանիշների վատացման հետ կապված նյութական կորուստները:

6.3. Վարձակալն իրավունք ունի հաշվարկելու՝ Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հետևանքով իր չստացած եկամուտների, իր կողմից կատարված /լիզինգային/ վճարումների, կատարած ծախսերը, իրեն՝ սեփականության իրավունքով, ամբողջապես կամ մասնակիորեն չփոխանցված գույքի հետ կապված նյութական կորուստները:

6.4. Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հետ կապված նյութական և իրավական բնույթի հարցերը լուծվում են Պայմանագրի՝ 7-րդ, 9-րդ և 11-րդ Գլուխներով նախատեսված կարգով:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1. Վճարն ուշացնելու համար Վարձակալը Վարձատուին վճարում է տույժ՝ Պայմանագրի գումարի _____ տոկոսի չափով, որը սահմանվում է որպես կետանցի յուրաքանչյուր օրվա համար՝ Պայմանագրի գումարի _____ տոկոսի չափով հաշվարկվող գումար:

7.2. Տույժի վճարումը կողմերին չի ազատում նրանց վրա դրված պարտականությունները կատարելուց:

7.3. Վարձատուն պատասխանատվություն չի կրում Գույքի այն թերությունների համար, որոնք նա նշել է Պայմանագիրը կնքելիս, կամ որոնք նախապես հայտնի են եղել Վարձակալին կամ պետք է Վարձակալի կողմից հայտնաբերվեին Գույքը զննելիս կամ Գույքը վարձակալության հանձնելիս:

8. Պայմանագրի գործողության ժամկետը

Գույքի վարձակալության ժամկետն սկսվում է _____-ից և ավարտվում է _____-ին:

9. Վարձակալած Գույքի բարելավումները

9.1. Վարձակալած Գույքի վրա՝ Վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը, եթե դրանք բաժանելի են:

9.2. Եթե Վարձակալն իր միջոցների հաշվին և Վարձատուի համաձայնությամբ կատարել է վարձակալած Գույքից անբաժանելի բարելավումներ՝ առանց Գույքին վնաս պատճառելու, ապա Պայմանագիրը դադարելուց հետո Վարձակալն իրավունք ունի հատուցում ստանալ այդ բարելավումների արժեքի չափով:

9.3. Վարձակալի կողմից, առանց Վարձատուի համաձայնության կատարած, վարձակալած Գույքից անբաժանելի բարելավումների արժեքը չի հատուցվում:

9.4. Վարձակալած Գույքի ամորտիզացիոն միջոցների հաշվին կատարած՝ ինչպես բաժանելի, այնպես էլ անբաժանելի բարելավումները համարվում են Վարձատուի սեփականությունը:

10. Պայմանագրի վաղաժամկետ լուծումը

10.1. Վարձատուի պահանջով՝ Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել, եթե Վարձակալը՝

10.1.1. Պատշաճ կերպով չի իրականացրել իրեն Պատվիրակված ծառայության մատուցումը Համանյքին.

10.1.2. Գույքն օգտագործել է Պայմանագրի պայմանների կամ Գույքի նշանակության էական կամ բազմակի խախտումներով.

10.1.3. Էականորեն վատթարացրել է Գույքի վիճակը.

10.1.4. Պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը.

10.1.5. Պայմանագրով սահմանված ժամկետներում և Պայմանագրի պայմաններին համապատասխան՝ չի կատարել գույքի ընթացիկ վերանորոգումը:

10.2. Վարձակալի պահանջով՝ Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծարվել, եթե՝

10.2.1. Վարձատուն՝ Վարձակալի օգտագործմանը չի տրամադրել Գույքը կամ խոչընդոտներ է ստեղծել Գույքը Պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար:

10.2.2. Վարձակալին հանձնված Գույքն ունի դրա օգտագործմանը խոչընդոտող թերություններ, որոնց մասին Վարձատուն չի նշել Պայմանագիրը կնքելիս, որոնք նախապես հայտնի չեն եղել Վարձակալին և վերջինս չէր կարող հայտնաբերել Պայմանագիրը կնքելիս:

11. Վեճերի լուծման կարգը

Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չերելու դեպքում վեճերի լուծումը տեղի է ունենում ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

12. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Այդ դեպքում, Պայմանագրի Կողմը, որն իրավիճակը գնահատում է որպես անհաղթահարելի ուժի առաջացում՝ պարտավոր է, դրա առաջացման օրվանից սկսած՝ 3 /երեք/ օրվա ընթացքում, զգուշացնել այդ մասին՝ Պայմանագրի մյուս Կողմին: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել Պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

13. Եզրափակիչ դրույթներ

13.1. Պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի կողմից: Պայմանագրին կից հավելվածները դրա անբաժանելի մասն են:

13.2. Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

14. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Հարձասուռ

Հարձակալ

Հավելված 5. Կոնցեսիոն պայմանագիր

Կոնցեսիոն պայմանագիր

_____/համայնքի անվանումը/ **ՀԱՄԱՅՆՔԻ**
ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ /ենթակառուցվածքի կամ՝ ակտիվի ամբողջական անվանումը/
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՌԱՎԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԵՎ ԿՈՑԵՍԻՈՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ՝

ԿՈՆՑԵՍԻՈՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

թ. _____ 20__ թ.

_____, այսուհետև՝ Կոնցեսիոնատ, կամ՝ Շնորհատու, կամ՝ Կողմ 1, կամ՝
Համայնք, _____ ի _____ դեմս

_____/պաշտոն, Անուն, Ազգանուն/, որը գործում է _____ հիման վրա, մի կողմից, և
_____, այսուհետև՝ Կոնցեսիոններ, կամ՝ Օպերատոր,
կամ՝ Կողմ 2, _____ ի _____ դեմս

_____/ պաշտոն, Անուն, Ազգանուն /, որը գործում է _____ հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ Կողմեր,
կնքեցին սույն Պայմանագիրը, այսուհետև՝ Պայմանագիր, հետևյալի մասին.

1. Պայմանագրում առկա հասկացությունները.

Շնորհատու. Համայնքը, որը, վճարի դիմաց, երրորդ կողմի /օպերատորի/ կառավարման է հանձնում Համայնքին պատկանող, կամ՝ Համայնքի տիրապետման տակ գտնվող և գործառնական գործունեություն իրականացնելու համար պիտանի գույքը, ենթակառուցվածքները և Համայնքի տարածքում, Պայմանագրում նշված ծառայություն տրամադրելու իրավունքները՝ պայմանով, որ Օպերատորը, կառավարման ընթացքում, սեփական միջոցներով, կիրականացնի իր կառավարման տակ գտնվող գույքի և ենթակառուցվածքների բարելավում, պահպանում, ինչպես նաև՝ իրեն պատվիրակված ծառայության մատուցումը Համայնքին՝ Պայմանագրում նշված պայմաններով:

Օպերատոր. Անհատ ձեռներեց, կամ՝ իրավաբանական անձ, որը, վճարի դիմաց, կառավարման է վերցնում Համայնքին պատկանող, կամ՝ Համայնքի տիրապետման տակ գտնվող և գործառնական գործունեություն իրականացնելու համար պիտանի գույքը, ենթակառուցվածքները, Համայնքից ստանում է Համայնքի տարածքում՝ Պայմանագրում նշված պատվիրակված ծառայության տրամադրման իրավունքները, ինչպես նաև՝ ստանձնում է իր կառավարման տակ անցնող և գտնվող գույքի և ենթակառուցվածքների՝ սեփական միջոցներով, բարելավման, պահպանման և, իրեն պատվիրակված ծառայության՝ Պայմանագրում նշված պայմաններով ու չափորոշիչներով տրամադրման պարտավորություններ:

Կոնցեսիոն ծրագիր. Միջոցառումների, ներդրումների, կառավարման և ծառայությունների տրամադրման ամբողջական համակարգ, որն իրականացվում է Համայնքի տարածքում և ըստ որի՝ Օպերատորը կառավարման է վերցնում Համայնքին պատկանող, կամ՝ Համայնքի տիրապետման տակ գտնվող և գործառնական գործունեություն իրականացնելու համար պիտանի գույքը, ենթակառուցվածքները, Համայնքից ստանում է Համայնքի տարածքում՝ Պայմանագրում նշված պատվիրակված ծառայության տրամադրման իրավունքները, ինչպես նաև՝ ստանձնում է իր կառավարման տակ անցնող և գտնվող գույքի և ենթակառուցվածքների՝ սեփական միջոցներով, բարելավման, պահպանման և, իրեն պատվիրակված ծառայության՝ Պայմանագրում նշված պայմաններով ու չափորոշիչներով տրամադրման պարտավորություններ: Կոնցեսիոն ծրագրի իրականացման արդյունքում՝ Համայնքն ստանում է որակյալ և մատչելի ծառայություններ, սեփական գույքի արդյունավետ կառավարում և գույքի կիրառական հատկանիշների լավացում, ինչպես նաև՝ դրամական միջոցներ – վճարի տեսքով, իսկ Օպերատորը փոխհատուցում է իր կողմից կատարված բոլոր ծախսերը և ստանում է շահույթ:

Կոնցեսիոն ծրագիրը ներառում է Բիզնես – պլանը և Պայմանագիրը:

Բիզնես – պլան. Կոնցեսիոն ծրագրի շրջանակներում և դրա իրականացման նպատակով կազմված, պարտադիր կատարման ենթակա՝ Կողմերի գործողությունների և ֆինանսական հոսքերի հստակ քայլային և ժամանակացույցային փաստաթուղթ, որը նախօրոք հաստատվում է Կողմերի կողմից և դրվում է Կոնցեսիոն ծրագրի հիմքում:

Կոնցեսիոն ծրագրի Ներդրումային փուլ /այսուհետ՝ Ներդրումային փուլ/. Օպերատորի կողմից՝ Պայմանագրով, Բիզնես – Պլանով նախատեսված ֆինանսական ներդրումների ամբողջական իրականացման ժամանակահատվածը, որի արդյունքում հնարավոր է դառնում ծառայության մատուցումը Համայնքի բնակիչներին: Ներդրումային փուլ, կամ՝ Ներդրումային փուլի մաս չի կարող համարվել այն ժամանակահատվածը, երբ Օպերատորը գանձում է վճար՝ իր կողմից տրամադրվող, իրեն պատվիրակված ծառայության մատուցման դիմաց՝ անգամ, եթե այդ ընթացքում, Օպերատորի կողմից, Կոնցեսիոն ծրագրի շրջանակներում, իրականացվում են ներդրումներ և/կամ՝ լավացումներ:

Կոնցեսիոն ծրագրի ծախսաձածկման փուլ /այսուհետ՝ Ծախսաձածկման փուլ/. Ներդրումային հատվածի ավարտից հետո՝ Պայմանագրով և Բիզնես – պլանով նախատեսված այն ժամանակահատվածը, որը տրվում է Օպերատորին՝ Կոնցեսիոն ծրագրի շրջանակներում արված սեփական ներդրումները վերադարձնելու և շահույթ ապահովելու համար:

Կոնցեսիոն կառավարման օբյեկտ /Այսուհետև՝ Կոնցեսիոն օբյեկտ/. Այն ակտիվը, որի կայացման համար և որի մեջ, դրական ֆինանսական արդյունք ստանալու նպատակով, Օպերատորը կատարում է իր ներդրումները և որի միասնական կառավարումն իրականացվում է Օպերատորի կողմից՝ համաձայն Կոնցեսիոն ծրագրի պայմանների: Պայմանագրով և Բիզնես - Պլանով՝ Կոնցեսիոն կառավարման օբյեկտ է հանդիսանում _____ /օբյեկտի ճշգրիտ անվանումը և գործառնական նկարագրությունը/, _____ համայնքի տարածքում:

Օպերատորին պատվիրակվող ծառայություն /այսուհետ՝ Պատվիրակվող ծառայություն/. Համայնքի կողմից, Կոնցեսիոն ծրագրի շրջանակներում, Օպերատորին տրված պատվերն է՝ վերջինիս կողմից, Համայնքի իրավասության տակ գտվող կոնկրետ ծառայությունը՝ Համայնքի տարածքում, Կոնցեսիոն կառավարման օբյեկտի իրականացրած գործառնությունների միջոցով և Կոնցեսիոն ծրագրի համաձայն՝ իրականացնելու:

Պատվիրակվող ծառայության դիմաց գանձվող վճար /այսուհետ՝ Վճար/. Վճար, որի չափը կամ՝ հաշվարկման և/կամ փոփոխման մեխանիզմը՝ հաստատվում է ներդրումային ծրագրի սահմաններում և հիմք է հանդիսանում Կողմերի միջև, Կոնցեսիոն ծրագրի շրջանակներում, ֆինանսական հաշվարկների և փոխհարաբերությունների համար:

Կոնցեսիոն ծրագրի ավարտ. Պայմանագրով և Բիզնես – պլանով նախատեսված բոլոր գործառնությունների ավարտը: Իր մեջ ամբողջապես ներառում է Ներդրումային փուլի և Ծախսաձածկման փուլի ավարտը, ինչպես նաև՝ Կոնցեսիոն օբյեկտի՝ Համայնքին սեփականության իրավունքով և անհատույց կերպով փոխանցման ամբողջական գործընթացի ավարտը:

2. **Պայմանագրի Առարկան**

2.1. Հանձնաձայնագրի առարկա է հանդիսանում ներդրումային և կառավարչական միասնական գործունեությունը, որն իրականացվում է Համայնքի վարչական տարածքում և/կամ Համայնքի վարչական տարածքի հետ կապ ունեցող այլ տարածքներում, Կոնցեսիոն ծրագրի շրջանակներում և, որի նպատակն է՝ Համայնքի կողմից հանրային ծառայությունների ավելի ամբողջական և/կամ ավելի արդյունավետ տրամադրման կազմակերպումը՝ Օպերատորի միջոցների հաշվին և Օպերատորի միջոցով:

2.2. Կոնցեսիոն ծրագիրն իրենից ներկայացնում է _____ /Կոնցեսիոն ծրագրի անվանումը, ճշգրիտ նկարագրությունը/, որի բաղկացուցիչ մասն են կազմում սույն Պայմանագիրը և կից Բիզնես – պլանը, համաձայն որոնց՝ Օպերատորը, իրեն կառավարման հանձնված ակտիվներում, իրականացնում է _____ /չափը/ դրամի կապիտալ նպատակային ներդրումներ, ինչպես նաև՝ _____ /համայնքի անվանումը/ համայնքի տարածքում, _____ /ժամկետը/ ժամկետում, Պայմանագրի և Բիզնես - պլանի շրջանակներում, ինչպես նաև՝ Պայմանագրում նշված պայմանների և Բիզնես – պլանում նշված չափորոշիչների համաձայն: Կողմերը պարտավորվում են համատեղ ջանքերով ապահովել Կոնցեսիոն ծրագրի լիարժեք իրականացումը՝ համաձայն Պայմանագրի պայմանների և Բիզնես – պլանով նախատեսված չափորոշիչների:

2.3. Ըստ Պայմանագրի՝ Կոնցեսիոն ծրագրի Ներդրումային փուլի ավարտից հետո, Ներդրողն իրավունք է ստանում _____ /ժամկետը/ տարի ժամկետով, համապատասխան վճարի դիմաց, կառավարել Կոնցեսիոն օբյեկտը, բնակչությանը տրամադրել իրեն պատվիրակված՝

_____ /ծառայության անվանումը/ ծառայությունը, դրա դիմաց գանձել Վճար՝ Պայմանագրով հաստատված չափով և կարգով:

3. **Կողմերի պարտավորությունները և իրավունքները**

3.1. Ծնորհատուն պարտավորվում է.

3.1.1. Օպերատորին տրամադրել բաց, ամբողջական և իրական տեղեկատվություն՝ Կոնցեսիոն ծրագրի քննարկման և իրականացման բոլոր փուլերում՝ Օպերատորին հետաքրքրող բոլոր հարցերի վերաբերյալ:

3.1.2. Իրեն հայտնի՝ ռիսկերի, խոչընդոտների և արգելքների մասին, որոնք կարող են խանգարել Կոնցեսիոն ծրագրի իրագործմանը, կամ՝ իջեցնել դրա արդյունավետությունը, նախօրոք, և/կամ այդ մասին իրեն հայտնի դառնալու պահից՝ զգուշացնել և տեղեկացնել Օպերատորին:

3.1.3. Կոնցեսիոն ծրագրի շրջանակներում՝ ամեն կերպ աջակցել Օպերատորին՝ Կոնցեսիոն ծրագրի՝ պատշաճ մակարդակով իրագործման համար:

3.1.4. Օպերատորին, հատուցելիության հիմունքներով, _____/ժամկետը/ տարի ժամկետով, Կոնցեսիոն ծրագրի իրականացման շրջանակներում,
ա/ փոխանցել հետևյալ ակտիվները՝ դրանց արդյունավետ կառավարման և դրանց որակի լավացման նպատակով.

_____ /փոխանցվող հիմնական ակտիվների ցանկը/
Փոխանցվող ակտիվների մանրամասն ցանկը նշված է Պայմանագրի անբաժանելի մասը համարվող՝ Գույքագրման Ակտում,
ինչպես նաև՝
բ/ Օպերատորին փոխանցել՝ Համայնքի տարածքում հետևյալ ծառայությունը մատուցելու իրավունքը:

_____ /ծառայության անվանումը/

3.1.5. Իրականացնել՝ Կոնցեսիոն ծրագրի շրջանակներում և Համայնքի իրավասությանը վերաբերվող՝ բոլոր փաստաթղթերի արագ և պատշաճ պատրաստումը և ձևակերպումը:

3.1.6. Հինգ աշխատանքային օրվա ընթացքում, գրավոր կերպով, պատասխանել Օպերատորի բոլոր գրություններին, առաջարկություններին, բողոքներին և նախագուշացումներին:

3.1.7. Անշեղորեն պահպանել Կոնցեսիոն ծրագրի պայմաններն ու չափորոշիչները:

3.1.8. Ներդրումային փուլի ավարտից հետո, ինչպես նաև՝ Ծախսաձածկման փուլի ընթացքում, առավելագույնս մեկամսյա ժամկետում, գրավոր կերպով ընդունել Ներդրողի կողմից կատարած աշխատանքները և արձանագրել Կոնցեսիոն օբյեկտի և/կամ դրա լավացված մասերի պատրաստի վիճակը՝ Օպերատորի կողմից Պատվիրակված ծառայությունը տրամադրելու համար, կամ՝ հիմնավորված կերպով մերժել Կոնցեսիոն օբյեկտի լավացման փաստի ընդունումը – Օպերատորին մանրամասն և գրավոր կերպով ներկայացնելով բոլոր առարկություններն ու մերժման պատճառները:

3.2. Ծնորհատուն իրավունք ունի.

3.2.1. Օպերատորից ստանալ բաց, ամբողջական և իրական տեղեկատվություն՝ Կոնցեսիոն ծրագրի վերաբերյալ՝ դրա քննարկման և իրականացման բոլոր փուլերում, իրեն հետաքրքրող բոլոր հարցերի վերաբերյալ:

3.2.2. Վերահսկելու Օպերատորի կողմից իրականացվող քայլերի համապատասխանությունը՝ Կոնցեսիոն ծրագրին:

3.2.3. Ներկայացնելու առաջարկներ, դիտողություններ, կատարելու նախագուշացումներ և ծանուցումներ, եթե Կոնցեսիոն ծրագրի իրականացումը, Օպերատորի գործունեության կամ անգործության, ինչպես նաև այլ հանգամանքների պատճառով՝ սկսել է էականորեն շեղվել իր չափորոշիչներից - առանց Կողմերի նախնական գրավոր համաձայնության:

3.2.4. Կանգնեցնելու Կոնցեսիոն ծրագրի իրագործումը, եթե Օպերատորի կողմից, շարունակական կերպով սկսել են խախտվել Կոնցեսիոն ծրագրի պայմանները և չափորոշիչները, իսկ նախագգուշացումների արդյունքում՝ շեղումներն ու խախտումները չեն շտկվել:

3.3. Օպերատորը պարտավորվում է.

3.3.1. Ծնորհատուին տրամադրել բաց, ամբողջական և իրական տեղեկատվություն՝ Կոնցեսիոն ծրագրի քննարկման և իրականացման բոլոր փուլերում, Ծնորհատուին հետաքրքրող բոլոր հարցերի վերաբերյալ:

3.3.2. Իրեն հայտնի՝ ռիսկերի, խոչընդոտների և արգելքների մասին, որոնք կարող են խանգարել Կոնցեսիոն ծրագրի իրագործմանը, կամ՝ իջեցնել դրա արդյունավետությունը - նախօրոք, և/կամ այդ մասին իրեն հայտնի դառնալու պահից՝ գգուշացնել և տեղեկացնել Ծնորհատուին:

3.3.3. Կոնցեսիոն ծրագրի շրջանակներում՝ ամեն կերպ աջակցել Ծնորհատուին՝ Կոնցեսիոն ծրագրի պատշաճ մակարդակով իրագործման համար:

3.3.4. Կոնցեսիոն ծրագրի՝

ա/ Ներդրումային փուլում, _____ ժամկետում, իրականացնել՝ _____ դրամի, իսկ ծախսաձածկման փուլում՝ _____ դրամի կանխիկ ֆինանսական ներդրումներ՝ Կոնցեսիոն օբյեկտում, որոնք իրենց մեջ ներառում են Բիզնես – Պլանով նախատեսված միջոցառումների ցանկը և չափորոշիչները:

բ/ Կոնցեսիոն օբյեկտում, Կոնցեսիոն ծրագրի իրագործման շրջանակներում, ներդնել հետևյալ Գույքը և այլ ակտիվները. _____ /գույքի թվարկումը,

մանրամասն նկարագրումը, հատկանիշների բացահայտումը, շուկայական արժեքի նշումը/:

3.3.5. Կոնցեսիոն ծրագրի սկսման պահից՝ _____ ժամկետում, Կոնցեսիոն ծրագրի պայմանների և չափորոշիչների պահպանմամբ, ամբողջապես ավարտել Ներդրումային փուլը և, Կոնցեսիոն օբյեկտը՝ Պատվիրակվող ծառայության լիարժեք տրամադրման համար պատրաստի, որակյալ և ամբողջական վիճակում՝ ներկայացնել Ծահառուին – Ներդրումային փուլի արդյունքում, ինչպես նաև՝ Ծախսաձածկման փուլի ընթացքում կատարված աշխատանքների ընդունման նպատակով:

3.3.6. Անշեղորեն պահպանել Կոնցեսիոն ծրագրի շրջանակներում, Կողմերի կողմից հաստատված պայմաններն ու չափորոշիչները:

3.3.7. Հինգ աշխատանքային օրերի ընթացքում՝ գրավոր կերպով, պատասխանել Ծնորհատուի բոլոր գրություններին, առաջարկություններին, բողոքներին և նախագգուշացումներին:

3.3.8. Կոնցեսիոն օբյեկտի կայացումն ապահովել՝ Պայմանագրում նշված չափորոշիչներով և ժամկետներում, աշխատանքները կատարել բարձր որակով և առանց գործառնական և ֆունկցիոնալ շեղումների:

3.3.9. Կոնցեսիոն օբյեկտում, Կոնցեսիոն ծրագրի շրջանակներում, կատարել հետևյալ լավացումներն ու գործառնական փոփոխությունները.

ա/ Գույքային հարթություն.

_____/գույքին վերաբերվող լավացումների և փոփոխությունների մանրամասն ցանկը, էությունը, ժամկետը, նպատակը, սպասվող ցուցանիշները, սպասվող տարբերության՝ թվային, տեխնիկական և գործառնական նկարագրությունը/;

բ/ Կառավարման հարթություն.

_____/Կառավարման մեթոդներին և արդյունավետության բարձրացմանը վերաբերվող՝ լավացումների և փոփոխությունների մանրամասն ցանկը, էությունը, ժամկետը, նպատակը, սպասվող ցուցանիշները, սպասվող տարբերության՝ թվային և գործառնական նկարագրությունը/;

3.3.10. Ժամանակին վճարել Կոնցեսիոն օբյեկտի կառավարման և օգտագործման դիմաց վճարը՝ Ծնորհատուին:

3.3.11. Կոնցեսիոն ծրագրի Ծախսաձածկման փուլում՝ Համայնքի և Համայնքի հետ առնչվող բնակելի վայրերի և տարածքների բնակչությանը մատուցել որակյալ և մատչելի ծառայություններ՝ Վճարի դրույքաչափի պահպանմամբ, առանց թաքնված և լրացուցիչ վճարների գանձման:

3.3.12. Կոնցեսիոն ծրագրի ավարտից հետո՝ 3 /երեք/- ամսյա ժամկետում, անհատույց կերպով լիարժեք սարքին և գործառական տեխնիկական վիճակում, Համայնքին փոխանցել Կոնցեսիոն օբյեկտը լիարժեք ֆունկցիոնալ վիճակում, ամբողջությամբ՝ ներառյալ բոլոր ուղղակի և անուղղակի ենթակառուցվածքները և բոլոր այն ակտիվները, որոնք ընդգրկված են եղել Կոնցեսիոն ծրագրում:

3.4. Օպերատորն իրավունք ունի.

3.4.1. Ծնորհատուից ստանալու բաց, ամբողջական և իրական տեղեկատվություն՝ Կոնցեսիոն ծրագրի վերաբերյալ՝ դրա քննարկման և իրականացման բոլոր փուլերում, իրեն հետաքրքրող բոլոր հարցերի վերաբերյալ:

3.4.2. Ներկայացնելու առաջարկներ, դիտողություններ, կատարելու նախագուշացումներ և ծանուցումներ, եթե Ծնորհատուի գործունեության և/կամ անգործության, կամ այլ հանգամանքների պատճառով՝ Կոնցեսիոն ծրագրի իրականացումը սկսել է էականորեն շեղվել իր չափորոշիչներից - առանց կողմերի նախնական գրավոր համաձայնության:

3.4.3. Կանգնեցնելու Կոնցեսիոն ծրագրի իրականացումը, եթե Ծնորհատուի կողմից, շարունակական կերպով սկսել են խախտվել Կոնցեսիոն ծրագրի պայմանները և չափորոշիչները, իսկ նախագուշացումների արդյունքում՝ Ծնորհատուի կողմից թույլ տրված շեղումներն ու խախտումները չեն շտկվել:

4. Օպերատորի վճարունակությունը հավաստող երաշխիքները.

4.1. Կոնցեսիոն ծրագիրն սկսելուց առաջ Կողմերը բացում են բանկային համատեղ և նպատակային հաշվեհամար /այսուհետև՝ Համատեղ հաշվեհամար/, որտեղից ֆինանսական գործառույթները կարող են իրականացվել միայն կողմերի համաձայնությամբ և Կողմերի լիազորված անձանց համատեղ հրահանգի դեպքում: Համատեղ հաշվեհամարը Կողմերը չեն կարող օգտագործել ծրագրին չվերաբերվող՝ այլ գործառույթների իրականացման համար:

4.2. Օպերատորը, Կոնցեսիոն ծրագիրն սկսելուց առնվազն երկու շաբաթ առաջ, պարտավոր է Կոնցեսիոն ծրագրի իրագործման համար նախատեսվող ներդրումների գումարի առնվազն 25 /քսանհինգ/ տոկոսը՝ _____ դրամ՝ կանխիկ դրամական միջոցների տեսքով, կենտրոնացնել Համատեղ հաշվեհամարում, եթե նույնիսկ այդ ներդրումներն ամբողջությամբ, կամ մասամբ՝ նախատեսվում է իրականացնել Ծախսաձածկման փուլում՝ Պատվիրակվող ծառայության մատուցման դիմաց ստացվելիք Վճարի հոսքերի հաշվին:

4.3. Օպերատորն իրավունք ունի, իր հայեցողությամբ, Պայմանագրի 4.2. կետում նշված կանխիկ գումարների փոխարեն, Ծնորհատուին ներկայացնել ՀՀ տարածքում գործող բանկի կողմից տրված, կամ՝ հաստատված, Կոնցեսիոն ծրագրի ժամկետից ոչ պակաս ժամկետում գործող՝ բանկային ֆինանսական երաշխավորություն:

4.4. Պայմանագիրը ստորագրելու փաստով Կողմերը հաստատում են, որ Համատեղ հաշվեհամարը բացված է և ունի հետևյալ տվյալները.

_____/Հաշվեհամարը/

4.5. Գտնվելով բանկային Համատեղ հաշվեհամարի վրա՝ ֆինանսական միջոցները չեն դադարում լինել Օպերատորի սեփականությունը և այնտեղ գտնվող մնացորդն ամբողջությամբ՝ Օպերատորին է փոխանցվում Կոնցեսիոն ծրագրի դադարեցման և/կամ Ներդրումային փուլի ավարտից հետո, հինգ աշխատանքային օրվա ընթացքում, եթե այլ բան նախատեսված չէ Պայմանագրով:

4.6. Ծախսաձածկման փուլում, Պատվիրակված ծառայության դիմաց գանձվող բոլոր վճարները ուղղվում են Համատեղ հաշվեհամար, որտեղից Օպերատորը կատարում է բոլոր գործառնական

ծախսերը, ինչպես նաև՝ անարգել կերպով, սեփական հայեցողությամբ, տնօրինում է ընթացիկ ծախսերի և եկամուտների, ամսվա կտրվածքով առաջացած՝ դրական տարբերության 70 /յոթանասուն/ տոկոսը:

4.7. Կոնցեսիոն ծրագրի ավարտից հետո՝ Օպերատորը, անարգել կերպով, սեփական հայեցողությամբ, տնօրինում է Համատեղ հաշվեհամարում գտնվող և իր սեփականությունը հանդիսացող ֆինանսական միջոցները: Կոնցեսիոն ծրագրի ավարտից հետո, 30 /երեսուն/ աշխատանքային օրվա ընթացքում, Համատեղ հաշվեհամարը պետք է փակվի՝ Կողմերի կողմից:

4.8. Կողմերն ընդունում են, որ Կոնցեսիոն ծրագրի իրականացման շրջանակներում՝ բոլոր ծախսերի և եկամուտների տարանջիկ կենտրոնացումը մեկ միասնական հաշվեհամարի վրա՝ ավելի երաշխավորված և հաստատուն կդարձնի Կոնցեսիոն ծրագրի իրագործումը, ինչպես նաև՝ հետագայում կհեշտացնի Կոնցեսիոն ծրագրի արդյունավետության և Կողմերի միջև եղած ֆինանսական փոխհարաբերությունների հաշվարկը:

5. Պատվիրակվող ծառայությունը և Վճարի դրույքաչափը.

5.1. Կոնցեսիոն ծրագրի շրջանակներում, Համայնքի կողմից, Օպերատորին՝ պատվիրակվող ծառայություն է հանդիսանում՝

_____ /ծառայության անվանումը/.

5.2. Պատվիրակվող ծառայության դիմաց գանձվող Վճարի դրույքաչափը, Պայմանագիրն ստորագրելու պահին, կազմում է՝ _____ /Վճարի միավորը և ետրման/ դրամ, որը դրված է Կոնցեսիոն ծրագրի, մասնավորապես՝ Բիզնես - Պլանի հաշվարկային հիմքում:

5.3. Պատվիրակվող ծառայության դիմաց գանձվող Վճարի դրույքաչափը կարող է փոփոխվել՝ ազգային դրամական միավորի գնողունակության անկման դեպքում, սակայն չի կարող լինել ավելին, քան հետևյալ հարաբերակցությունը.

Տոկոսային Գործակիցը Հիմա = Տոկոսային Գործակիցին ապագայում, որտեղ՝

Տոկոսային գործակիցը = Պատվիրակվող ծառայության մեկ միավորի դիմաց գանձվող Վճարը՝ բաժանած Օրենսդրորեն սահմանված նվազագույն աշխատավարձին, իսկ՝

Տոկոսային Գործակիցը Հիմա = Պատվիրակվող ծառայության վերջին 3 /երեք/ տարիներին, մեկ միավորի համար գործող Վճարի՝ միջին թվաբանականին:

Եթե Համայնքի տարածքում, մինչև այդ, չի տրամադրվել Պատվիրակվող ծառայությունը, ապա հաշվարկների հիմքում դրվող Վճարի ներկա դրույքաչափը որոշում է՝ Շնորհատուին աշխարհագրորեն մոտ գտնվող, կամ՝ Շնորհատուի գտնվելու Մարզի՝ ցանկացած 5 համայնքներում գործող Վճարի դրույքաչափերի միջինացմամբ, որտեղ բնակչությանը տրամադրվում է այդ /պատվիրակման ենթակա/ ծառայությունը:

5.4 Արգելվում է լրացուցիչ և/կամ թաքնված վճարների գանձումը՝ Պատվիրակված ծառայության մատուցման, կամ դրա հետ ուղղակիորեն կամ անուղղակիորեն փոխկապակցված ծառայությունների մատուցման՝ դիմաց:

6. Պայմանագրի ժամկետները, Օպերատորի կողմից՝ Կոնցեսիոն օբյեկտի կայացումը, կառավարումը և փոխանցումը Շնորհատուին.

6.1. Կոնցեսիոն ծրագրի իրականացման ժամկետը, ներառյալ Ներդրումային և Ծախսաձածկման փուլերը, սահմանվում է _____ տարի և _____ ամիս: Կոնցեսիոն ծրագրի սկիզբ է համարվում Պայմանագրի ստորագրման օրը, իսկ ավարտ՝ _____ թ. _____/ամիս, ամսաթիվ/:

6.2. Կոնցեսիոն ծրագրի Ներդրումային փուլի սկիզբ է համարվում Պայմանագրի ստորագրման օրը, իսկ ավարտ է համարվում Շնորհատուի կողմից, Ներդրումային օբյեկտի պատրաստ լինելու հետ կապված և կատարված աշխատանքների ընդունման ակտի ստորագրման օրը: Ծախսաձածկման փուլի սկիզբ է համարվում Ներդրումային փուլի ավարտի օրվան հաջորդող օրը:

6.3. Օպերատորը, Ծախսաձածկման փուլի ընթացքում, Կոնցեսիոն օբյեկտի գործառնական գործունեության միջոցով /և միանձնյա կերպով/, Հայմայնքի տարածքում իրականացնում է իրեն Պատվիրակված ծառայության որակյալ տրամադրումը՝ Պայմանագրում նշված պայմաններով:

6.4. Եթե Կոնցեսիոն ծրագիրը բաղկացած է առանձին և ինքնուրույն գործառնական հատկանիշներ ունեցող մասերից, որոնք, Կոնցեսիոն ծրագրի շրջանակներում, ունեն սեփական ներքին և ավտոնոմ՝ ներդրումային և ծախսաձածկման փուլեր, ինչպես նաև՝ իրականացման տարբեր ժամկետներ, ապա Կոնցեսիոն ծրագրի Ծախսաձածկման փուլի ավարտ է համարվում սույն կետում նշված՝ առանձին և ինքնուրույն գործառնական հատկանիշներ ունեցող մասերից՝ վերջինի ծախսաձածկման փուլի ավարտը, Կոնցեսիոն ծրագրի շրջանակներում:

Կոնցեսիոն ծրագրի առանձին և ինքնուրույն գործառնական հատկանիշներ ունեցող մասերի Ներդրումային փուլերի սկսման միջև եղած ժամկետային տարբերությունները չեն կարող լինել ավելին, քան 1 /մեկ/ տարին, իսկ ավարտը՝ ավելին, քան՝ Պայմանագրի գործունեության ժամկետը:

6.5. Կոնցեսիոն ծրագրի ժամկետների փոփոխությունը, ինչպես նաև նոր ժամկետների սահմանումը՝ տեղի է ունենում Կողմերի համաձայնությամբ, Պայմանագրին կից և Պայմանագրի անբաժանելի մասը համարվող՝ լրացուցիչ իրավաբանական ակտերի /լրացուցիչ համաձայնագրեր, ակտեր, արձանագրություններ և այլն/ ստորագրման տեսքով:

6.6. Կոնցեսիոն ծրագրի ժամկետը չի կարող փոփոխվել ավելին, քան Կոնցեսիոն ծրագրի, մասնավորապես՝ Պայմանագրում արձանագրված ընդհանուր ժամկետի 25 /քսանհինգ/ տոկոսը, նույնիսկ եթե Օպերատորն, այդ ընթացքում, չի վերադարձրել իր ներդրումները:

6.7. Կոնցեսիոն ծրագրի ավարտից հետո՝ 3 /երեք/ ամսյա ժամկետում՝ Օպերատորն, անհատույց կերպով, անվերադարձ, սեփականության իրավունքով, Պատվիրակված ծառայության հետագա լիարժեք տրամադրման համար անհրաժեշտ և սարքին տեխնիկական և ֆունկցիոնալ վիճակում, Համայնքին է փոխանցում Կոնցեսիոն օբյեկտն ամբողջությամբ, ներառյալ՝ բոլոր ուղղակի և անուղղակի ենթակառուցվածքները և բոլոր այն ակտիվները, որոնք ընդգրկված են եղել Կոնցեսիոն ծրագրում:

Կոնցեսիոն ծրագրի ավարտից հետո՝ Կոնցեսիոն օբյեկտն անցնում է /վերադառնում է/ Համայնքի կառավարման տակ և վերջնականապես դառնում նրա սեփականությունը: Փոխանցումը կատարվում է համապատասխան արձանագրությամբ՝ հաշվապահական, գույքագրման և փոխանցման ակտերի միջոցով, ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրով սահմանված կարգով:

6.8. Օպերատորը պարտավորվում է՝ Կոնցեսիոն օբյեկտը Շնորհատուին փոխանցելուց 1 /մեկ/ տարի առաջ ընկած ժամանակահատվածում, անվճար ուսուցանել և աշխատանքային ու մասնագիտական խորը պրակտիկա ապահովել՝ Շնորհատուի կողմից լիազորված անձանց:

6.9. Օպերատորի կողմից՝ կոնցեսիոն օբյեկտի ամբողջական և վերջնական կերպով Շնորհատուին փոխանցելու օրվանից հետո ընկած 4 /չորս/- ամսյա ժամանակահատվածում՝ Շնորհատուն պարտավոր է Օպերատորին տրամադրել փաստաթուղթ այն մասին, որ ինքը չունի Կոնցեսիոն օբյեկտի տեխնիկական և գործառնական վիճակին վերաբերվող էական դիտողություններ, կամ՝ գրավոր կերպով, Օպերատորին ծանուցել դրանց առկայության մասին: Էական են համարվում Կոնցեսիոն օբյեկտին և դրա գործունեությանը վերաբերվող այն դիտողությունները, որոնք վերաբերվում են Կոնցեսիոն օբյեկտի արդյունավետության ավելի քան 10 /տաս/ տոկոսի կորստին՝ սկսած Շնորհատուի կողմից դրա՝ որպես սեփականություն ընդունման օրվանից:

6.10. Շնորհատուի էական դիտողությունների հետ համաձայնվելու դեպքում՝ Օպերատորը, սեփական միջոցներով՝ շտկում է թերությունները: Միաժամանակ, թերությունների և Շնորհատուի

Էական դիտողությունների առարկա հանդիսացող խնդիրների շտկման վրա, Օպերատորի կողմից, չի կարող ծախսվել ավելին, քան Կոնցեսիոն ծրագրի իրականացման ընթացքում, Օպերատորի կողմից կատարված ընդհանուր ծախսերի /կապիտալ և գործառնական/ և ստացված եկամուտների դրական տարբերության 50 /հիսուն/ տոկոսը, իսկ նշված չափանիշների բացասական հաշվեկշռի դեպքում՝ Օպերատորը չի կարող լրացուցիչ ծախսել Կոնցեսիոն ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի /կապիտալ և գործառնական/ 5 /հինգ/ տոկոսը գերազանցող գումար:

7. Կոնցեսիոն օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքը

7.1. Կոնցեսիոն ծրագրի իրականացման ողջ ընթացքում՝ Կոնցեսիոն օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքը պատկանում է Շնորհատուին՝ բացառությամբ Օպերատորի կողմից կատարված ներդրումների ընթացքում ծագած /ավելացված/ բաժանելի գույքի: Կոնցեսիոն ծրագրի ավարտից հետո՝ Կոնցեսիոն օբյեկտի և դրա բաղկացուցիչ մասը կազմող ողջ գույքի նկատմամբ եղած սեփականության բոլոր իրավունքները փոխանցվում են Շնորհատուին:

7.2. Եթե Կոնցեսիոն ծրագրի շրջանակներում, ցանկացած պատճառով, չի սկսվել Ծախսաձածկման փուլը, կամ այն /Ծախսաձածկման փուլը/ ընդհատվել է վաղօրոք, բայց ոչ շուտ, քան Կոնցեսիոն ծրագրի գործունեության ժամկետի 75 /յոթանասուներեք/ տոկոսը կազմող ժամկետում, ապա Օպերատորը պահպանում է սեփականության իրավունքը՝ սեփական ներդրումների հաշվին ծագած /ավելացված/ բաժանելի գույքի նկատմամբ և կարող է այն կորզել՝ անարգել կերպով: Եթե Ծախսաձածկման փուլն ընդհատվել է Կողմերից մեկի նախաձեռնությամբ, իսկ մյուս կողմն այդ նախաձեռնության մեջ տեսնում է իր շահերի ոտնահարում, կամ՝ շահադիտական դիտավորություն, ապա ներդրումների հաշվին ծագած /ավելացված/ գույքի սեփականության իրավունքի հարցը որոշվում է դատական գործընթացի իրականացման արդյունքում:

8. Պայմանագրի գործողության ժամկետը, դադարեցումը և ավարտը.

8.1. Պայմանագրի դադարեցումը և/կամ ավարտը՝ Կոնցեսիոն ծրագրի դադարեցման և/կամ ավարտի հետ՝ նույնական են:

8.2. Կոնցեսիոն ծրագիրը կարող է դադարեցվել ինչպես Կողմերից յուրաքանչյուրի միակողմանի նախաձեռնությամբ, այնպես էլ՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

8.3. Պայմանագրի կողմը իրավունք ունի միակողմանի դադարեցնելու այն՝ ելնելով հետևյալ հիմքերից.

8.3.1. Մյուս Կողմը, Կոնցեսիոն ծրագրի իրականացման շրջանակներում, թույլ է տվել բազմակի այնպիսի խախտումներ և/կամ Կոնցեսիոն ծրագրի չափորոշիչներից այնպիսի շեղումներ, որոնք էականորեն վտանգում են Կոնցեսիոն ծրագրի արդյունավետությունը և/կամ իրագործումը;

8.3.2. Մյուս Կողմը, Կոնցեսիոն ծրագրի շրջանակներում, սեփական պարտավորությունները կատարում է ոչ պատշաճ կերպով, ինչն էականորեն վտանգում է Կոնցեսիոն ծրագրի ներկա և/կամ ապագա արդյունավետությունը և/կամ՝ իրագործումը;

8.3.3. Սեփական նախախաձեռնությամբ, եթե ի հայտ են եկել այնպիսի էական պատճառներ և հանգամանքներ, որոնք տնտեսապես անիմաստ, կամ՝ ֆիզիկապես անհնարին են դարձնում Կոնցեսիոն ծրագրի հետագա իրագործումը:

8.3.4. Օրենսդրության փոփոխությունների, պետական մարմինների կողմից ընդունված այնպիսի որոշումների պատճառով, որոնք անհնարին են դարձնում Կոնցեսիոն ծրագրի հետագա իրագործումը, և/կամ՝ էականորեն վտանգում են դրա արդյունավետությունը:

8.3.5. Կողմերի կամքից և գործողությունների անկախ ծագած այնպիսի հանգամանքների պատճառով, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրի հետագա կատարումը /Ֆորս – Մաժոր/:

8.3.6. Պայմանագիրը կարող է դադարեցվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ ցանկացած պատճառով:

8.3.7. Պայմանագրի վաղաժամկետ դադարեցումը Կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ պետք է լինի պատճառաբանված, հիմանավորված, ինչի մասին նախաձեռնող Կողմը պարտավոր է պատշաճ կերպով, ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով, ծանուցել մյուս Կողմին:

8.3.8. Կողմերն ընդունում են, որ Պայմանագրի վաղաժամկետ դադարեցումը ծայրահեղ և ոչ ցանկալի քայլ է և հաստատում են այն, որ Կոնցեսիոն ծրագրի սահմաններում առաջացած անհամաձայնությունները և խախտումները պետք է լուծվեն բանակցությունների, ծանուցումների և նախագգուշացումների, ինչպես նաև՝ խախտումների շտկման համար՝ անհրաժեշտ ժամանակի տրամադրման միջոցով, որը, սակայն, էականորեն չպետք է ազդի Կոնցեսիոն ծրագրի՝ արդյունավետության և իրագործման ժամկետների վրա:

8.3.9. Կողմերն ընդունում են, որ Պայմանագրի վաղաժամկետ դադարեցումը՝ Պայմանագրի 8.3.1.; 8.3.2; 8.3.3 ենթակետերով նախատեսված հիմքերով, չի կարող տեղի ունենալ առանց Պայմանագրի 8.3.7 և 8.3.8. Կետերով նախատեսված գործընթացների նախորդիվ իրականացման:

8.3.10. Պայմանագրի վաղօրոք դադարեցման դեպքում՝ Կողմերն ստորագրում են արձանագրություն, որտեղ նշվում են Կողմերի դիրքորոշումը՝ կապված Պայմանագրի վաղօրոք դադարեցման հետ, ինչպես նաև պարզաբանվում են գույքային, իրավաբանական և հաշվապահական փոխհարաբերությունները:

8.4. Կոնցեսիոն ծրագրի ավարտը և Պայմանագրի գործունեության ավարտը.

8.4.1. Կոնցեսիոն ծրագրի իրականացման ավարտը նշանակում է, որ Կողմերն ամբողջությամբ կատարել են իրենց պարտավորությունները միմյանց նկատմամբ՝ Պայմանագրի և Բիզնես – պլանի շրջանակներում:

8.4.2. Կոնցեսիոն ծրագիրը, այդ թվում և Պայմանագիրը՝ համարվում են ավարտված այն պահից, երբ ամբողջապես ավարտվել են իրար հաջորդող հետևյալ փուլերը, գործընթացներն ու ժամկետները.

ա/ Ներդրումային փուլը;

բ/ Ծախսաձածկման փուլը;

գ/ Օպերատորի կողմից, Պայմանագրում և Բիզնես – պլանում նշված չափորոշիչներով Պատվիրակված ծառայությունը մատուցելու ունակ՝ Կոնցեսիոն օբյեկտի ամբողջական և վերջնական կայացումը;

դ/ Օպերատորի կողմից, Պայմանագրում և Բիզնես – պլանում նշված չափորոշիչներով Պատվիրակված ծառայությունը մատուցելու ունակ, ամբողջապես և վերջնական կերպով կայացած՝ Կոնցեսիոն օբյեկտի ամբողջական փոխանցումը Շնորհատուին;

ե/ Օպերատորի կողմից՝ Կոնցեսիոն օբյեկտի ամբողջական և վերջնական կերպով Շնորհատուին փոխանցման օրվանից հետո ընկած 4 /չորս/ - ամսյա ժամանակահատվածը, որի ընթացքում, Շնորհատուի կողմից չեն ստացվել Կոնցեսիոն օբյեկտի տեխնիկական և գործառնական վիճակին վերաբերվող էական դիտողություններ, կամ՝ Շնորհատուն ստորագրել է փաստաթուղթ՝ դրանց բացակայության մասին:

Եթե 4 /չորս/ - ամսյա ժամկետում Շնորհատուն չի տրամադրում նման փաստաթուղթ, կամ՝ գրավոր կերպով չի տեղեկացնում էական համարվող դիտողությունների մասին Օպերատորին, ապա Պայմանագրի գործունեությունը և Կոնցեսիոն ծրագիրը համարվում են պաշտոնապես ավարտված:

9. Կոնցեսիոն Ծրագրի իրականացման շրջանակներում՝ Օպերատորի կողմից Շնորհատունին վճարվող գումարը /վարձավճարը/.

Շնորհատուի կողմից իր կառավարմանը տրամադրվող ակտիվների և իրավունքների դիմաց, Օպերատորը՝ Շնորհատուին, կանխիկ ֆինանսական միջոցների տեսքով, յուրաքանչյուր ամսվա ավարտից հետո՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում, վճարում է Կոնցեսիոն վարձավճար /Ռոյալթի/:

Կոնցեսիոն ամսեկան վարձավճարի չափը կազմում է _____ դրամ:

10. Պայմանագրի գաղտնիությունը. Տվյալների և ինֆորմացիայի պաշտպանությունը.

10.1. Կողմերն ընունում են, որ Կոնցեսիոն ծրագրում, մասնավորապես՝ Պայմանագրում և Բիզնես – պլանում տեղ գտած դրույթները, չափորոշիչներն ու տվյալները կրում են փակ և մասնավոր բնույթ և ենթակա չեն հրապրակման՝ առանց Կողմերի նախնական գրավոր համաձայնությամբ, բացառությամբ՝ ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

10.2. Կողմերը պարտավորվում են, լրացուցիչ արձանագրությամբ, սահմանազատել, թե որ տվյալներն ու Կոնցեսիոն ծրագրին վերաբերվող որ դրույթներն են ենթակա հրապարակման հասարակայնության և/կամ Համայնքի անդամների համար և, որոնք՝ ոչ:

11. Վեճերի լուծման կարգը

Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են Կողմերի բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ վեճերի լուծումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

12. Կոնցեսիոն ծրագրի պետական գրանցումը

12.1. Կոնցեսիոն ծրագիրը, այդ թվում նաև՝ Պայմանագիրը և Բիզնես – պլանը, ենթակա են գրանցման՝ պետական լիազորված մարմնի կողմից, Պայմանագրի կնքումից հետո, մեկամսյա ժամկետում:

12.2. Կողմերը պարտավորվում են՝ նշանակելու լիազորված անձանց, Պայմանագրի կնքումից հետո, մեկամսյա ժամանակահատվածում, Կոնցեսիոն ծրագրի պետական գրանցումը կազմակերպելու և ապահովելու նպատակով:

13. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /Ֆորս-Մաժոր/

Սույն Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և

որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայ- տարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում, առկա իրավիճակն այդպիսին գնահատող Կողմը, 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում, պարտավոր է ծանուցել մյուս կողմին՝ այդ մասին: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել Համաձայնագիրը, չեղյալ համարել Կոնցեսիոն ծրագրի գործունեությունը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

14. Եզրափակիչ դրույթներ

14.1. Սույն Պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի կողմից: Սույն Պայմանագրին կից բոլոր տիպի հավելվածները, այդ թվում և Կոնցեսիոն ծրագրի մաս կազմող Բիզնես - պլանը՝ դրա անբաժանելի մասն են:

14.2. Պայմանագրում նշված դրույթներն իրագործելիս և ծագող վեճերը լուծելիս՝ կողմերն առաջնորդվում են ՀՀ օրենսդրությամբ:

14.3. Սույն Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

15. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պայմանագրի ուղեցույց

Կոնցեսիոն պայմանագրերը կնքվում են պետական սեփականություն հանդիսացող և սոցիալ – տնտեսական մեծ նշանակություն ունեցող՝ օբյեկտների, պրակտիկ գործառնություն իրականացնող կառույցների և առանձնահատուկ իրավունքների նկատմամբ, որոնց սեփականատերը չի կարող փոփոխվել: Սա նշանակում է, որ Կոնցեսիոն պայմանագրի ավարտից /կամ՝ ընդհատումից/ հետո՝ վերը նշված ակտիվներն ու իրավունքները վերադարձվում են Համայնքին, իսկ պետությունը՝ ի դեմս Համայնքի, ոչ մի պայմանով չի կարող կորցնել սեփականության իրավունքները:

Սույն պայմանագիրն ունի տիպային բնույթ և կարող է լրացվել նոր դրույթներով՝ կախված կոնցեսիոն ծրագրի առանձնահատկություններից և կողմերի պայմանավորվածություններից, իսկ որոշ դրույթներ՝ կարող են հանվել:

Մակայն, Կոնցեսիոն պայմանագիրը չի կարող փոփոխվել մի քանի հիմնարար և Պայմանագրի էությունը կազմող մասերով.

ա/ Կոնցեսիոն պայմանագրի հիմքում դրված է այն գաղափարը, կառավարման և ներդրումների օբյեկտը գտնվում է պատրաստի - գործառնական վիճակում, կամ՝ մոտ է դրան և Օպերատորը պարտավորվում է միայն լավ կառավարել այն, ինչպես նաև՝ կատարել օբյեկտի արդյունավետությունը մեծացնող բարելավումներ և ներդրումներ;

բ/ Օպերատորն իրականացնում է այնպիսի գործունեություն և կատարում է այնպիսի ներդրումներ, որոնց արդյունքում հնարավոր կդառնա պատվիրակված ծառայության ավելի որակյալ և մատչելի տրամադրումը՝ Համայնքի տարածքում;

գ/ Օպերատորը գումարներ է ներդնում՝ դրանք, պատվիրակվող ծառայության միջոցով ստացվող եկամուտների միջոցով, վերադարձնելու և իր համար ընդունելի մակարդակի շահույթ ստանալու նպատակով:

դ/ Կոնցեսիոն ծրագիրն անժամկետ չէ և ունի ավարտ:

Կարևոր է նշել նաև, որ Կոնցեսիոն ծրագրի Ծախսաձածկման փուլը կարող է լինել դրա Ներդրումային փուլին զուգահեռ:

Համայնքն ամեն կերպ պետք է օժանդակի Օպերատորին՝ առավել արդյունավետ իրագործելու Կոնցեսիոն ծրագիրը: Մակայն եթե Կոնցեսիոն ծրագրում առկա հաշվարկները սխալ, կամ՝ անիրատես են եղել, որոնց պատճառով, նույնիսկ Ծախսաձածկման փուլի արդյունքով, Օպերատորը չի կարողացել վերադարձնել իր ներդրումները, ապա Համայնքը կարող է ընդառաջ գնալ Օպերատորին և երկարացնել վերջինիս կողմից պատվիրակված ծառայության տրամադրման ժամկետը՝ այդ մասին

կնքելով լրացուցիչ պայմանագիր: Այդ դեպքում՝ Կոնցեսիոն ծրագրի իրականացման ժամկետները նույնպես կարող են հետաձգվել:

Սակայն այդ գործընթացը չի կարող անվերջ լինել և պետք է սահմանափակվի Կոնցեսիոն ծրագրի ընդհանուր ժամկետի 25 /քսանհինգ/ տոկոս ժամկետին հավասար լրացուցիչ ժամկետով: Այս սահմանափակման առկայությունը բացատրվում է նրանով, որ Կոնցեսիոն օբյեկտի տեխնիկական և մաշվածության ցուցանիշները կարող են վատանալ և Համայնքը, արդյունքում, ետ կստանա ոչ արդյունավետ ակտիվ:

Եթե Օպերատորը, Կոնցեսիոն ծրագրի շրջանակներում, ներդրումների մի մասը կատարում է գույքով և/կամ սարքավորումներով, ապա նա պետք է պարտավոր լինի, մինչև Կոնցեսիոն ծրագրի սկիզբը և՛ Պայմանագրի ստորագրումը - Շնորհատուին ներկայացնել դրանց նկատմամբ սեփականության իր իրավունքները և սարքավորումների տեխնիկական վիճակն ու տեխնիկական հատկանիշները հաստատող՝ փաստաթղթերի բնօրինակները, ինչպես նաև՝ Կոնցեսիոն ծրագրի շրջանակներում, Օպերատորի կողմից ներդրվող սարքավորումների և նշանակալի գույքի անկախ գնահատման փաստաթղթերի բնօրինակները:

Այդ դեպքում՝ գնահատող կազմակերպությունը պետք է կամ համաձայնեցվի Շնորհատուի հետ, կամ՝ պետք է ընդունելի լինի Շնորհատուի կողմից: Գնահատումը պետք է արված լինի ոչ վաղ, քան՝ Կոնցեսիոն ծրագրի սկսելուց՝ երկու տարի առաջ: Հակառակ դեպքում՝ անհրաժեշտ է իրականացնել դրանց նոր գնահատում:

Այդ ամենի մասին՝ Պայմանագրում պետք է ավելացնել համապատասխան լրացուցիչ դրույթներ:

Բոլոր փաստաթղթերի պատճենները կցվում են Պայմանագրին, իսկ բնօրինակները, համապատասխան Ակտով, փոխանցվում են Շնորհատուին:

Կոնցեսիոն պայմանագրի կարևորագույն մասն են համարվում ֆինանսային երաշխիքներն ապահովող մեխանիզմներին վերաբերվող դրույթները: Անհրաժեշտ է միշտ պահպանել Պայմանագրի այդ դրույթները՝ անպատասխանատու, կամ՝ մասնակի վճարունակ գործընկերներից խուսափելու նպատակով, ինչպես նաև, հնարավորության դեպքում՝ ավելացնել երաշխիքների ապահովման և ստուգման նոր մեխանիզմներ և դրույթներ:

Բիզնես – պլանը, որպես կանոն, ներկայացվում է Օպերատորի կողմից: Շնորհատուն պարտավոր է մանրամասն վերլուծելու այն՝ Ներդրումային ծրագրի արդյունավետության և այլ չափորոշիչների գնահատման նպատակով: Շնորհատուն կարող է սեփական կարծիքը, ուղղումները, լրացումները, դիտողություններն ու չափանիշներն առաջարկել Բիզնես – պլանի համար: Բիզնես – պլանի վերջնական տարբերակը հաստատվում է Կողմերի քննարկման արդյունքում, որի չափանիշները դրվում են Պայմանագրի հիմքում:

Բիզնես – պլան կարող է կազմել և առաջարկել նաև Համայնքը, սեփական նախաձեռնությամբ և, Կոնցեսիոններ գտնելու նպատակով:

Կողմերին խորհուրդ է տրվում՝ ստորագրությամբ վավերացնել Պայմանագրի և դրա հավելվածների, ինչպես նաև՝ Բիզնես – պլանի բոլոր էջերը:

Կարևորագույն խնդիր է, որպեսզի Համայնքը և Օպերատորն ամբողջությամբ վերադարձնեն իրենց ներդրումները և ծախսերը, ինչի մասին, Պայմանագրում կան համապատասխան դրույթներ, սակայն կարելի է նաև՝ ավելացնել նորերը:

Վճռականորեն խորհուրդ չի տրվում, որ Համայնքը, Պայմանագրով, ներդրումների վերադարձելիության ֆինանսա-գույքային երաշխիքներ տա Օպերատորին:

Հավելված 6. Ներդրումային պայմանագիր առանց սեփականության իրավունքի փոխանցման

“ _____ / համայնքի անվանումը / ՀՄՄՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
/ Ներդրումային ծրագրի ամբողջական անվանումը / ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ”

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈՎՆՑ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ

Ք. _____ 20 թ.

_____, այսուհետև Պատվիրատու կամ՝ Կողմ 1, կամ՝ Համայնք, ի դեմս _____ / պաշտոն, Անուն, Ազգանուն /, որը գործում է _____ հիման վրա, մի կողմից, և _____ / պաշտոն, Անուն, Ազգանուն /, որը գործում է _____ հիման վրա, մյուս կողմից / այսուհետ՝ Կողմեր /, կնքեցին սույն պայմանագիրը / այսուհետև՝ Պայմանագիր / հետևյալի մասին.

1. Պայմանագրում առկա հասկացությունները.

Ներդրող. Անհատ ձեռներեց, կամ՝ իրավաբանական անձ, որը, սեփական միջոցներով իրականացնում է ներդրումներ և ֆինանսավորում է ներդրումային ծրագիրը՝ Համայնքի տարածքում և/կամ Համայնքի հետ կապ ունեցող այլ տարածքներում:

Պատվիրատու. Համայնքը՝ հանձինս իր ղեկավար մարմնի, ղեկավարի, կամ՝ լիազորված ֆիզիկական կամ իրավաբանական անձի:

Ներդրումային ծրագիր. Միջոցառումների և ներդրումների ամբողջական համակարգ, որը կարող է իրականացվել ինչպես գրոյական կետից, այնպես էլ՝ գործառական գործունեությունից դուրս գտնվող և/կամ գործառնական գործունեություն չիրականացնող ակտիվի /ակտիվների/ հիման վրա, և որի ավարտման արդյունքում՝ իրականացվում է Ներդրումային ծրագրով նախատեսված ծառայության տրամադրումը Համայնքի բնակիչներին՝ Ներդրողի Կողմից, Համայնքի համաձայնությամբ և Ներդրումային ծրագրի շրջանակներում և չափորոշիչներով: Ներդրումային ծրագիրը ներառում է Բիզնես – պլանը և Պայմանագիրը:

Բիզնես – պլան. Ներդրումային ծրագրի շրջանակներում և դրա իրականացման նպատակով կազմված, պարտադիր կատարման ենթակա՝ Ներդրողի գործողությունների և ֆինանսական հոսքերի հստակ քայլային և ժամանակացույցային փաստաթուղթ, որը հաստատվում է Կողմերի կողմից և դրվում է ներդրումային գործընթացի հիմքում:

Ներդրումային ծրագրի՝ ներդրումային փուլ /այսուհետ՝ Ներդրումային փուլ/. Ներդրողի կողմից՝ Պայմանագրով, Բիզնես – Պլանով նախատեսված ֆինանսական ներդրումների ամբողջական իրականացման ժամանակահատվածը, որի արդյունքում հնարավոր է դառնում ծառայության մատուցումը Համայնքի բնակիչներին:

Ներդրումային ծրագրի՝ ծախսաձածկման փուլ /այսուհետ՝ Ծախսաձածկման փուլ/. Ներդրումային հատվածի ավարտից հետո՝ Պայմանագրով և Բիզնես – պլանով նախատեսված այն ժամանակահատվածը, որը տրվում է Ներդրողին՝ Ներդրումային ծրագրի շրջանակներում արված սեփական ներդրումները վերադարձնելու և շահույթ ապահովելու համար:

Ներդրումային օբյեկտ. Այն ակտիվը, որի կայացման համար և որի մեջ՝ Ներդրողը կատարում է իր ներդրումները – հետագայում, գործառնական գործունեություն իրականացնելու՝ Ծախսաձածկման փուլում, դրական արդյունք ստանալու նպատակով - ֆինանսական հոսքերի տեսքով: Պայմանագրով և Բիզնես - Պլանով՝ Ներդրումային օբյեկտ է հանդիսանում _____ / օբյեկտի ճշգրիտ անվանումը և գործառնական նկարագրությունը /,

_____ համայնքի տարածքում:

Ներդրումային օբյեկտի կառավարում. Ներդրումային ծրագրի Ծախսաձածկային հատվածի ընթացքում՝ Ներդրումային օբյեկտի գործառնական գործունեության և դրա հետևանքով առաջացած ֆինանսական մուտքերի կառավարման փուլը:

Ներդրողին պատվիրակվող ծառայություն /այսուհետ՝ Պատվիրակվող ծառայություն/. Համայնքի կողմից, Ներդրումային ծրագրի շրջանակներում, Ներդրողին տրված պատվերն է՝

Համայնքի տարածքում, Ներդրումային օբյեկտի գործառնությունների միջոցով, Ծախսաձածկման փուլում, Ներդրումային ծրագրով սահմանված ժամկետներում, տրամադրելու Համայնքի իրավասության տակ գտվող կոնկրետ ծառայությունը:

Պատվիրակվող ծառայության դիմաց գանձվող վճար /այսուհետ՝ Վճար/. Վճար, որի չափը կամ՝ հաշվարկման և/կամ փոփոխման մեխանիզմը՝ հաստատվում է ներդրումային ծրագրի սահմաններում և հիմք է հանդիսանում Կողմերի միջև, Ներդրումային ծրագրի շրջանակներում, ֆինանսական հաշվարկների և փոխհարաբերությունների համար:

Ներդրումային ծրագրի ավարտ. Պայմանագրով և Բիզնես – պլանով նախատեսված բոլոր գործառնությունների ավարտը: Իր մեջ ամբողջապես ներառում է Ներդրումային փուլի և Ծախսաձածկման փուլի ավարտը

2. Պայմանագրի Առարկան

2.1. Պայմանագրի առարկա է հանդիսանում ներդրումային գործունեությունը, որն իրականացվում է Համայնքի վարչական տարածքում և/կամ Համայնքի վարչական տարածքի հետ կապ ունեցող այլ տարածքներում, Ներդրումային ծրագրի շրջանակներում և, որի նպատակն է՝ Համայնքի կողմից հանրային ծառայությունների ավելի ամբողջական և/կամ ավելի արդյունավետ տրամադրման կազմակերպումը՝ Ներդրողի միջոցների հաշվին և Ներդրողի միջոցով:

2.2. Ներդրումային ծրագիրն իրենից ներկայացնում է

_____ /ներդրումային ծրագրի անվանումը, ճշգրիտ նկարագրությունը/, որի անբաժանելի մասն են կազմում սույն Պայմանագիրը և կից Բիզնես – պլանը, համաձայն որոնց՝ Ներդրողը, Ներդրումային ծրագրի շրջանակներում, ինչպես գրոյական կետից, այնպես էլ՝ գործառական գործունեությունից դուրս գտնվող և/կամ գործառնական գործունեություն չիրականացնող ակտիվի /ակտիվների/ հիման վրա, իրականացնում է _____ /չափը/ դրամի կապիտալ նպատակային ներդրումներ՝ _____ /համայնքի անվանումը/ համայնքի տարածքում, _____ /ժամկետը/ ժամկետում, Պայմանագրի, Բիզնես - պլանի շրջանակներում և Պայմանագրում նշված պայմանների և Բիզնես – պլանում նշված չափորոշիչների համաձայն: Կողմերը պարտավորվում են համատեղ ջանքերով ապահովել Ներդրումային ծրագրի լիարժեք իրականացումը՝ համաձայն Պայմանագրի պայմանների և Բիզնես – պլանով նախատեսված չափորոշիչների:

2.3. Համաձայն Պայմանագրի՝ Ներդրումային ծրագրի Ներդրումային փուլի ավարտից հետո, Ներդրողն իրավունք է ստանում _____ /ժամկետը/ տարի ժամկետով, անհատույց հիմունքներով, կառավարել Ներդրումային օբյեկտը, բնակչությանը տրամադրել իրեն պատվիրակած՝ _____ /ծառայության անվանումը/ ծառայությունը, դրա դիմաց գանձել Վճար՝ Պայմանագրով հաստատված չափով և կարգով:

3. Կողմերի պարտավորությունները և իրավունքները

3.1. Պատվիրատուն պարտավորվում է.

3.1.1. Ներդրողին տրամադրել՝ բաց, ամբողջական և իրական տեղեկատվություն՝ Ներդրումային ծրագրի քննարկման և իրականացման բոլոր փուլերում՝ Ներդրողին հետաքրքրող բոլոր հարցերի վերաբերյալ:

3.1.2. Իրեն հայտնի՝ ռիսկերի, խոչընդոտների և արգելքների մասին, որոնք կարող են խանգարել Ներդրումային ծրագրի իրագործմանը, կամ՝ իջեցնել դրա արդյունավետությունը, նախօրոք, և/կամ այդ մասին իրեն հայտնի դառնալու պահից՝ զգուշացնել և տեղեկացնել Ներդրողին:

3.1.3. Ներդրումային ծրագրի շրջանակներում՝ ամեն կերպ աջակցել Ներդրողին Ներդրումային ծրագրի՝ պատշաճ մակարդակով իրագործման համար:

3.1.4. Ներդրողին, վարձակալական հիմունքներով, Ներդրումային ծրագրի իրականացման շրջանակներում, տրամադրել _____ ք.մ. հողատարածք /տարածք/ _____ տարի ժամկետով, ամսական՝ _____ դրամ ք.մ. դիմաց՝ սակագնով: Հողամասի կադաստրային կոդը՝ _____ /տարածքի կադաստրային կոդը _____ /:

3.1.5. Իրականացնել՝ Ներդրումային ծրագրի շրջանակներում և Համայնքի իրավասությանը վերաբերվող՝ բոլոր փաստաթղթերի արագ և պատշաճ պատրաստումը և ձևակերպումը:

3.1.6. Հինգ աշխատանքային օրվա ընթացքում, գրավոր կերպով, պատասխանել Ներդրողի բոլոր գրություններին, առաջարկություններին, բողոքներին և նախագուշացումներին:

3.1.7. Անշեղորեն պահպանել Ներդրումային ծրագրի պայմաններն ու չափորոշիչները:

3.1.8. Ներդրումային փուլի ավարտից հետո, առավելագույնս մեկամյա ժամկետում, գրավոր կերպով ընդունել Ներդրողի կողմից կատարած աշխատանքները և արձանագրել Ներդրման օբյեկտի պատրաստի վիճակը՝ Ներդրողի կողմից Պատվիրակված ծառայությունը տրամադրելու համար, կամ՝ հիմնավորված կերպով մերժել Ներդրումների օբյեկտի ընդունումը – Ներդրողին մանրամասն և գրավոր կերպով ներկայացնելով բոլոր առարկություններն ու մերժման պատճառները:

3.1.9. Ներդրումային ծրագրի Ներդրման փուլի ավարտից և կատարված աշխատանքների ընդունումից հետո՝ Ներդրողի կառավարմանը հանձնել՝ Պատվիրակվող ծառայության մատուցման բոլոր իրավունքները Համայնքի տարածքում, Պայմանագրում նշված պայմաններով:

3.2. Պատվիրատուն իրավունք ունի.

3.2.1. Ներդրողից ստանալ՝ բաց, ամբողջական և իրական տեղեկատվություն՝ Ներդրումային ծրագրի վերաբերյալ՝ դրա քննարկման և իրականացման բոլոր փուլերում, իրեն հետաքրքրող բոլոր հարցերի վերաբերյալ:

3.2.2. Վերահսկելու Ներդրողի կողմից իրականացվող քայլերի համապատասխանությունը՝ Ներդրումային ծրագրին:

3.2.3. Ներկայացնելու առաջարկներ, դիտողություններ, կատարելու նախագուշացումներ և ծանուցումներ, եթե Ներդրումային ծրագրի իրականացումը, Ներդրողի գործունեության կամ անգործության, ինչպես նաև այլ հանգամանքների պատճառով՝ սկսել է էականորեն շեղվել իր չափորոշիչներից - առանց կողմերի նախնական գրավոր համաձայնության:

3.2.4. Կանգնեցնելու Ներդրումային ծրագրի իրագործումը, եթե Ներդրողի կողմից, շարունակական կերպով սկսել են խախտվել Ներդրումային ծրագրի պայմանները և չափորոշիչները, իսկ նախագուշացումների արդյունքում՝ շեղումներն ու խախտումները չեն շտկվել:

3.3. Ներդրողը պարտավորվում է.

3.3.1. Պատվիրատուին տրամադրել բաց, ամբողջական և իրական տեղեկատվություն՝ Ներդրումային ծրագրի քննարկման և իրականացման բոլոր փուլերում, Պատվիրատուին հետաքրքրող բոլոր հարցերի վերաբերյալ:

3.3.2. Իրեն հայտնի՝ ռիսկերի, խոչընդոտների և արգելքների մասին, որոնք կարող են խանգարել Ներդրումային ծրագրի իրագործմանը, կամ՝ իջեցնել դրա արդյունավետությունը - նախօրոք, և/կամ այդ մասին իրեն հայտնի դառնալու պահից՝ գուշացնել և տեղեկացնել Պատվիրատուին:

3.3.3. Ներդրումային ծրագրի շրջանակներում՝ ամեն կերպ աջակցել Պատվիրատուին՝ Ներդրումային ծրագրի պատշաճ մակարդակով իրագործման համար:

3.3.4. Ներդրումային ծրագրի Ներդրումային փուլում, _____ ժամկետում, իրականացնել _____ դրամի ֆինանսական ներդրումներ՝ Ներդրումային օբյեկտում:

3.3.5. Ներդրումային ծրագրի սկսման պահից՝ _____ ժամկետում, Ներդրումային ծրագրի պայմանների և չափորոշիչների պահպանմամբ, ամբողջապես ավարտել Ներդրումային փուլը և, Ներդրումների օբյեկտը՝ Պատվիրակվող ծառայության լիարժեք տրամադրման համար պատրաստի, որակյալ և ամբողջական վիճակում՝ ներկայացնել Պատվիրատուին – Ներդրումային փուլի արդյունքում կատարված աշխատանքների ընդունման նպատակով:

3.3.6. Անշեղորեն պահպանել Ներդրումային ծրագրի շրջանակներում, Կողմերի կողմից հաստատված պայմաններն ու չափորոշիչները:

3.3.7. Հինգ աշխատանքային օրերի ընթացքում՝ գրավոր կերպով, պատասխանել Պատվիրատուի բոլոր գրություններին, առաջարկություններին, բողոքներին և նախագուշացումներին:

3.3.8. Ներդրումային օբյեկտի կայացումն ապահովել՝ Պայմանագրում նշված չափորոշիչներով և ժամկետներում, աշխատանքները կատարել բարձր որակով և առանց գործառական և ֆունկցիոնալ շեղումների:

3.3.9. Ներդրումային ծրագրի Ծախսաձածկման փուլում՝ Համայնքի և Համայնքի հետ առնչվող բնակելի վայրերի և տարածքների բնակչությանը մատուցել որակյալ և մատչելի ծառայություններ՝ Վճարի դրույքաչափի պահպանմամբ, առանց թաքնված և լրացուցիչ վճարների գանձման:

3.4. Ներդրողն իրավունք ունի.

3.4.1. Պատվիրատուից ստանալու բաց, ամբողջական և իրական տեղեկատվություն՝ Ներդրումային ծրագրի վերաբերյալ՝ դրա քննարկման և իրականացման բոլոր փուլերում, իրեն հետաքրքրող բոլոր հարցերի վերաբերյալ:

3.4.2. Ներկայացնելու առաջարկներ, դիտողություններ, կատարելու նախագուշացումներ և ծանուցումներ, եթե Պատվիրատուի գործունեության և/կամ անգործության, կամ այլ հանգամանքների պատճառով՝ Ներդրումային ծրագրի իրականացումը սկսել է էականորեն շեղվել իր չափորոշիչներից - առանց կողմերի նախնական գրավոր համաձայնության:

3.4.3. Կանգնեցնելու Ներդրումային ծրագրի իրականացումը, եթե Պատվիրատուի կողմից, շարունակական կերպով սկսել են խախտվել Ներդրումային ծրագրի պայմանները և չափորոշիչները, իսկ նախագուշացումների արդյունքում՝ Պատվիրատուի կողմից թույլ տրված շեղումներն ու խախտումները չեն շտկվել:

3.5. Կողմերը, Ներդրումային ծրագրի սահմաններում և պայմաններով՝ պարտավորվում են իրականացնել հետևյալ ներդրումները.

3.5.1. Պատվիրատուի ներդրումները.

ա/ Կանխիկ ֆինանսական միջոցներ և բանկային երաշխիքային գործիքներ. _____ դրամ /կանխիկ գումարի, կամ՝ երաշխիքային պարտավորությունների չափը/;

բ/ Գույք և այլ ակտիվներ. _____ /գույքի թվարկումը, մանրամասն նկարագրումը, հատկանիշների բացահայտումը, շուկայական արժեքի նշումը/:

գ/ Ծառայություններ տրամադրելու և/կամ ապահովելու պարտավորություններ _____ /պարտավորությունների մանրամասն նկարագրությունը և նպատակի շարադրումը/:

3.5.2. Ներդրողի ներդրումները.

ա/ Կանխիկ ֆինանսական միջոցներ և բանկային երաշխիքային գործիքներ. _____ դրամ /կանխիկ գումարի, կամ՝ երաշխիքային պարտավորությունների չափը/;

բ/ Գույք և այլ ակտիվներ. _____ /գույքի թվարկումը, մանրամասն նկարագրումը, հատկանիշների բացահայտումը, շուկայական արժեքի նշումը/:

գ/ Ծառայություններ տրամադրելու և/կամ ապահովելու պարտավորություններ _____ /պարտավորությունների մանրամասն նկարագրությունը և նպատակի շարադրումը/:

3.6. Կողմերի ներդրումները, Ներդրումային ծրագրի շրջանակներում, վերադարձվում են միաժամանակ, համաձայն Ծախսաձեռնարկի փուլի ժամանակացույցի և ունեն հավասար կարևորություն՝ այդ թվում և դրանց վերադարձելիությանը վերաբերվող հարցերում:

2. Ներդրողի վճարունակությունը հավաստող երաշխիքները.

2.1. Ներդրումային ծրագիրն սկսելուց առաջ Կողմերը բացում են բանկային համատեղ և նպատակային հաշվեհամար /այսուհետև՝ Համատեղ հաշվեհամար/, որտեղից ֆինանսական գործառնությունները կարող են իրականացվել միայն կողմերի համաձայնությամբ և Կողմերի լիազորված անձանց համատեղ հրահանգի դեպքում: Համատեղ հաշվեհամարը Կողմերը չեն կարող օգտագործել Ներդրումային ծրագրին չվերաբերվող՝ այլ գործարձառությունների իրականացման համար:

2.2. Ներդրողը, Ներդրումային ծրագիրն սկսելուց առնվազն երկու շաբաթ առաջ, պարտավոր է Ներդրումային փուլի համար անհրաժեշտ գումարների առնվազն 25 /քսանհինգ/ տոկոսը՝ _____ դրամ՝ կանխիկ դրամական միջոցների տեսքով, կենտրոնացնել Համատեղ հաշվեհամարում:

2.3. Ներդրողն իրավունք ունի, իր հայեցողությամբ, Պայմանագրի 3.5.2.ա/ կետում նշված կանխիկ գումարների փոխարեն, Պատվիրատուին ներկայացնելու ՀՀ տարածքում գործող բանկի կողմից տրված, կամ՝ հաստատված, Ներդրումային ծրագրի Ներդրումային փուլի ժամկետից ոչ պակաս ժամկետում գործող՝ բանկային ֆինանսական երաշխավորություն:

2.4. Պայմանագիրը ստորագրելու փաստով Կողմերը հաստատում են, որ Համատեղ հաշվեհամարը բացված է և ունի հետևյալ տվյալները.

_____ /Հաշվեհամար/

2.5. Գտնվելով բանկային Համատեղ հաշվեհամարի վրա՝ ֆինանսական միջոցները չեն դադարում լինել Ներդրողի սեփականությունը և այնտեղ գտնվող մնացորդն ամբողջությամբ՝ ներդրողին է փոխանցվում Ներդրումային ծրագրի դադարեցման և/կամ Ներդրումային փուլի ավարտից հետո, 5 /հինգ/ աշխատանքային օրվա ընթացքում:

2.6. Ծախսաձեռնարկի փուլում, Պատվիրակված ծառայության դիմաց գանձվող բոլոր վճարները ուղղվում են Համատեղ հաշվեհամար, որտեղից ներդրողը կատարում է բոլոր գործառնական ծախսերը, ինչպես նաև՝ անարգել կերպով, սեփական հայեցողությամբ, տնօրինում է ընթացիկ ծախսերի և եկամուտների, ամսվա կտրվածքով առաջացած՝ դրական տարբերության 70 /յոթանասուն/ տոկոսը:

2.7. Ներդրումային ծրագրի ավարտից հետո՝ Ներդրողը, անարգել կերպով, սեփական հայեցողությամբ, տնօրինում է Համատեղ հաշվեհամարում գտնվող և իր սեփականությունը հանդիսացող ֆինանսական միջոցները: Ներդրումային ծրագրի ավարտից հետո, 30 /երեսուն/ աշխատանքային օրվա ընթացքում, Համատեղ հաշվեհամարը պետք է փակվի՝ Կողմերի կողմից:

2.8. Կողմերն ընդունում են, որ Ներդրումային ծրագրի իրականացման շրջանակներում՝ բոլոր ծախսերի և եկամուտների տարանցիկ կենտրոնացումը մեկ միասնական հաշվեհամարի վրա՝ ավելի երաշխավորված և հաստատուն կդարձնի Ներդրումային ծրագրի իրագործումը, ինչպես նաև՝

հետագայում կհեշտացնի Ներդրումային ծրագրի արդյունավետության և Կողմերի միջև եղած ֆինանսական փոխհարաբերությունների հաշվարկը:

3. Պատվիրակվող ծառայությունը և Վճարի դրույքաչափը.

3.1. Ներդրումային ծրագրի շրջանակներում, Համայնքի կողմից՝ Ներդրողին պատվիրակվող ծառայություն է հանդիսանում՝

_____ /ծառայության անվանումը/.

3.2. Պատվիրակվող ծառայության դիմաց գանձվող Վճարի դրույքաչափը, Պայմանագիրը ստորագրելու պահին, կազմում է՝ _____ /Վճարի միավորը և նորման/ դրամ, որը դրված է Ներդրումային ծրագրի հաշվարկային հիմքում:

3.3. Պատվիրակվող ծառայության դիմաց գանձվող Վճարի դրույքաչափը կարող է փոփոխվել՝ ազգային դրամական միավորի գնողունակության անկման դեպքում, սակայն չի կարող լինել ավելին, քան հետևյալ հարաբերակցությունը.

Տոկոսային Գործակիցը Հիմա = Տոկոսային Գործակիցին ապագայում, որտեղ՝

Տոկոսային գործակիցը = Պատվիրակվող ծառայության մեկ միավորի դիմաց գանձվող Վճարը՝ բաժանած Օրենսդրորեն սահմանված նվազագույն աշխատավարձին, իսկ՝

Տոկոսային Գործակիցը Հիմա = Պատվիրակվող ծառայության վերջին 3 /երեք/ տարիներին, մեկ միավորի համար գործող Վճարի՝ միջին թվաբանականին:

Եթե Համայնքի տարածքում, մինչև այդ, չի տրամադրվել Պատվիրակվող ծառայությունը, ապա հաշվարկների հիմքում դրվող Վճարի ներկա դրույքաչափը որոշում է՝ Պատվիրատուին աշխարհագրորեն մոտ գտնվող, կամ՝ Պատվիրատուի գտնվելու Մարզի՝ ցանկացած 5 համայնքներում գործող Վճարի դրույքաչափերի միջինացմամբ, որտեղ բնակչությանը տրամադրվում է այդ /պատվիրակման ենթակա/ ծառայությունը:

3.4 Արգելվում է լրացուցիչ և/կամ թաքնված վճարների գանձումը՝ Պատվիրակված ծառայության մատուցման, կամ դրա հետ ուղղակիորեն կամ անուղղակիորեն փոխկապակցված ծառայությունների մատուցման՝ դիմաց:

4. Պայմանագրի ժամկետները, Ներդրողի կողմից՝ Ներդրումային օբյեկտի կայացումը և կառավարումը՝ Ներդրումային ծրագրի շրջանակներում.

4.1. Ներդրումային ծրագրի իրականացման ժամկետը, ներառյալ Ներդրումային և Ծախսաձածկման փուլերը, սահմանվում է _____ տարի և _____ ամիս: Ներդրումային ծրագրի սկիզբ է համարվում Պայմանագրի ստորագրման օրը, իսկ ավարտ՝ _____ թ. _____ /ամիս, ամսաթիվ/:

4.2. Ներդրումային ծրագրի Ներդրումային փուլի սկիզբ է համարվում Պայմանագրի ստորագրման օրը, իսկ ավարտ է համարվում՝ Պատվիրատուի կողմից, Ներդրումային օբյեկտի պատրաստ լինելու հետ կապված և կատարված աշխատանքների ընդունման ակտի ստորագրման օրը: Ծախսաձածկման փուլի սկիզբ է համարվում Ներդրումային փուլի ավարտի օրվան հաջորդող օրը:

4.3. Ներդրողը, Ծախսաձածկման փուլի ընթացքում, Ներդրումային օբյեկտի գործառնական գործունեության միջոցով /և միանձնյա կերպով/, Հայմայնքի տարածքում իրականացնում է իրեն Պատվիրակված ծառայության որակյալ տրամադրումը՝ Պայմանագրում նշված պայմաններով:

4.4. /Եթե/ Ներդրումային ծրագիրը բաղկացած է առանձին և ինքնուրույն գործառնական հատկանիշներ ունեցող մասերից, որոնք, Ներդրումային ծրագրի շրջանակներում, ունեն սեփական ներքին՝ ներդրումային և ծախսաձածկման փուլեր, ինչպես նաև՝ իրականացման տարբեր ժամկետներ, /ապա/ Ներդրումային ծրագրի Ծախսաձածկման փուլի ավարտ է համարվում սույն կետում նշված՝

առանձին և ինքնուրույն գործառնական հատկանիշներ ունեցող մասերից՝ վերջինի ծախսաձևով փուլի ավարտը, Ներդրումային ծրագրի շրջանակներում:

Ներդրումային ծրագրի առանձին և ինքնուրույն գործառնական հատկանիշներ ունեցող մասերի Ներդրումային փուլերի սկսման միջև եղած ժամկետային տարբերությունները չեն կարող լինել ավելին, քան 1 /մեկ/ տարին:

4.5. Ներդրումային ծրագրի ժամկետների փոփոխությունը, ինչպես նաև նոր ժամկետների սահմանումը՝ տեղի է ունենում Կողմերի համաձայնությամբ, Պայմանագրին կից Պայմանագրի անբաժանելի մասը համարվող՝ լրացուցիչ համաձայնագրերի ստորագրման տեսքով:

4.6. Ներդրումային ծրագրի ժամկետը չի կարող փոփոխվել ավելի, քան Ներդրումային ծրագրի, մասնավորապես՝ Պայմանագրում արձանագրված ընդհանուր ժամկետի 25 /քսանհինգ/ տոկոսը, նույնիսկ եթե Ներդրողն այդ ընթացքում չի վերադարձրել իր ներդրումները:

4.7. Եթե Պատվիրատուի կողմից, Ներդրումային ծրագրի իրականացման շրջանակներում, Ներդրողին արվում են էական բնույթի դիտողություններ, ապա այդ դիտողությունների հետ համաձայնվելու դեպքում՝ Ներդրողը, սեփական միջոցներով՝ շտկում է թերությունները: Միաժամանակ, թերությունների և Պատվիրատուի էական դիտողությունների առարկա հանդիսացող խնդիրների շտկման վրա, Ներդրողի կողմից, չի կարող ծախսվել ավելին, քան Ներդրումային ծրագրի իրականացման ընթացքում, Ներդրողի կողմից կատարված ծախսերի /կապիտալ և գործառնական/ և ստացված եկամուտների դրական տարբերության 50 /հիսուն/ տոկոսը, իսկ նշված չափանիշների բացասական հաշվեկշռի դեպքում՝ Ներդրողը չի կարող լրացուցիչ ծախսել ներդրումային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի /կապիտալ և գործառնական/ 5 /հինգ/ տոկոսը գերազանցող գումար:

4.8 Ներդրումային ծրագրի ավարտից հետո Ներդրումների օբյեկտը մնում է /դառնում է/ Ներդրողի սեփականությունը, ներառյալ՝ Պատվիրատուի կողմից, Ներդրումային ծրագրի շրջանակներում՝ ներդրված գույքը /բացառությամբ՝ ներդրված կանխիկ ֆինանսական միջոցների/ - պայմանով, սակայն, որ Ներդրողն ամբողջապես կատարել է Ներդրումային փուլին վերաբերվող իր ֆինանսական, տեխնիկական բնույթի պարտավորություններն ամբողջ ծավալով, իսկ Պատվիրատուի կողմից, Ներդրումային ծրագրի շրջանակներում՝ ներդրված գույքի շուկայական արժեքը չի գերազանցում Ներդրումային ծրագրի Ներդրումային փուլով նախատեսված և ամբողջապես իրականացված ներդրումների ծավալի 10 /տաս/ տոկոսը:

4.8.1. Եթե Պատվիրատուի կողմից, Ներդրումային ծրագրի շրջանակներում՝ ներդրված գույքի շուկայական արժեքը գերազանցում Ներդրումային ծրագրի Ներդրումային փուլով նախատեսված և ամբողջապես իրականացված ներդրումների ծավալի 10 /տաս/ տոկոսը, ապա Ներդրողը պետք է գնի Պատվիրատուի կողմից, Ներդրումային ծրագրի շրջանակներում, ներդրված գույքը՝ դրա շուկայական արժեքով: Այս դեպքում, Ներդրումային ծրագրի ավարտից հետո, 1 /մեկ/ տարվա ընթացքում, Պատվիրատուն, Ներդրողի նման ցանկության դեպքում, պարտավոր է վաճառել գույքը՝ Ներդրողին:

4.8.2. Եթե հողատարածքը, որի վրա տեղակայված է Ներդրումների օբյեկտը, Ներդրումային ծրագրի ավարտից հետո շարունակում է պատկանել Պատվիրատուին, ապա Ներդրողն առաջնային իրավունք ունի՝ Ներդրումային ծրագրի ավարտից հետո, 1 /մեկ/ տարվա ընթացքում, կադաստրային արժեքով, գնելու այն, իսկ Պատվիրատուն, Ներդրողի նման ցանկության դեպքում, պարտավոր է վաճառել հողատարածքը՝ Ներդրողին: Այս դեպքում՝ հողատարածքի արժեքի մեջ չեն կարող մտնել այն շինություններն ու գույքը, որոնք մինչև Ներդրումային ծրագրի սկիզբը հանդիսացել են Պատվիրատուի սեփականությունը:

4.8.3. Պատվիրատուի կողմից, Ներդրումային ծրագրի շրջանակներում, ներդրված կանխիկ դրամական միջոցները պարտադիր են վերադարձման Պատվիրատուին՝ Ներդրողի կողմից, Ներդրումային ծրագրի շրջանակներում, կամ Ներդրումային ծրագրի ավարտին:

4.8.4. Ներդրողը չի կարող համարվել Ներդրումային օբյեկտի սեփականատեր, իսկ Ներդրումային ծրագիրը չի կարող համարվել ավարտված, եթե Պատվիրատուն չի վերադարձրել սեփական, կանխիկ դրամով, իրականացված ներդրումները Ներդրումային ծրագրի մեջ՝ ամբողջությամբ, ներառյալ դրանց օգտագործման արժեքը: Պատվիրատուի կողմից, Ներդրումային ծրագրի շրջանակներում, որպես ներդրում կատարված կանխիկ դրամական միջոցների օգտագործման արժեքը սահմանվում է՝ դրանց վարկային տոկոսադրույքի չափով, եթե Պատվիրատուն, այդ նպատակով, օգտագործել է վարկային

միջոցներ և/կամ ՀՀ Կենտրոնական բանկի տարեկան տոկոսադրույքը՝ եթե պատվիրատուի կողմից, ներդրումների նպատակով, օգտագործվել են սեփական կանխիկ միջոցները:

5. Ներդրումային օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքը

Ներդրումային ծրագրի իրականացման ողջ ընթացքում՝ Ներդրումային օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքը պատկանում է Ներդրողին, բացառությամբ՝ Պատվիրատուի կողմից, Ներդրումային ծրագրի շրջանակներում՝ ներդրված գույքի: Ներդրումային ծրագրի ավարտից հետո՝ Ներդրումային օբյեկտի և դրա բոլոր բաղկացուցիչ մասերի նկատմամբ եղած սեփականության բոլոր իրավունքները փոխանցվում են Պատվիրատուին, իսկ Ներդրումների օբյեկտը համարվում է Ներդրողի անառարկելի սեփականությունը՝ եթե պահպանված են Պայմանագրի պայմանները:

6. Պայմանագրի գործողության ժամկետը, դադարեցումը և ավարտը.

6.1. Պայմանագրի դադարեցումը և/կամ ավարտը - Ներդրումային ծրագրի դադարեցման և/կամ ավարտի հետ՝ նույնական են:

6.2. Ներդրումային ծրագիրը կարող է դադարեցվել ինչպես Կողմերից յուրաքանչյուրի միակողմանի նախաձեռնությամբ, այնպես էլ՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

6.3. Պայմանագրի կողմը իրավունք ունի միակողմանի դադարեցնելու Պայմանագիրը՝ ելնելով հետևյալ հիմքերից.

6.3.1. Մյուս Կողմը, Ներդրումային ծրագրի իրականացման շրջանակներում, թույլ է տվել բազմակի այնպիսի խախտումներ և/կամ Ներդրումային ծրագրի չափորոշիչներից այնպիսի շեղումներ, որոնք էականորեն վտանգում են Ներդրումային ծրագրի արդյունավետությունը և/կամ իրագործումը;

6.3.2. Մյուս Կողմը, Ներդրումային ծրագրի շրջանակներում, սեփական պարտավորությունները կատարում է ոչ պատշաճ կերպով, ինչն էականորեն վտանգում է Ներդրումային ծրագրի ներկա և/կամ ապագա արդյունավետությունը և/կամ՝ իրագործումը;

6.3.3. Սեփական նախախաձեռնությամբ, եթե ի հայտ են եկել այնպիսի էական պատճառներ և հանգամանքներ, որոնք տնտեսապես անիմաստ, կամ՝ ֆիզիկապես անհնարին են դարձնում Ներդրումային ծրագրի հետագա իրագործումը;

6.3.4. Օրենսդրության փոփոխությունների, Պետական մարմինների կողմից ընդունված այնպիսի որոշումների պատճառով, որոնք անհնարին են դարձնում Ներդրումային ծրագրի հետագա իրագործումը, և/կամ՝ էականորեն վտանգում են դրա արդյունավետությունը;

6.3.5. Կողմերի կամքից և գործողությունների անկախ ծագած այնպիսի հանգամանքներից, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրի հետագա կատարումը /Ֆորս – Մաժոր/;

6.4. Պայմանագիրը կարող է դադարեցվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, ցանկացած պատճառով;

6.5. Պայմանագրի վաղաժամկետ դադարեցումը Կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ պետք է լինի պատճառաբանված, ինչի մասին նախաձեռնող Կողմը պարտավոր է պատշաճ կերպով, համաձայն ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգի, ծանուցել մյուս Կողմին;

6.6. Կողմերն ընդունում են, որ Պայմանագրի վաղաժամկետ դադարեցումը ծայրահեղ և ոչ ցանկալի քայլ է և հաստատում են այն, որ Ներդրումային ծրագրի սահմաններում առաջացած անհամաձայնությունները և խախտումները պետք է լուծվեն բանակցությունների, ծանուցումների և նախագուշացումների, ինչպես նաև՝ խախտումների շտկման համար՝ անհրաժեշտ ժամանակի տրամադրման միջոցով, որը, սակայն, էականորեն չպետք է ազդի Ներդրումային ծրագրի՝ արդյունավետության և իրագործման ժամկետների վրա;

6.7. Կողմերն ընդունում են, որ Պայմանագրի վաղաժամկետ դադարեցումը, Պայմանագրի 6.3.1.; 6.3.2; 6.3.3 ենթակետերով նախատեսված հիմքերով, չի կարող տեղի ունենալ առանց Պայմանագրի 6.5 և 6.6 Կետերով նախատեսված գործընթացների նախորդիվ իրականացման;

6.8. Պայմանագրի վաղորոք դադարեցման դեպքում՝ Կողմերն ստորագրում են արձանագրություն, որտեղ նշվում են Կողմերի դիրքորոշումը՝ կապված Պայմանագրի վաղորոք դադարեցման հետ, ինչպես նաև պարզաբանվում են գույքային, իրավաբանական և հաշվապահական փոխհարաբերությունները:

6.9. Ներդրումային ծրագրի ավարտը և Պայմանագրի գործունեության ավարտը.

6.9.1. Ներդրումային ծրագրի իրականացման ավարտը նշանակում է, որ կողմերն ամբողջությամբ կատարել են իրենց պայմանագրային պարտավորությունները միմյանց նկատմամբ:

6.9.2. Ներդրումային ծրագիրը և Պայմանագիրը համարվում են ավարտված այն պահից, երբ ամբողջապես ավարտվել են իրար հաջորդող հետևյալ փուլերը, գործընթացներն ու ժամկետները.

ա/ Ներդրումային փուլը:

բ/ Ծախսաձածկման փուլը;

7. Պայմանագրի գաղտնիությունը. Տվյալների և ինֆորմացիայի պաշտպանությունը.

7.1. Կողմերն ընունում են, որ Ներդրումային ծրագրում, մասնավորապես՝ Պայմանագրում և Բիզնես – պլանում տեղ գտած դրույթները, չափորոշիչներն ու տվյալները կրում են փակ և մասնավոր բնույթ և ենթակա չեն հրապրակման՝ առանց Կողմերի նախնական գրավոր համաձայնությամբ, բացառությամբ՝ ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

7.2. Կողմերը պարտավորվում են, լրացուցիչ արձանագրությամբ, սահմանազատել, թե որ տվյալներն ու Ներդրումային ծրագրին վերաբերվող որ դրույթներն են ենթակա հրապարակման հասարակայնության և/կամ Համայնքի անդամների համար և, որոնք՝ ոչ:

8. Վեճերի լուծման կարգը

Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են Կողմերի բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ վեճերի լուծումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

9. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /Ֆորս-Մաժոր/

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում, առկա իրավիճակն այդպիսին գնահատող Կողմը, 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում, պարտավոր է ծանուցել մյուս կողմին՝ այդ մասին: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

12. Եզրափակիչ դրույթներ

12.1. Պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի կողմից: Պայմանագրին կից բոլոր տիպի հավելվածները, այդ թվում և Ներդրումային ծրագրի Բիզնես պլանը՝ դրա անբաժանելի մասն են:

12.2. Պայմանագրում նշված դրույթներն իրագործելիս և ծագող վեճերը լուծելիս՝ կողմերն առաջնորդվում են ՀՀ օրենսդրությամբ:

12.3. Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

13. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

.....

Պայմանագրի ուղեցույց

Սույն պայմանագիրն ունի տիպային բնույթ և կարող է լրացվել նոր դրույթներով՝ կախված Ներդրումային ծրագրի առանձնահատկություններից և կողմերի պայմանավորվածություններից, իսկ որոշ դրույթներ՝ կարող են հանվել:

Սակայն, Ներդրումային պայմանագիրը չի կարող փոփոխվել մի քանի հիմնարար և Պայմանագրի էությունը կազմող մասերով:

ա/ Ներդրումային պայմանագրի հիմքում դրված է այն գաղափարը, ներդրումների օբյեկտը գտնվում է գրոյական կամ՝ դրան մոտ գտնվող վիճակում և Ներդրողը պարտավորվում է՝ գրոյական, կամ դրան մոտ մակարդակից – ստեղծել/կայացնել այդ օբյեկտը;

բ/ Ներդրողը կատարում է այնպիսի ներդրումներ, որոնց արդյունքում հնարավոր կդառնա պատվիրակման ենթակա ծառայության իրականացումը, կամ՝ ավելի որակյալ և մատչելի տրամադրումը՝ Համայնքի տարածքում;

զ/ Ներդրողը գումարներ է ներդնում՝ դրանք, պատվիրակվող ծառայության միջոցով ստացվող եկամուտների միջոցով, վերադարձնելու և իր համար ընդունելի մակարդակի շահույթ ստանալու նպատակով:

դ/ Ներդրումային ծրագիրն անժամկետ չէ և ունի ավարտ, ինչպես նաև՝ Ներդրումային ծրագրի շրջանակներում, Ներդրողի կողմից տրամադրվող պատվիրակված ծառայությունները:

Համայնքն ամեն կերպ պետք է օժանդակի Ներդրողին՝ առավել արդյունավետ իրագործելու Ներդրումային ծրագիրը: Սակայն եթե Ներդրումային ծրագրում առկա հաշվարկները սխալ, կամ՝ անիրատես են եղել, որոնց պատճառով, նույնիսկ ծախսաձածկման փուլի արդյունքով, Ներդրողը չի կարողացել վերադարձնել իր ներդրումները, ապա Համայնքը կարող է ընդառաջ գնալ Ներդրողին և երկարացնել վերջինիս կողմից պատվիրակված ծառայության տրամադրման ժամկետը՝ այդ մասին կնքելով լրացուցիչ պայմանագիր:

Սակայն, այդ գործընթացը չի կարող անվերջ լինել և պետք է սահմանափակվի Ներդրումային ծրագրի ընդհանուր ժամկետի 25 /քսանհինգ/ տոկոս ժամկետին հավասար լրացուցիչ ժամկետով: Այս սահմանափակման առկայությունը բացատրվում է նրանով, որ ներդրումների օբյեկտի տեխնիկական և մաշվածության ցուցանիշները կարող են վատանալ և Համայնքը, որպես սեփականություն, կստանա ոչ արդյունավետ ակտիվ:

Համայնքը կարող է մասնակցել Ներդրումային ծրագրին՝ օրինակ, Ներդրողին վարձակալությամբ տարածք, կամ՝ հողակտոր տրամադրելու միջոցով, ընդ որում՝ Տարածքի վարձակալության վճարը կարող է սահմանվել արտոնյալ սակագնով, կամ՝ ընդհանրապես չգանձվել:

Համայնքը, Ներդրումային ծրագրում, կարող է նաև մասնակցություն ունենալ սեփական ֆինանսական միջոցներով: Սակայն այդ դեպքում Պայմանագրում պետք է ավելացվեն համապատասխան դրույթներ /հնարավոր է նաև Պայմանագրի անվանման փոփոխություն՝ այն վերավանելով “Համատեղ ներդրումների իրականացման պայմանագիր”/, իսկ Ներդրումային պայմանագրի հիմնարար գաղափարներն ու մոտեցումները՝ հանձինս վերը նշված ա/-ից՝ դ/ կետերի - պահպանվում են:

Եթե Ներդրողը, Ներդրումային ծրագրի շրջանակներում, ներդրումների մի մասը կատարում է գույքով և/կամ սարքավորումներով, ապա նա պետք է պարտավոր լինի, մինչև Ներդրումային ծրագրի սկիզբը և՛ Պայմանագրի ստորագրումը - Պատվիրատուին ներկայացնել դրանց նկատմամբ սեփականության իր իրավունքները և սարքավորումների տեխնիկական վիճակն ու տեխնիկական հատկանիշները հաստատող՝ փաստաթղթերի բնօրինակները, ինչպես նաև՝ Ներդրումային ծրագրի շրջանակներում, Ներդրողի կողմից ներդրվող սարքավորումների և նշանակալի գույքի անկախ գնահատման փաստաթղթերի բնօրինակները:

Այդ դեպքում՝ գնահատող կազմակերպությունը պետք է կամ համաձայնեցվի Պատվիրատուի հետ, կամ՝ պետք է ընդունելի լինի Պատվիրատուի կողմից: Գնահատումը պետք է արված լինի ոչ վաղ, քան՝ Ներդրումային ծրագրի սկսելուց՝ երկու տարի առաջ: Հակառակ դեպքում՝ անհրաժեշտ է իրականացնել դրանց նոր գնահատում:

Ներդրողը իրավունք ունի գնահատման ծախսերը ներառել Ներդրումային ծրագրի իրականացման իր ծախսերի մեջ: Միաժամանակ, Պատվիրատուն իրավունք ունի պահանջելու, որպեսզի գնահատման ծախսերը միայն մասամբ ներառվեն Ներդրումային ծրագրի ծախսերի մեջ, եթե գնահատման ծախսերն ուղնացված են, կամ՝ ավելին են, քան շուկայական միջինը:

Այդ ամենի մասին՝ Պայմանագրում պետք է ավելացնել համապատասխան լրացուցիչ դրույթներ:

Բոլոր փաստաթղթերի պատճենները կցվում են Պայմանագրին, իսկ բնօրինակները, համապատասխան Ակտով, փոխանցվում են Պատվիրատուին: Եթե Ներդրումային ծրագրի դադարեցման արդյունքում, Ներդրողը պահպանում է սեփականության իրավունքը, ապա Ներդրումային օբյեկտին վերաբերվող և Պատվիրատուին համապատասխան Ակտով հանձնված փաստաթղթերի բոլոր բնօրինակները ենթակա վերադարձման Ներդրողին – Ներդրումային ծրագրի պաշտոնապես դադարեցումից հետո՝ օրինակ, տասն աշխատանքային օրվա ընթացքում:

Ներդրումային պայմանագրի կարևորագույն մասն են համարվում ֆինանսային երաշխիքներն ապահովող մեխանիզմներին վերաբերվող դրույթները: Անհրաժեշտ է միշտ պահպանել Պայմանագրի այդ դրույթները՝ անպատասխանատու, կամ՝ մասնակի վճարունակ գործընկերներից խուսափելու նպատակով, ինչպես նաև, հնարավորության դեպքում՝ ավելացնել երաշխիքների ապահովման և ստուգման նոր մեխանիզմներ և դրույթներ:

Բիզնես – պլանը, որպես կանոն, ներկայացվում է Ներդրողի կողմից: Պատվիրատուն պարտավոր է մանրամասն վերլուծելու այն՝ Ներդրումային ծրագրի արդյունավետության և այլ չափորոշիչների գնահատման նպատակով: Պատվիրատուն կարող է սեփական կարծիքը, ուղղումները, լրացումները, դիտողություններն ու չափանիշներն առաջարկել Բիզնես – պլանի համար: Բիզնես – պլանի վերջնական տարբերակը հաստատվում է Կողմերի քննարկման արդյունքում, որի չափանիշները դրվում են Պայմանագրի հիմքում:

Բիզնես – պլան կարող է կազմել և առաջարկել նաև Համայնքը, սեփական նախաձեռնությամբ և, Ներդրող գտնելու նպատակով:

Կողմերին խորհուրդ է տրվում՝ ստորագրությամբ վավերացնել Պայմանագրի և դրա հավելվածների, ինչպես նաև՝ Բիզնես – պլանի բոլոր էջերը:

Կարևորագույն խնդիր է, որպեսզի Համայնքը և Ներդրողն ամբողջությամբ վերադարձնեն իրենց ներդրումները, ինչի մասին, Պայմանագրում կան համապատասխան դրույթներ, սակայն կարելի է նաև՝ ավելացնել նորերը:

Վճռականորեն խորհուրդ չի տրվում, որ Համայնքը, Պայմանագրով, ներդրումների վերադարձելիության ֆինանսա-գույքային երաշխիքներ տա Ներդրողին:

Հավելված 7. Ներդրումային պայմանագիր սեփականության իրավունքի փոխանցման պարտավորությամբ

“ _____ / համայնքի անվանումը/ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ
/Ներդրումային ծրագրի ամբողջական անվանումը/ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ”

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՓՈՒՍԱՆՑՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ

Ք. _____ 20 թ.

_____, այսուհետև Պատվիրատու կամ՝ Կողմ 1, կամ՝ Համայնք, ի դեմս

_____/ պաշտոն, Անուն, Ազգանուն/, որը գործում է _____ հիման վրա, մի կողմից, և _____ (այսուհետև Ներդրող, կամ՝ Կողմ 2), ի դեմս _____ / պաշտոն, Անուն,

Ազգանուն /, որը գործում է _____ հիման վրա, մյուս կողմից (այսուհետև՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրում առկա հասկացությունները.

Ներդրող. Անհատ ձեռներեց, կամ՝ իրավաբանական անձ, որը, սեփական միջոցներով իրականացնում է ներդրումներ և ֆինանսավորում է ներդրումային ծրագիրը՝ Համայնքի տարածքում և/կամ Համայնքի հետ կապ ունեցող այլ տարածքներում:

Պատվիրատու. Համայնքը՝ հանձինս իր ղեկավար մարմնի, ղեկավարի, կամ՝ լիազորված ֆիզիկական կամ իրավաբանական անձի:

Ներդրումային ծրագիր. Միջոցառումների և ներդրումների ամբողջական համակարգ, որը կարող է իրականացվել ինչպես գրոյական կետից, այնպես էլ՝ գործառական գործունեությունից դուրս գտնվող և/կամ գործառական գործունեություն չիրականացնող ակտիվի /ակտիվների/ հիման վրա և, որի ավարտման արդյունքում՝ իրականացվում է Ներդրումային ծրագրով նախատեսված ծառայության տրամադրումը Համայնքի բնակիչներին՝ Ներդրողի Կողմից, Համայնքի համաձայնությամբ և Ներդրումային ծրագրի շրջանակներում և չափորոշիչներով: Ներդրումային ծրագիրը ներառում է Բիզնես – պլանը և Պայմանագիրը:

Բիզնես – պլան. Ներդրումային ծրագրի շրջանակներում և դրա իրականացման նպատակով կազմված, պարտադիր կատարման ենթակա՝ Ներդրողի գործողությունների և ֆինանսական հոսքերի հստակ քայլային և ժամանակացույցային փաստաթուղթ, որը հաստատվում է Կողմերի կողմից և դրվում է ներդրումային գործընթացի հիմքում:

Ներդրումային ծրագրի Ներդրումային հատված /այսուհետև՝ Ներդրումային փուլ/. Ներդրողի կողմից՝ Պայմանագրով, Բիզնես – Պլանով նախատեսված ֆինանսական ներդրումների ամբողջական իրականացման ժամանակահատվածը, որի արդյունքում հնարավոր է դառնում ծառայության մատուցումը Համայնքի բնակիչներին:

Ներդրումային ծրագրի ծախսաձածկման փուլ /այսուհետև՝ Ծախսաձածկման փուլ/. Ներդրումային հատվածի ավարտից հետո՝ Պայմանագրով և Բիզնես – պլանով նախատեսված այն ժամանակահատվածը, որը տրվում է Ներդրողին՝ Ներդրումային ծրագրի շրջանակներում արված սեփական ներդրումները վերադարձնելու և շահույթ ապահովելու համար:

Ներդրումային օբյեկտ. Այն ակտիվը, որի կայացման համար և որի մեջ՝ Ներդրողը կատարում է իր ներդրումները - հետագայում դրական արդյունք ստանալու նպատակով - ֆինանսական հոսքերի տեսքով: Պայմանագրով և Բիզնես – Պլանով՝ Ներդրումային օբյեկտ է հանդիսանում _____ /օբյեկտի նշագրիտ անվանումը և գործառական նկարագրությունը/,

_____ համայնքի տարածքում:

Ներդրումային օբյեկտի կառավարում. Ներդրումային ծրագրի Ծախսաձածկային հատվածի ընթացքում՝ Ներդրումային օբյեկտի գործառական գործունեության և դրա հետևանքով առաջացած ֆինանսական մուտքերի կառավարման փուլը:

Ներդրողին պատվիրակվող ծառայություն /այսուհետև՝ Պատվիրակվող ծառայություն/. Համայնքի կողմից, Ներդրումային ծրագրի շրջանակներում, Ներդրողին տրված պատվերն է՝ Համայնքի տարածքում, Ներդրումային օբյեկտի գործառույթների միջոցով, Ծախսաձածկման փուլում,

Ներդրումային ծրագրով սահմանված ժամկետներում, տրամադրելու Համայնքի իրավասության տակ գտվող կոնկրետ ծառայությունը:

Պատվիրակվող ծառայության դիմաց գանձվող վճար /այսուհետ՝ Վճար/. Վճար, որի չափը կամ՝ հաշվարկման և/կամ փոփոխման մեխանիզմը՝ հաստատվում է ներդրումային ծրագրի սահմաններում և հիմք է հանդիսանում Կողմերի միջև, Ներդրումային ծրագրի շրջանակներում, ֆինանսական հաշվարկների և փոխհարաբերությունների համար:

Ներդրումային ծրագրի ավարտ. Պայմանագրով և Բիզնես – պլանով նախատեսված բոլոր գործառնությունների ավարտը: Իր մեջ ամբողջապես ներառում է Ներդրումային փուլի և Ծախսաձածկման փուլի ավարտը, ինչպես նաև՝ Ներդրումային օբյեկտի՝ Համայնքին սեփականության իրավունքով և անհատույց կերպով փոխանցման ամբողջական գործընթացի ավարտը:

2. Պայմանագրի Առարկան

2.1. Պայմանագրի առարկա է հանդիսանում ներդրումային գործունեությունը, որն իրականացվում է Համայնքի վարչական տարածքում և/կամ Համայնքի վարչական տարածքի հետ կապ ունեցող այլ տարածքներում, Ներդրումային ծրագրի շրջանակներում և, որի նպատակն է՝ Համայնքի կողմից հանրային ծառայությունների ավելի ամբողջական և/կամ ավելի արդյունավետ տրամադրման կազմակերպումը՝ Ներդրողի միջոցների հաշվին և Ներդրողի միջոցով:

2.2. Ներդրումային _____ էրկայացնում է
_____ /ներդրումային
ծրագրի անվանումը, ճշգրիտ նկարագրությունը/,

որի անբաժանելի մասն են կազմում սույն Պայմանագիրը և կից Բիզնես – պլանը , համաձայն որոնց՝ Ներդրողը, Ներդրումային ծրագրի շրջանակներում, գրոյական փուլից, իրականացնում է _____ /չափը/ դրամի կապիտալ նպատակային ներդրումներ՝ _____ /համայնքի անվանումը/ համայնքի տարածքում, _____ /ժամկետը/ ժամկետում, Պայմանագրի, Բիզնես - պլանի շրջանակներում և Պայմանագրում նշված պայմանների և Բիզնես – պլանում նշված չափորոշիչների համաձայն: Կողմերը պարտավորվում են համատեղ ջանքերով ապահովել Ներդրումային ծրագրի լիարժեք իրականացումը՝ համաձայն Պայմանագրի պայմանների և Բիզնես – պլանով նախատեսված չափորոշիչների:

2.3. Համաձայն Պայմանագրի՝ Ներդրումային ծրագրի Ներդրումային փուլի ավարտից հետո, Ներդրողն իրավունք է ստանում _____ /ժամկետը/ տարի ժամկետով, անհատույց հիմունքներով, կառավարել Ներդրումային օբյեկտը, բնակչությանը տրամադրել իրեն պատվիրակած՝ _____ /ծառայության անվանումը/ ծառայությունը, դրա դիմաց գանձել Վճար՝ Պայմանագրով հաստատված չափով և կարգով:

3. Կողմերի պարտավորությունները և իրավունքները

3.1. Պատվիրատուն պարտավորվում է.

3.1.1. Ներդրողին տրամադրել՝ բաց, ամբողջական և իրական տեղեկատվություն՝ Ներդրումային ծրագրի քննարկման և իրականացման բոլոր փուլերում՝ Ներդրողին հետաքրքրող բոլոր հարցերի վերաբերյալ:

3.1.2. Իրեն հայտնի՝ ռիսկերի, խոչընդոտների և արգելքների մասին, որոնք կարող են խանգարել Ներդրումային ծրագրի իրագործմանը, կամ՝ իջեցնել դրա արդյունավետությունը, նախօրոք, և/կամ այդ մասին իրեն հայտնի դառնալու պահից՝ զգուշացնել և տեղեկացնել Ներդրողին:

3.1.3. Ներդրումային ծրագրի շրջանակներում՝ ամեն կերպ աջակցել Ներդրողին Ներդրումային ծրագրի՝ պատշաճ մակարդակով իրագործման համար:

3.1.4. Ներդրողին, վարձակալական հիմունքներով, Ներդրումային ծրագրի իրականացման շրջանակներում, տրամադրել _____ ք.մ. հողատարածք /տարածք/ _____ տարի ժամկետով, ամսական՝ _____ դրամ ք.մ. դիմաց՝ սակագնով: Հողամասի կադաստրային կոդը՝ _____ /տարածքի կադաստրային կոդը _____/:

3.1.5. Իրականացնել՝ Ներդրումային ծրագրի շրջանակներում և Համայնքի իրավասությանը վերաբերվող՝ բոլոր փաստաթղթերի արագ և պատշաճ պատրաստումը և ձևակերպումը:

3.1.6. Հինգ աշխատանքային օրվա ընթացքում, գրավոր կերպով, պատասխանել Ներդրողի բոլոր գրություններին, առաջարկություններին, բողոքներին և նախագգուշացումներին:

3.1.7. Անշեղորեն պահպանել Ներդրումային ծրագրի պայմաններն ու չափորոշիչները:

3.1.8. Ներդրումային փուլի ավարտից հետո, առավելագույնս մեկամսյա ժամկետում, գրավոր կերպով ընդունել Ներդրողի կողմից կատարած աշխատանքները և արձանագրել Ներդրման օբյեկտի պատրաստի վիճակը՝ Ներդրողի կողմից Պատվիրակված ծառայությունը տրամադրելու համար, կամ՝ հիմնավորված կերպով մերժել Ներդրումների օբյեկտի ընդունումը – Ներդրողին մանրամասն և գրավոր կերպով ներկայացնելով բոլոր առարկություններն ու մերժման պատճառները:

3.1.9. Ներդրումային ծրագրի Ներդրման փուլի ավարտից և կատարված աշխատանքների ընդունումից հետո՝ Ներդրողի կառավարմանը հանձնել՝ Պատվիրակվող ծառայության մատուցման բոլոր իրավունքները Համայնքի տարածքում, Պայմանագրում նշված պայմաններով:

3.2. Պատվիրատուն իրավունք ունի.

3.2.1. Ներդրողից ստանալ՝ բաց, ամբողջական և իրական տեղեկատվություն՝ Ներդրումային ծրագրի վերաբերյալ՝ դրա քննարկման և իրականացման բոլոր փուլերում, իրեն հետաքրքրող բոլոր հարցերի վերաբերյալ:

3.2.2. Վերահսկելու Ներդրողի կողմից իրականացվող քայլերի համապատասխանությունը՝ Ներդրումային ծրագրին:

3.2.3. Ներկայացնելու առաջարկներ, դիտողություններ, կատարելու նախագգուշացումներ և ծանուցումներ, եթե Ներդրումային ծրագրի իրականացումը, Ներդրողի գործունեության կամ անգործության, ինչպես նաև այլ հանգամանքների պատճառով՝ սկսել է էականորեն շեղվել իր չափորոշիչներից - առանց կողմերի նախնական գրավոր համաձայնության:

3.2.4. Կանգնեցնելու Ներդրումային ծրագրի իրագործումը, եթե Ներդրողի կողմից, շարունակական կերպով սկսել են խախտվել Ներդրումային ծրագրի պայմանները և չափորոշիչները, իսկ նախագգուշացումների արդյունքում՝ շեղումներն ու խախտումները չեն շտկվել:

3.3. Ներդրողը պարտավորվում է.

3.3.1. Պատվիրատուին տրամադրել բաց, ամբողջական և իրական տեղեկատվություն՝ Ներդրումային ծրագրի քննարկման և իրականացման բոլոր փուլերում, Պատվիրատուին հետաքրքրող բոլոր հարցերի վերաբերյալ:

3.3.2. Իրեն հայտնի՝ ռիսկերի, խոչընդոտների և արգելքների մասին, որոնք կարող են խանգարել Ներդրումային ծրագրի իրագործմանը, կամ՝ իջեցնել դրա արդյունավետությունը - նախօրոք, և/կամ այդ մասին իրեն հայտնի դառնալու պահից՝ զգուշացնել և տեղեկացնել Պատվիրատուին:

3.3.3. Ներդրումային ծրագրի շրջանակներում՝ ամեն կերպ աջակցել Պատվիրատուին՝ Ներդրումային ծրագրի պատշաճ մակարդակով իրագործման համար:

3.3.4. Ներդրումային ծրագրի Ներդրումային փուլում, _____ ժամկետում, իրականացնել _____ դրամի ֆինանսական ներդրումներ՝ Ներդրումային օբյեկտում:

3.3.5. Ներդրումային ծրագրի սկսման պահից՝ _____ ժամկետում, Ներդրումային ծրագրի պայմանների և չափորոշիչների պահպանմամբ, ամբողջապես ավարտել Ներդրումային փուլը և, Ներդրումների օբյեկտը՝ Պատվիրակվող ծառայության լիարժեք տրամադրման համար պատրաստի, որակյալ և ամբողջական վիճակում՝ ներկայացնել Պատվիրատուին – Ներդրումային փուլի արդյունքում կատարված աշխատանքների ընդունման նպատակով:

3.3.6. Անշեղորեն պահպանել Ներդրումային ծրագրի շրջանակներում, Կողմերի կողմից հաստատված պայմաններն ու չափորոշիչները:

3.3.7. Հինգ աշխատանքային օրերի ընթացքում՝ գրավոր կերպով, պատասխանել Պատվիրատուի բոլոր գրություններին, առաջարկություններին, բողոքներին և նախագուշացումներին:

3.3.8. Ներդրումային օբյեկտի կայացումն ապահովել՝ Պայմանագրում նշված չափորոշիչներով և ժամկետներում, աշխատանքները կատարել բարձր որակով և առանց գործառական և ֆունկցիոնալ շեղումների:

3.3.9. Ներդրումային ծրագրի Ծախսաձևով սահմանված փուլում՝ Համայնքի և Համայնքի հետ առնչվող բնակելի վայրերի և տարածքների բնակչությանը մատուցել որակյալ և մատչելի ծառայություններ՝ Վճարի դրույքաչափի պահպանմամբ, առանց թաքնված և լրացուցիչ վճարների գանձման:

3.3.10. Ներդրումային ծրագրի ավարտից հետո՝ երեք ամսյա ժամկետում, անհատույց կերպով, լիարժեք սարքին և գործառական տեխնիկական վիճակում, Համայնքին փոխանցել Ներդրումային օբյեկտն ամբողջությամբ՝ ներառյալ բոլոր ուղղակի և անուղղակի ենթակառուցվածքները և բոլոր այն ակտիվները, որոնք ընդգրկված են եղել Ներդրումային ծրագրում:

3.4. Ներդրողն իրավունք ունի.

3.4.1. Պատվիրատուից ստանալու բաց, ամբողջական և իրական տեղեկատվություն՝ Ներդրումային ծրագրի վերաբերյալ՝ դրա քննարկման և իրականացման բոլոր փուլերում, իրեն հետաքրքրող բոլոր հարցերի վերաբերյալ:

3.4.2. Ներկայացնելու առաջարկներ, դիտողություններ, կատարելու նախագուշացումներ և ծանուցումներ, եթե Պատվիրատուի գործունեության և/կամ անգործության, կամ այլ հանգամանքների պատճառով՝ Ներդրումային ծրագրի իրականացումը սկսել է էականորեն շեղվել իր չափորոշիչներից - առանց կողմերի նախնական գրավոր համաձայնության:

3.4.3. Կանգնեցնելու Ներդրումային ծրագրի իրականացումը, եթե Պատվիրատուի կողմից, շարունակական կերպով սկսել են խախտվել Ներդրումային ծրագրի պայմանները և չափորոշիչները, իսկ նախագուշացումների արդյունքում՝ Պատվիրատուի կողմից թույլ տրված շեղումներն ու խախտումները չեն շտկվել:

3.5. Կողմերը, Ներդրումային ծրագրի սահմաններում և պայմաններով՝ պարտավորվում են իրականացնել հետևյալ ներդրումները.

3.5.1. Պատվիրատուի ներդրումները.

ա/ Կանխիկ ֆինանսական միջոցներ և բանկային երաշխիքային գործիքներ. _____ դրամ /կանխիկ գումարի, կամ՝ երաշխիքային պարտավորությունների չափը/;

բ/ Գույք և այլ ակտիվներ. _____ /գույքի թվարկումը, մանրամասն նկարագրումը, հատկանիշների բացահայտումը, շուկայական արժեքի նշումը/:

գ/ Ծառայություններ տրամադրելու և/կամ ապահովելու պարտավորություններ _____ /պարտավորությունների մանրամասն նկարագրությունը և նպատակի շարադրումը/:

3.5.2. Ներդրողի ներդրումները.

ա/ Կանխիկ ֆինանսական միջոցներ և բանկային երաշխիքային գործիքներ. _____ դրամ /կանխիկ գումարի, կամ՝ երաշխիքային պարտավորությունների չափը/;

բ/ Գույք և այլ ակտիվներ. _____ /գույքի թվարկումը, մանրամասն նկարագրումը, հատկանիշների բացահայտումը, շուկայական արժեքի նշումը/:

զ/ Ծառայություններ տրամադրելու և/կամ ապահովելու պարտավորություններ
/պարտավորությունների մանրամասն նկարագրությունը և
նպատակի շարադրումը/:

3.6. Կողմերի ներդրումները, Ներդրումային ծրագրի շրջանակներում, վերադարձվում են միաժամանակ, համաձայն Ծախսաձածկման փուլի ժամանակացույցի և ունեն հավասար կարևորություն՝ այդ թվում և դրանց վերադարձելիությանը վերաբերվող հարցերում:

4. **Ներդրողի վճարունակությունը հավաստող երաշխիքները.**

4.1. Ներդրումային ծրագիրն սկսելուց առաջ Կողմերը բացում են բանկային համատեղ և նպատակային հաշվեհամար /այսուհետև՝ Համատեղ հաշվեհամար/, որտեղից ֆինանսական գործառնությունները կարող են իրականացվել միայն կողմերի համաձայնությամբ և Կողմերի լիազորված անձանց համատեղ հրահանգի դեպքում: Համատեղ հաշվեհամարը Կողմերը չեն կարող օգտագործել Ներդրումային ծրագրին չվերաբերվող՝ այլ գործարձառնությունների իրականացման համար:

4.1. Ներդրողը, Ներդրումային ծրագիրն սկսելուց առնվազն երկու շաբաթ առաջ, պարտավոր է Ներդրումային փուլի համար անհրաժեշտ գումարների առնվազն 25 /քսանհինգ/ տոկոսը՝ _____ դրամ՝ կանխիկ դրամական միջոցների տեսքով, կենտրոնացնել Համատեղ հաշվեհամարում:

4.2. Ներդրողն իրավունք ունի, իր հայեցողությամբ, Պայմանագրի 4.1. կետում նշված կանխիկ գումարների փոխարեն, Պատվիրատուին ներկայացնելու ՀՀ տարածքում գործող բանկի կողմից տրված, կամ՝ հաստատված, Ներդրումային ծրագրի Ներդրումային փուլի ժամկետից ոչ պակաս ժամկետում գործող՝ բանկային ֆինանսական երաշխավորություն:

4.3. Պայմանագիրը ստորագրելու փաստով Կողմերը հաստատում են, որ Համատեղ հաշվեհամարը բացված է և ունի հետևյալ տվյալները.

_____/Հաշվեհամարը/
4.4. Գտնվելով բանկային Համատեղ հաշվեհամարի վրա՝ ֆինանսական միջոցները չեն դադարում լինել Ներդրողի սեփականությունը և այնտեղ գտնվող մնացորդն ամբողջությամբ՝ ներդրողին է փոխանցվում Ներդրումային ծրագրի դադարեցման և/կամ Ներդրումային փուլի ավարտից հետո, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4.5. Ծախսաձածկման փուլում, Պատվիրակված ծառայության դիմաց գանձվող բոլոր վճարները ուղղվում են Համատեղ հաշվեհամար, որտեղից ներդրողը կատարում է բոլոր գործառնական ծախսերը, ինչպես նաև՝ անարգել կերպով, սեփական հայեցողությամբ, տնօրինում է ընթացիկ ծախսերի և եկամուտների, ամսվա կտրվածքով առաջացած՝ դրական տարբերության 70 /յոթանասուն/ տոկոսը:

4.6. Ներդրումային ծրագրի ավարտից հետո՝ Ներդրողը, անարգել կերպով, սեփական հայեցողությամբ, տնօրինում է Համատեղ հաշվեհամարում գտնվող և իր սեփականությունը հանդիսացող ֆինանսական միջոցները: Ներդրումային ծրագրի ավարտից հետո, 30 /երեսուն/ աշխատանքային օրվա ընթացքում, Համատեղ հաշվեհամարը պետք է փակվի՝ Կողմերի կողմից:

4.7. Կողմերն ընդունում են, որ Ներդրումային ծրագրի իրականացման շրջանակներում՝ բոլոր ծախսերի և եկամուտների տարանցիկ կենտրոնացումը մեկ միասնական հաշվեհամարի վրա՝ ավելի երաշխավորված և հաստատուն կդարձնի Ներդրումային ծրագրի իրագործումը, ինչպես նաև՝

հետագայում կհեշտացնի Ներդրումային ծրագրի արդյունավետության և Կողմերի միջև եղած ֆինանսական փոխհարաբերությունների հաշվարկը:

5. **Պատվիրակվող ծառայությունը և Վճարի դրույքաչափը.**

5.1. Ներդրումային ծրագրի շրջանակներում, Համայնքի կողմից՝ Ներդրողին պատվիրակվող ծառայություն է հանդիսանում՝

_____ /ծառայության անվանումը/.

5.2. Պատվիրակվող ծառայության դիմաց գանձվող Վճարի դրույքաչափը, Պայմանագիրը ստորագրելու պահին, կազմում է՝ _____ /Վճարի միավորը և նորման/ դրամ, որը դրված է Ներդրումային ծրագրի հաշվարկային հիմքում:

5.3. Պատվիրակվող ծառայության դիմաց գանձվող Վճարի դրույքաչափը կարող է փոփոխվել՝ ազգային դրամական միավորի գնողունակության անկման դեպքում, սակայն չի կարող լինել ավելին, քան հետևյալ հարաբերակցությունը.

Տոկոսային Գործակիցը Հիմա = Տոկոսային Գործակիցին ապագայում, որտեղ՝

Տոկոսային գործակիցը = Պատվիրակվող ծառայության մեկ միավորի դիմաց գանձվող Վճարը՝ բաժանած Օրենսդրորեն սահմանված նվազագույն աշխատավարձին, իսկ՝

Տոկոսային Գործակիցը Հիմա = Պատվիրակվող ծառայության վերջին 3 /երեք/ տարիներին, մեկ միավորի համար գործող Վճարի՝ միջին թվաբանականին:

Եթե Համայնքի տարածքում, մինչև այդ, չի տրամադրվել Պատվիրակվող ծառայությունը, ապա հաշվարկների հիմքում դրվող Վճարի ներկա դրույքաչափը որոշում է՝ Պատվիրատուին աշխարհագրորեն մոտ գտնվող, կամ՝ Պատվիրատուի գտնվելու Մարզի՝ ցանկացած 5 համայնքներում գործող Վճարի դրույքաչափերի միջինացմամբ, որտեղ բնակչությանը տրամադրվում է այդ /պատվիրակման ենթակա/ ծառայությունը:

5.4. Արգելվում է լրացուցիչ և/կամ թաքնված վճարների գանձումը՝ Պատվիրակված ծառայության մատուցման, կամ դրա հետ ուղղակիորեն կամ անուղղակիորեն փոխկապակցված ծառայությունների մատուցման՝ դիմաց:

6. **Պայմանագրի ժամկետները, Ներդրողի կողմից՝ Ներդրումային օբյեկտի կայացումը, կառավարումը և փոխանցումը Պատվիրատուին.**

6.1. Ներդրումային ծրագրի իրականացման ժամկետը, ներառյալ Ներդրումային և Ծախսաձածկման փուլերը, սահմանվում է _____ տարի և _____ ամիս: Ներդրումային ծրագրի սկիզբ է համարվում Պայմանագրի ստորագրման օրը, իսկ ավարտ՝ _____ թ. _____ /ամիս, ամսաթիվ/:

6.2. Ներդրումային ծրագրի Ներդրումային փուլի սկիզբ է համարվում Պայմանագրի ստորագրման օրը, իսկ ավարտ է համարվում՝ Պատվիրատուի կողմից, Ներդրումային օբյեկտի պատրաստ լինելու հետ կապված և կատարված աշխատանքների ընդունման ակտի ստորագրման օրը: Ծախսաձածկման փուլի սկիզբ է համարվում Ներդրումային փուլի ավարտի օրվան հաջորդող օրը:

6.3. Ներդրողը, Ծախսաձածկման փուլի ընթացքում, Ներդրումային օբյեկտի գործառնական գործունեության միջոցով /և միանձնյա կերպով/, Հայմայնքի տարածքում իրականացնում է իրեն Պատվիրակված ծառայության որակյալ տրամադրումը՝ Պայմանագրում նշված պայմաններով:

6.4. Եթե/ Ներդրումային ծրագիրը բաղկացած է առանձին և ինքնուրույն գործառնական հատկանիշներ ունեցող մասերից, որոնք, Ներդրումային ծրագրի շրջանակներում, ունեն սեփական ներքին՝ ներդրումային և ծախսաձածկման փուլեր, ինչպես նաև՝ իրականացման տարբեր ժամկետներ, /ապա/ Ներդրումային ծրագրի Ծախսաձածկման փուլի ավարտ է համարվում սույն կետում նշված՝

առանձին և ինքնուրույն գործառնական հատկանիշներ ունեցող մասերից՝ վերջինի ծախսաձևով փուլի ավարտը, Ներդրումային ծրագրի շրջանակներում:

Ներդրումային ծրագրի առանձին և ինքնուրույն գործառնական հատկանիշներ ունեցող մասերի Ներդրումային փուլերի սկսման միջև եղած ժամկետային տարբերությունները չեն կարող լինել ավելին, քան 1 /մեկ/ տարին:

6.5. Ներդրումային ծրագրի ժամկետների փոփոխությունը, ինչպես նաև նոր ժամկետների սահմանումը՝ տեղի է ունենում Կողմերի համաձայնությամբ, Պայմանագրին կից Պայմանագրի անբաժանելի մասը համարվող՝ լրացուցիչ համաձայնագրերի ստորագրման տեսքով:

6.6. Ներդրումային ծրագրի ժամկետը չի կարող փոփոխվել ավելի, քան Ներդրումային ծրագրի, մասնավորապես՝ Պայմանագրում արձանագրված ընդհանուր ժամկետի 25 /քսանհինգ/ տոկոսը, նույնիսկ եթե Ներդրողն այդ ընթացքում չի վերադարձրել իր ներդրումները:

6.7. Ներդրումային ծրագրի ավարտից հետո՝ 3 /երեք/ ամսյա ժամկետում՝ Ներդրողն, անհատույց կերպով, անվերադարձ, սեփականության իրավունքով, Պատվիրակված ծառայության հետագա լիարժեք տրամադրման համար անհրաժեշտ և սարքին տեխնիկական և ֆունկցիոնալ վիճակում՝ Համայնքին է փոխանցում Ներդրումային օբյեկտն ամբողջությամբ, ներառյալ՝ բոլոր ուղղակի և անուղղակի ենթակառուցվածքները և բոլոր այն ակտիվները, որոնք ընդգրկված են եղել Ներդրումային ծրագրում:

Ներդրումային ծրագրի ավարտից հետո Ներդրումների օբյեկտն անցնում է Համայնքի կառավարման տակ և վերջնականապես դառնում նրա սեփականությունը: Փոխանցումը կատարվում է համապատասխան արձանագրությամբ՝ հաշվապահական, գույքագրման և փոխանցման ակտերի միջոցով, օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.8. Ներդրողը պարտավորվում է՝ Ներդրման օբյեկտը Պատվիրատուին փոխանցելուց մեկ տարի առաջ ընկած ժամանակահատվածում, անվճար ուսուցանել և աշխատանքային խորը պրակտիկա ապահովել՝ Պատվիրատուի կողմից լիազորված անձանց:

6.9. Ներդրողի կողմից՝ ներդրումային օբյեկտի ամբողջական և վերջնական կերպով Պատվիրատուին փոխանցման օրվանից հետո ընկած 4 /չորս/- ամսյա ժամանակահատվածում Պատվիրատուին պարտավոր է Ներդրողին տրամադրել փաստաթուղթ այն մասին, որ ինքը չունի Ներդրումային օբյեկտի տեխնիկական և գործառնական վիճակին վերաբերվող էական դիտողություններ, կամ՝ գրավոր կերպով, Ներդրողին ծանուցել այդ մասին: Էական են համարվում Ներդրումային օբյեկտին և դրա գործունեությանը վերաբերվող այն դիտողությունները, որոնք վերաբերվում են Ներդրումային օբյեկտի արդյունավետության ավելի քան 10 /տաս/ տոկոսի կորստին՝ սկսած Պատվիրատուի կողմից դրա՝ որպես սեփականություն ընդունման օրվանից:

6.10. Պատվիրատուի էական դիտողությունների հետ համաձայնվելու դեպքում՝ Ներդրողը, սեփական միջոցներով՝ շտկում է թերությունները: Միաժամանակ, թերությունների և Պատվիրատուի էական դիտողությունների առարկա հանդիսացող խնդիրների շտկման վրա, Ներդրողի կողմից, չի կարող ծախսվել ավելին, քան Ներդրումային ծրագրի իրականացման ընթացքում, Ներդրողի կողմից կատարված ծախսերի /կապիտալ և գործառնական/ և ստացված եկամուտների դրական տարբերության 50 /հիսուն/ տոկոսը, իսկ նշված չափանիշների բացասական հաշվեկշռի դեպքում՝ Ներդրողը չի կարող լրացուցիչ ծախսել ներդրումային ծրագրի շրջանակներում կատարված ծախսերի /կապիտալ և գործառնական/ 5 /հինգ/ տոկոսը գերազանցող գումար:

7. Ներդրումային օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքը

7.1. Ներդրումային ծրագրի իրականացման ողջ ընթացքում՝ Ներդրումային օբյեկտի նկատմամբ սեփականության իրավունքը պատկանում է Ներդրողին: Ներդրումային ծրագրի ավարտից հետո՝ Ներդրումային օբյեկտի նկատմամբ եղած սեփականության բոլոր իրավունքները փոխանցվում են Պատվիրատուին:

7.1. Ներդրողը պահպանում է սեփականության իրավունքը Ներդրումների օբյեկտի նկատմամբ, եթե Ներդրումային ծրագրի շրջանակներում, ցանկացած պատճառով, չի սկսվել Ծախսաձևով փուլը: Եթե Ծախսաձևով փուլն ընդհատվել է Կողմերից մեկի նախաձեռնությամբ, իսկ մյուս կողմն այդ նախաձեռնության մեջ տեսնում է իր շահերի ոտնահարում, կամ՝ շահադիտական

դիտավորություն, ապա Ներդրումների օբյեկտի հետագա սեփականության հարցը որոշվում է դատական գործընթացի իրականացման արդյունքում:

7.2. Եթե Պատվիրատուի կողմից՝ Ներդրումային ծրագրի Ներդրումային փուլի շրջանակներում ներդրված գույքի շուկայական արժեքը գերազանցում Ներդրումային ծրագրի Ներդրումային փուլով նախատեսված և փաստացի իրականացված ներդրումների ծավալի 10 /տաս/ տոկոսը, ապա Ներդրողը պետք է գնի Պատվիրատուի կողմից, Ներդրումային ծրագրի շրջանակներում, ներդրված գույքը՝ դրա շուկայական արժեքով: Այս դեպքում, Ներդրումային ծրագրի ավարտից հետո, 1 /մեկ/ տարվա ընթացքում, Պատվիրատուն, Ներդրողի նման ցանկության դեպքում, պարտավոր է վաճառել գույքը՝ Ներդրողին:

7.3. Եթե հողատարածքը, որի վրա տեղակայված է Ներդրումների օբյեկտը, Ներդրումային ծրագրի ավարտից հետո շարունակում է պատկանել Պատվիրատուին, ապա Ներդրողն առաջնային իրավունք ունի՝ Ներդրումային ծրագրի ավարտից հետո, 1 /մեկ/ տարվա ընթացքում, կադաստրային արժեքով, գնելու այն, իսկ Պատվիրատուն, Ներդրողի նման ցանկության դեպքում, պարտավոր է վաճառել հողատարածքը՝ Ներդրողին: Այս դեպքում՝ հողատարածքի արժեքի մեջ չեն կարող մտնել այն շինություններն ու գույքը, որոնք մինչև Ներդրումային ծրագրի սկիզբը հանդիսացել են Պատվիրատուի սեփականությունը:

8. Պայմանագրի գործողության ժամկետը, դադարեցումը և ավարտը.

8.1. Պայմանագրի դադարեցումը և/կամ ավարտը - Ներդրումային ծրագրի դադարեցման և/կամ ավարտի հետ՝ նույնական են:

8.2. Ներդրումային ծրագիրը կարող է դադարեցվել ինչպես Կողմերից յուրաքանչյուրի միակողմանի նախաձեռնությամբ, այնպես էլ՝ Կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

8.3. Պայմանագրի կողմը իրավունք ունի միակողմանի դադարեցնելու Պայմանագիրը՝ ելնելով հետևյալ հիմքերից.

8.3.1. Մյուս Կողմը, Ներդրումային ծրագրի իրականացման շրջանակներում, թույլ է տվել բազմակի այնպիսի խախտումներ և/կամ Ներդրումային ծրագրի չափորոշիչներից այնպիսի շեղումներ, որոնք էականորեն վտանգում են Ներդրումային ծրագրի արդյունավետությունը և/կամ իրագործումը;

8.3.2. Մյուս Կողմը, Ներդրումային ծրագրի շրջանակներում, սեփական պարտավորությունները կատարում է ոչ պատշաճ կերպով, ինչն էականորեն վտանգում է Ներդրումային ծրագրի ներկա և/կամ ապագա արդյունավետությունը և/կամ՝ իրագործումը;

8.3.3. Սեփական նախախաձեռնությամբ, եթե ի հայտ են եկել այնպիսի էական պատճառներ և հանգամանքներ, որոնք տնտեսապես անիմաստ, կամ՝ ֆիզիկապես անհնարին են դարձնում Ներդրումային ծրագրի հետագա իրագործումը:

8.3.4. Օրենսդրության փոփոխությունների, Պետական մարմինների կողմից ընդունված այնպիսի որոշումների պատճառով, որոնք անհնարին են դարձնում Ներդրումային ծրագրի հետագա իրագործումը, և/կամ՝ էականորեն վտանգում են դրա արդյունավետությունը:

8.3.5. Կողմերի կամքից և գործողությունների անկախ ծագած այնպիսի հանգամանքներից, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրի հետագա կատարումը /Ֆորս – Մաժոր/:

8.4. Պայմանագիրը կարող է դադարեցվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, ցանկացած պատճառով:

8.5. Պայմանագրի վաղաժամկետ դադարեցումը Կողմերից մեկի նախաձեռնությամբ՝ պետք է լինի պատճառաբանված, ինչի մասին նախաձեռնող Կողմը պարտավոր է պատշաճ կերպով, համաձայն ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգի, ծանուցել մյուս Կողմին:

8.6. Կողմերն ընդունում են, որ Պայմանագրի վաղաժամկետ դադարեցումը ծայրահեղ և ոչ ցանկալի քայլ է և հաստատում են այն, որ Ներդրումային ծրագրի սահմաններում առաջացած անհամաձայնությունները և խախտումները պետք է լուծվեն բանակցությունների, ծանուցումների և նախագրուշացումների, ինչպես նաև՝ խախտումների շտկման համար՝ անհրաժեշտ ժամանակի տրամադրման միջոցով, որը, սակայն, էականորեն չպետք է ազդի Ներդրումային ծրագրի՝ արդյունավետության և իրագործման ժամկետների վրա:

8.7. Կողմերն ընդունում են, որ Պայմանագրի վաղաժամկետ դադարեցումը, Պայմանագրի 8.3.1.; 8.3.2; 8.3.3 ենթակետերով նախատեսված հիմքերով, չի կարող տեղի ունենալ առանց Պայմանագրի 8.5 և 8.6 Կետերով նախատեսված գործընթացների նախորդիվ իրականացման:

8.8. Պայմանագրի վաղօրոք դադարեցման դեպքում՝ Կողմերն ստորագրում են արձանագրություն, որտեղ նշվում են Կողմերի դիրքորոշումը՝ կապված Պայմանագրի վաղօրոք դադարեցման հետ, ինչպես նաև պարզաբանվում են գույքային, իրավաբանական և հաշվապահական փոխհարաբերությունները:

8.9. Ներդրումային ծրագրի ավարտը և Պայմանագրի գործունեության ավարտը.

8.9.1. Ներդրումային ծրագրի իրականացման ավարտը նշանակում է, որ կողմերն ամբողջությամբ կատարել են իրենց պայմանագրային պարտավորությունները միմյանց նկատմամբ:

8.9.2. Ներդրումային ծրագիրը և Պայմանագիրը համարվում են ավարտված այն պահից, երբ ամբողջապես ավարտվել են իրար հաջորդող հետևյալ փուլերը, գործընթացներն ու ժամկետները.

ա/ Ներդրումային փուլը:

բ/ Ծախսաձածկման փուլը:

գ/ Ներդրողի կողմից՝ ներդրումային օբյեկտի ամբողջական և վերջնական փոխանցումը Պատվիրատուին;

դ/ Ներդրողի կողմից՝ ներդրումային օբյեկտի ամբողջական և վերջնական կերպով Պատվիրատուին փոխանցման օրվանից հետո ընկած 4 /չորս/ - ամսյա ժամանակահատվածը, որի ընթացքում, Պատվիրատուի կողմից չեն ստացվել Ներդրումային օբյեկտի տեխնիկական և գործառնական վիճակին վերաբերվող էական դիտողություններ, կամ՝ Պատվիրատուն ստորագրել է փաստաթուղթ՝ դրանց բացակայության մասին:

Եթե 4 /չորս/ - ամսյա ժամկետում Պատվիրատուն չի տրամադրում նման փաստաթուղթ, կամ՝ էական համարվող գրավոր դիտողություններ Ներդրողին, ապա Պայմանագրի գործունեությունը և Ներդրումային ծրագիրը համարվում են պաշտոնապես ավարտված:

9. Պայմանագրի գաղտնիությունը. Տվյալների և ինֆորմացիայի պաշտպանությունը.

9.1. Կողմերն ընունում են, որ Ներդրումային ծրագրում, մասնավորապես՝ Պայմանագրում և Բիզնես – պլանում տեղ գտած դրույթները, չափորոշիչներն ու տվյալները կրում են փակ և մասնավոր բնույթ և ենթակա չեն հրապարակման՝ առանց Կողմերի նախնական գրավոր համաձայնությամբ, բացաճությամբ՝ ՀՀ գործող օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

9.2. Կողմերը պարտավորվում են, լրացուցիչ արձանագրությամբ, սահմանազատել, թե որ տվյալներն ու Ներդրումային ծրագրին վերաբերվող որ դրույթներն են ենթակա հրապարակման հասարակայնության և/կամ Համայնքի անդամների համար և, որոնք՝ ոչ:

10. Վեճերի լուծման կարգը

Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են Կողմերի բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ վեճերի լուծումն իրականացվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով:

11. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /Ֆորս-Մաժոր/

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում, առկա իրավիճակն այդպիսին գնահատող Կողմը, 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում, պարտավոր է ծանուցել մյուս կողմին՝ այդ մասին: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

12. Եզրափակիչ դրույթներ

12.1. Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումները օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված Կողմերի կողմից: Սույն պայմանագրին կից բոլոր տիպի հավելվածները, այդ թվում և Ներդրումային ծրագրի Բիզնես պլանը՝ դրա անբաժանելի մասն են:

12.2. Պայմանագրում նշված դրույթներն իրագործելիս և ծագող վեճերը լուծելիս՝ կողմերն առաջնորդվում են ՀՀ օրենսդրությամբ:

12.3. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

13. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

.....

Սույն պայմանագիրն ունի տիպային բնույթ և կարող է լրացվել նոր դրույթներով՝ կախված Ներդրումային ծրագրի առանձնահատկություններից և կողմերի պայմանավորվածություններից, իսկ որոշ դրույթներ՝ կարող են հանվել:

Սակայն, Ներդրումային պայմանագիրը չի կարող փոփոխվել մի քանի հիմնարար և Պայմանագրի էությունը կազմող մասերով:

ա/ Ներդրումային պայմանագրի հիմքում դրված է այն գաղափարը, ներդրումների օբյեկտը գտնվում է գրոյական, կամ՝ դրան մոտ վիճակում և Ներդրողը պարտավորվում է գրոյական, կամ՝ դրան մոտ մակարդակից - ստեղծել այդ օբյեկտը;

բ/ Ներդրողը կատարում է այնպիսի ներդրումներ, որոնց արդյունքում հնարավոր կդառնա պատվիրակման ենթակա ծառայության իրականացումը, կամ՝ ավելի որակյալ և մատչելի տրամադրումը՝ Համայնքի տարածքում;

գ/ Ներդրողը գումարներ է ներդնում՝ դրանք, պատվիրակվող ծառայության միջոցով ստացվող եկամուտների միջոցով, վերադարձնելու և իր համար ընդունելի մակարդակի շահույթ ստանալու նպատակով:

դ/ Ներդրումային ծրագիրն անժամկետ չէ և ունի ավարտ, ինչպես նաև՝ Ներդրումային ծրագրի շրջանակներում, Ներդրողի կողմից տրամադրվող պատվիրակված ծառայությունները:

ե/ Քանի որ Համայնքը, Ներդրողի կողմից՝ Ներդրումային փուլի ողջ գործառույթները բարեխղճորեն կատարելու դեպքում, Ներդրողին փաստացիորեն ապահովում է ֆինանսական հոսք՝ Պատվիրակվող ծառայության դիմաց գանձվող վճարների տեսքով, իսկ Ներդրողը, համաձայն ներդրումային ծրագրի, ոչ միայն վերադարձնում է իր ներդրումները, այլ նաև ստանում է շահույթ, ապա Ներդրումային օբյեկտը, Ներդրումային ծրագրի ավարտից հետո, դառնում է Համայնքի սեփականությունը:

Համայնքն ամեն կերպ պետք է օժանդակի Ներդրողին՝ առավել արդյունավետ իրագործելու Ներդրումային ծրագիրը: Սակայն եթե Ներդրումային ծրագրում առկա հաշվարկները սխալ, կամ՝ անիրատես են եղել, որոնց պատճառով, նույնիսկ ծախսաձեռնարկում փուլի արդյունքով, Ներդրողը չի կարողացել վերադարձնել իր ներդրումները, ապա Համայնքը կարող է ընդառայել գնալ Ներդրողին և երկարացնել վերջինիս կողմից պատվիրակված ծառայության տրամադրման ժամկետը՝ այդ մասին կնքելով լրացուցիչ պայմանագիր: Այդ դեպքում՝ ներդրումային օբյեկտի, որպես սեփականություն, Համայնքին փոխանցման ժամկետները նույնպես հետաձգվում են:

Սակայն, այդ գործընթացը չի կարող անվերջ լինել և պետք է սահմանափակվի Ներդրումային ծրագրի ընդհանուր ժամկետի 25 /քսանհինգ/ տոկոս ժամկետին հավասար լրացուցիչ ժամկետով: Այս սահմանափակման առկայությունը բացատրվում է նրանով, որ ներդրումների օբյեկտի տեխնիկական և մաշվածության ցուցանիշները կարող են վատանալ և Համայնքը, որպես սեփականություն, կստանա ոչ արդյունավետ ակտիվ: Մյուս կողմից էլ՝ պատվիրակվող ծառայության տրամադրումը նույն կազմակերպությանը /եթե նույնիսկ դա Ներդրողն է/, Ներդրումային ծրագրի ավարտից հետո՝ խախտում է շուկայական տնտեսության՝ մրցակցային և արդյունավետության սկզբունքները: Այս դեպքում, անկախ Ներդրողի կողմից ներդրումների վերադարձի փաստացի մակարդակից, Ներդրումային օբյեկտը դառնում է Համայնքի սեփականությունը:

Համայնքը կարող է մասնակցել Ներդրումային ծրագրին՝ օրինակ, Ներդրողին վարձակալությամբ տարածք, կամ՝ հողակտոր տրամադրելու միջոցով, ընդ որում՝ Տարածքի վարձակալության վճարը կարող է սահմանվել արտոնյալ սակագնով, կամ՝ ընդհանրապես չգանձվել:

Համայնքը, Ներդրումային ծրագրում, կարող է նաև մասնակցություն ունենալ սեփական ֆինանսական միջոցներով: Սակայն այդ դեպքում Պայմանագրում պետք է ավելացվեն համապատասխան դրույթներ /հնարավոր է նաև Պայմանագրի անվանման փոփոխություն՝ այն վերավանդելով՝ «Համատեղ ներդրումների իրականացման պայմանագիր», իսկ Ներդրումային պայմանագրի հիմնարար գաղափարներն ու մոտեցումները՝ հանձինս վերը նշված ա/-ից՝ ե/ կետերի - պահպանվում են:

Եթե Ներդրումային օբյեկտը կայացվում է Ներդրողին պատկանող տարածքի վրա, ապա Ներդրողը պետք է պարտավորվի՝ Ներդրումային ծրագրի ավարտից հետո, իրեն պատկանող այն տարածքը, որի վրա տեղակայված են Ներդրումային օբյեկտը և դրա ենթակառուցվածքները՝ կադաստրային արժեքով վաճառել Համայնքին:

Եթե Ներդրողը, Ներդրումային ծրագրի շրջանակներում, ներդրումների մի մասը կատարում է գույքով և/կամ սարքավորումներով, ապա նա պետք է պարտավոր լինի, մինչև Ներդրումային ծրագրի սկիզբը և՝ Պայմանագրի ստորագրումը - Պատվիրատուին ներկայացնել դրանց նկատմամբ սեփականության իր իրավունքները և սարքավորումների տեխնիկական վիճակն ու տեխնիկական հատկանիշները հաստատող՝ փաստաթղթերի բնօրինակները, ինչպես նաև՝ Ներդրումային ծրագրի շրջանակներում, Ներդրողի կողմից ներդրվող սարքավորումների և նշանակալի գույքի անկախ գնահատման փաստաթղթերի բնօրինակները:

Այդ դեպքում՝ գնահատող կազմակերպությունը պետք է կամ համաձայնեցվի Պատվիրատուի հետ, կամ՝ պետք է ընդունելի լինի Պատվիրատուի կողմից: Գնահատումը պետք է արված լինի ոչ վաղ, քան՝ Ներդրումային ծրագրի սկսելուց՝ երկու տարի առաջ: Հակառակ դեպքում՝ անհրաժեշտ է իրականացնել դրանց նոր գնահատում:

Ներդրողը իրավունք ունի գնահատման ծախսերը ներառել Ներդրումային ծրագրի իրականացման իր ծախսերի մեջ: Միաժամանակ, Պատվիրատուն իրավունք ունի պահանջելու, որպեսզի գնահատման ծախսերը միայն մասամբ ներառվեն Ներդրումային ծրագրի ծախսերի մեջ, եթե գնահատման ծախսերն ուժնացված են, կամ՝ ավելին են, քան շուկայական միջինը:

Այդ ամենի մասին՝ Պայմանագրում պետք է ավելացնել համապատասխան լրացուցիչ դրույթներ:

Բոլոր փաստաթղթերի պատճենները կցվում են Պայմանագրին, իսկ բնօրինակները, համապատասխան Ակտով, փոխանցվում են Պատվիրատուին: Եթե Ներդրումային ծրագրի դադարեցման արդյունքում, Ներդրողը պահպանում է սեփականության իրավունքը, ապա Ներդրումային օբյեկտին վերաբերվող և Պատվիրատուին համապատասխան Ակտով հանձնված փաստաթղթերի բոլոր բնօրինակները ենթակա վերադարձման Ներդրողին – Ներդրումային ծրագրի պաշտոնապես դադարեցումից հետո՝ օրինակ, տասն աշխատանքային օրվա ընթացքում:

Ներդրումային պայմանագրի կարևորագույն մասն են համարվում ֆինանսային երաշխիքներն ապահովող մեխանիզմներին վերաբերվող դրույթները: Անհրաժեշտ է միշտ պահպանել Պայմանագրի այդ դրույթները՝ անպատասխանատու, կամ՝ մասնակի վճարունակ գործընկերներից խուսափելու նպատակով, ինչպես նաև, հնարավորության դեպքում՝ ավելացնել երաշխիքների ապահովման և ստուգման նոր մեխանիզմներ և դրույթներ:

Բիզնես – պլանը, որպես կանոն, ներկայացվում է Ներդրողի կողմից: Պատվիրատուն պարտավոր է մանրամասն վերլուծելու այն՝ Ներդրումային ծրագրի արդյունավետության և այլ չափորոշիչների գնահատման նպատակով: Պատվիրատուն կարող է սեփական կարծիքը, ուղղումները, լրացումները, դիտողություններն ու չափանիշներն առաջարկել Բիզնես – պլանի համար: Բիզնես – պլանի վերջնական տարբերակը հաստատվում է Կողմերի քննարկման արդյունքում, որի չափանիշները դրվում են Պայմանագրի հիմքում:

Բիզնես – պլան կարող է կազմել և առաջարկել նաև Համայնքը, սեփական նախաձեռնությամբ և, Ներդրող գտնելու նպատակով:

Կողմերին խորհուրդ է տրվում՝ ստորագրությամբ վավերացնել Պայմանագրի և դրա հավելվածների, ինչպես նաև՝ Բիզնես – պլանի բոլոր էջերը:

Կարևորագույն խնդիր է, որպեսզի Համայնքը և Ներդրողն ամբողջությամբ վերադարձնեն իրենց ներդրումները, ինչի մասին, Պայմանագրում կան համապատասխան դրույթներ, սակայն կարելի է նաև՝ ավելացնել նորերը:

Վճռականորեն խորհուրդ չի տրվում, որ Համայնքը, Պայմանագրով, ներդրումների վերադարձելիության ֆինանսա-գույքային երաշխիքներ տա Ներդրողին: